# ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԺԱ ՏԱՐԻ, ԹԻՒ 95, ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 2013

# 98-ԱՄԵԱԿ



# ԶՈՅԳ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՄԻԱՏԵՂ ԿՈՉ

## ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՌՆԱԳՐԱՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՒԱԾՆԵՐԸ

2015 թւականին հայ ժողովուրդը, Հայաստանի Հանրապետութեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Սփիւռքի ամբողջ տարածքում, նշելու է Օսմանեան Թուրքիոյ կողմից կազմակերպւած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը:

1915 թւականի ցեղասպանութեանը զոհ գնացին աւելի քան մէկ ու կէս միլիոն հայեր, աքսորի ճանապարհի վրայ վերապրած հայերն ապաստան գտան Արեւելեան Հայաստանի՝ ներկայիս Հայաստանի Հանրապետութեան, Սիրիայի, Լիբանանի եւ այլ արաբական երկրների մէջ ու աշխարհի տարբեր պետութիւնների մօտ:

Անհատական սեփական կալւածների կորստի կողքին, Օսմանեան կայսրութեան ենթակայ Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, ինչպէս նաեւ Թուրքիոյ այլ շրջաններում ապրող հայութիւնը կորցրեց նաեւ եկեղեցապատկան կալւածներ՝ եկեղեցիներ, սրբատեղիներ, վանքեր, կրօնական, կրթական եւ բարեսիրական կենտրոններ, մշակութային ու կրօնական մեծ արժէք ունեցող իրեր՝ խաչքարեր, ձեռագրեր, սրբանկարներ, եւ այլն: Ցեղասպանութեան ենթարկւած ու բռնի միջոցներով տեղահանւած հայ ժողովրդին պատկանող բոլոր կալւածները սեփականացւեցին Թուրքիոյ պետութեան կողմից «լքեալ կալւածներ» անւան տակ:

Ցեղասպանութիւնից 98 տարի յետոյ, Թուրքիոյ ներկայ պետութիւնը, որպէս իրաւայաջորդը Օսմանեան կայսրութեան, ոչ միայն մերժում է ընդունել իր նախորդների ծրագրած ու գործադրած ցեղասպանութիւնը, այլ շարունակում է իր հակահայ քաղաքականութիւնը՝ բռնագրաււած պահելով հայ ժողովրդի կրօնական ու մշակութային արժէքները, եկեղեցապատկան կալւածներն ու իրերը:

Հետեւաբար, կոչ ենք ուղղում Թուրքիոյ պետութեանը եւ պահանջում ենք.-

1) Հայոց Ցեղասպանութեան ճանաչում.

2) Ամբողջական հատուցում հայ ժողովրդի կրած կորուստների եւ մարդկային ու ազգային բռնագրաււած իրաւունքների.

3) Հայկական եկեղեցիների, վանքերի եւ եկեղեցապատկան կալւածների եւ հոգեւոր ու մշակութային արժէք ներկայացնող իրերի անյապաղ վերադարձը հայ ժողովրդին, որպէս նրանց իրաւատէրը:

Աղօթքով յիշելով Հայոց Ցեղասպանութեան զոհերին՝ դատապարտում ենք ամէն բռնարարք՝ ուղղւած աստւածապարգեւ կեանքի, մարդու արժանապատւութեան եւ մարդկութեան խաղաղ համակեցութեան դէմ, որովհետեւ «Աստւած խռովութեան Աստւած չէ, այլ՝ խաղաղութեան» (Ա.Կր 14.33), եւ մարդկանց հրաւիրում է սիրոյ, համերաշխութեան եւ գործակցութեան:

Երախտագիտութեամբ յիշում ենք այն բոլոր ժողովուրդներին ու պետութիւններին, որոնք Ցեղասպանութեան օրերին ապաստան տւեցին տեղահանւած հայերին եւ հոգատարութիւն ու եղբայրական սէր ցուցաբերեցին հայրենազրկւած ու տարագրւած հայերի հանդէպ:

Հայ ժողովուրդը յաւէտ երախտապարտ է մնալու նաեւ այն բոլոր պետութիւններին, որոնք մարդասիրութեան եւ արդարութեան սկզբունքներով առաջնորդւած՝ դատապարտել են ու պաշտօնապէս ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը:

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին, մեր բոլոր կարելիութիւններն ի գործ ենք դնելու՝ միաւնաբար իրականացնելու հայ ժողովրդի պահանջները՝ յանուն արդարութեան եւ հայութեան իրաւունքների պաշտպանութեան:

² ä ðÆÈ 24, 2013

¶²ð º¶ÆÜ ´.
Î²ÂàÔÆÎàê ²Øº Ü²ÚÜ Ð²Úàò
Ø²Úð ²Âàè, ê. ¾æØÆ²ÌÆÜ

²ð²Ø ².
Î²ÂàÔÆÎàê ØºÌÆ î²ÜÜ ÎÆÈÆÎÆàÚ
²ÜÂÆÈÆ²ê

# ՅՈՅՍ ԱՊԱՇԽԱՐՈՂԱԾ՝ ՔԱՒԻՉ ՅԱՆՑԱՆԱԾ

*«Նա Իր կեանքը տուեց մեր յանցանքները ջնջելու համար
եւ յարութիւն առաւ, որ արդարացնի մեզ»* (*Հռ* 4.25):

Տօնն է Յիսուս Քրիստոսի լուսապայծառ Յարութեան, Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը մարդկութեան փրկութեան յայտարարութիւնն է, տօնն է ազատութեան եւ փրկութեան, տօնն է հաւատի: Մահուան վրայ կեանքի յաղթանակի տօնն է: Նոր լոյսի եւ յոյսի տօնն է: Նոր կեանքի եւ գարնան տօնն է:

Անցնում է մահաշունչ ձմեռը եւ փչում է գարնան կենդանարար շունչը, յարութիւն տալով մեռած բնութեանը:

Նոր Կտակարանը, Պօղոս Առաքեալի բառերով, հռոմէացիներին ուղղած նամակում նկարագրում է թէ ինչպէս Քրիստոս առաջին հերթին «Իր կեանքը տուեց մեր յանցանքները ջնջելու համար»:

Քրիստոս որպէս Զատկւայ գառ մորթուեց: Նա եղաւ ճշմարտապէս «*Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի*»: Նա աշխարհ եկաւ, մարդու պէս եղաւ՝ մարդու հետ լինելու, մարդու համար լինելու: Մարդն իր անհնազանդութեամբ մեղանչեց, արտաքսուեց Դրախտից եւ ընկղմուեց մեղքի տիղմի մէջ: Նա պէտք ունէր մի փրկարարի, մի օժանդակ ձեռքի՝ իրեն ազատելու այդ տիղմից, վեր բարձրացնելու եւ ընդմիշտ փրկելու: Աստուած ամենատարբեր ժամանակներում մարդկանց փրկութեան համար ընտրեց մի ժողովրդի, տուեց օրէնք, ուղարկեց մարգարէներ, բայց ամենագեղեցիկ նուէրն Իր Միածին Որդու ընծայումն էր մարդկանց: Նա որպէս սիրոյ կրակ աշխարհ եկաւ՝ սրբելու եւ մաքրելու մեր սրտերն ու հոգիները, որովհետեւ մեր մեղքերն աւելի ծանր էին քան աւազը ծովի: Նա մահուան մատնուեց, չարչարուեց ու խաչուեց որպէսզի մենք մեր պատիժը չկրենք: Նա մեռաւ որպէսզի մենք թողութիւն ստանանք եւ մեր մեղքերից մաքրուելով կարողանանք Աստծու առաջ կանգնել որպէս անմեղ: Հետեւաբար, Նա Իր աստուածային կեանքը տուեց աշխարհի փրկութեան համար:

Երկրորդ, «*Նա յարութիւն առաւ որ արդարացնի մեզ*»: Սա աստուածային օրհնութիւն եւ պարգեւ է: Պօղոս առաքեալն այստեղ նկարագրում է, որ Աբրահամի օրինակի համաձայն, Աստուած մեզ էլ է արդարացնելու, սակայն միայն ՀԱՒԱՏՈՎ: Պօղոս առաքեալն այստեղ նկատի ունի այն փաստը, որ Աստուած որպէս մեռելներին կենդանացնող Աստուած՝ Իսահակին կեանք տուեց ծեր եւ ամուլ ծնողներից, այնպէս էլ երկու հազար տարի յետոյ, Իր Որդուն՝ Յիսուս Քրիստոսին կեանքի կոչեց մեռելներից: Տակաւին Աստուած կենդանացնում է նաեւ մեզ, որովհետեւ մենք մեռած էինք մեր յանցանքների եւ մեղքերի մէջ: Հետեւաբար, Աբրահամի նման մենք էլ արդար համարուելով կը դառնանք ժառանգորդը Աստծու թագաւորութեան եւ յաւիտենական կեանքի: Քրիստոսը յարութիւն առաւ մեռելներից, որպէսզի մենք կարողանանք արդար համարուել Աստծու առաջ:

Արդարեւ Պօղոս առաքեալն ասում է, որ երկու օրհնութիւնները, պարգեւները՝ թողութիւնն ու արդարութիւնը, ձեռք են բերւում ոչ թէ օրէնքի գործերով, այլ միայն ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՒԱՏԱԼՈՎ: «*Աստուած մեզ էլ է արդար համարելու մեր հաւատի համար, որովհետեւ հաւատում ենք Նրան, որ մեռելներից յարութիւն տուեց Յիսուսին՝ մեր Տիրոջը*» (Հռ 4.23-24): Քրիստոնէական կեանքի, բարոյականի եւ աստուածաբանութեան հիմնաքարն է Քրիստոսի յարութիւնը: Գողգոթայի վրայ Քրիստոսի մահը եւ գերեզմանից Նրա հրաշափառ Յարութիւնը առաքեալների, սուրբերի, քրիստոնէական եկեղեցու հայրերի քարոզչութեան ներշնչիչ աղբիւրն է: Հեթանոսաց առաքեալը հաստատապէս յայտարարում է բոլոր ժամանակների բոլոր սերունդներին. «*Եթէ Քրիստոսը յարութիւն չի առել, իզուր է մեր քարոզչութիւնը, իզուր է նաեւ ձեր հաւատը*» (Ա.Կր 15.14):

***

Քրիստոսի հրաշափառ Յարութեան ամենաջերմ հաւատացողներից մէկն է եղել հայ ժողովուրդը: Չարչարուած, խաչուած, խոցուած իր սրտով հայ ժողովուրդն երբեք չի կորցրել իր յարութեան մասին իր յոյսն ու անքակտելի հաւատը: Իր վէրքերից ու գերեզմանից նա միշտ վերակենդանացել է Քրիստոսի Յարութեան մեծ աւետիսով, նոր կեանքի, նոր գալիքի, նոր գարնան յոյսով եւ երգով:

Մեր ժողովուրդը, դարեր շարունակ չարչարուել ու խաչուել է իր սկզբունքեների, համոզմունքների եւ անժամանցելի սրբութիւնների պահպանման համար: Միշտ սուր եւ զէնք են բարձրացրել մեր երկրի ազատութեան եւ անկախութեան վրայ, մեր ազգային արժանապատուութիւնն են ոտնակոխել, աւերել ու ամայացրել են մեր շէն քաղաքները, ոչնչացրել են նրա մշակութային կոթողներն ու յուշարձանները, բայց երբեք չեն կարողացել նրա հոգու մէջ մարել յարութեան տեսիլքը: Մեր ժողովուրդն անցել է Գեթսեմանի պարտէզից եւ ունեցել է յուսահատութեան պահեր, սակայն խաչն իր ուսին՝ բարձրացել է մինչեւ Գողգոթայ եւ իր արիւնոտ բարձունքից տեսել է իր յարութեան լուսապայծառ ապագան:

Չի մեռնի այն ժողովուրդը, որ տեսիլքներ ունի: Մեր ժողովուրդը տեսիլք ունեցող ժողովուրդ է եւ այդ տեսիլքներից ամենափառաւորն իր փրկութեան եւ ազատութեան տեսիլքն է: Հետեւաբար, այսօր նաեւ մեր ժողովրդի «Զատիկ»-ն ու յարութեան տօնն է: Այո՛, մի երջանիկ օր, մի լուսապայծառ առաւօտ յարեաւ հայ ժողովուրդը եւ իր յարուցեալ Փրկչի պէս քայլեց դէպի անմահութիւն, յարութեան երգն իր շրթներին.

«ՓԱ՜ՌՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ ՏԷՐ...»:

**Քրիստոս Յարեաւ ի մեռելոց:**
**Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:**

Սիրոյ ջերմ ողջունիւ՝

Ս. Զատիկ
2013

ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ՉԱՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

# ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ.-
## *«ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՄՂԻՉ ՈՒԺ ԴԱՌՆԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ»*




Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ եւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի Կենտրոնական Մարմնի նախաձեռնութեամբ Անթիլիասի մայրավանքում 2013 թւականի ապրիլի 6-ին կայացաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նւիրւած համագումար:

Միջին-արեւելեան երկրների մէկօրեայ համագումարի նիւթն էր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի աշխատանքների համադրման եւ գործակցութեան կարելիութիւնները, որին նախագահում էր Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը կարեւորելով խորհրդակցութեան կայացումը՝ նշեց, որ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նւիրւած ծրագրերն ու ձեռնարկներն ամփոփող միջոցառումներ չպէտք է լինեն, այլեւ 2015 թւականին ընդառաջ՝ այնուհետեւ դրանք շարունակւող նախաձեռնութիւններ դառնան: «Կրկնութիւններից եւ խաչաձեւումներից պէտք է խուսափենք: Մեր մօտեցումը պէտք է լինի իրապաշտ եւ գործնական»,- նշել է Արամ Ա Կաթողիկոսը:

Անդրադառնալով Երեւանում կայացած Ցեղասպանութեան 100-ամեակին նւիրւած գիտաժողովին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը յիշեցրել է իր ընդգծած երեք բառերը՝ «Յիշել, յիշեցնել եւ պահանջել»: «Հարիւր տարի շեշտը դրել ենք յիշելու վրայ. մոմ վառեցինք, ոգեկոչման երեկոներ կազմակերպեցինք, գիրք տպեցինք: Այդ բոլորը կարեւոր են, որպէսզի մեր նոր սերունդները մեր նահատակների կտակով եւ ոգով թրծւեն: Սակայն, այդ կէտի վրայ չպէտք է կենտրոնանանք: Անհրաժեշտ է, որ մենք այսուհետեւ շեշտադրենք պահանջատիրութեան եւ հատուցման հարցը»,- ասել է նա:

Արամ Ա Կաթողիկոսի ասութեամբ՝ հայ ժողովրդի իրաւունքների հարցն ամբողջ հայ ժողովրդի հիմնահարցն է: «Հայաստանը պետութիւն է, Սփիւռքը՝ Սփիւռք: Կարող են Հայկական Հարցի առնչութեամբ լինել տարբեր մօտեցումներ: Սակայն, այդ տարբերութիւնների մէջ էլ պէտք է լինեն ներքին ներդաշնակութիւն ու համադրում, մէկ խօսքով՝ պէտք է միակամ գործենք եւ ամուր կերպով կառչած լինենք պահանջատիրութեանը»,- աւելացրել է Արամ Ա Կաթողիկոսը:

Նա նաեւ աւելացրել է, որ Ցեղասպանութիւնն անցեալին պատկանող դէպք չէ. Սփիւռքն այդ Ցեղասպանութեան հետեւանքն է. որոշ իմաստով այդ Ցեղասպանութիւնը շարունակւում է նաեւ այսօր, եւ ա՛յդ գիտակցութեամբ հայկական կառոյցները պէտք է գործեն:

Եզրափակելով իր ելոյթը՝ Կիլիկիոյ Կաթողիկոսը նշել է, որ Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման աշխատանքներն երեք ճանապարհ ունեն՝ պատմական, քաղաքական եւ իրաւական: «Ժամանակն է, որ առանց անտեսելու առաջին երկուսը՝ յստակ առաջնահերթութիւն տանք իրաւական կողմին, եւ այս առումով հսկայական աշխատանք ունենք կատարելու»,- ընդգծել է նա:

Նշելի է, որ սոյն համագումարին մասնակցում էին՝ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգսեանը եւ 100-ամեակի Յանձնախմբի ատենապետ տկն. Արմենուշ Առաքելեանը, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն ու Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը եւ Ատրպատականի Հայոց Թեմի առաջնորդ գերպ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Չիփթճեանը:

# 15-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ



Սպահանի Հայոց Թեմի 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի անդրանիկ նիստը գումարուեց 2013 թւականի ապրիլի 19-ի առաւօտեան՝ նախագահութեամբ Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ մասնակցութեամբ շրջանների պատգամաւորների, հոգեւոր դասի ու Թեմական եւ Կրօնական խորհուրդների:

Սկզբում առաւօտեան ժամը 10-ին նախագահութեամբ առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ հոգեւոր դասի բացման աղօթք մատուցւեց Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, որի աւարտին թեմակալ առաջնորդը յաջողութիւն մաղթելով Ժողովին՝ յորդորեց միասնական կեցւածքով լծւել աշխատանքի, համայնքը պահել առաւել ամուր եւ պայմաններ ստեղծել՝ Թեմի ժողովրդի հոգեւոր ու նիւթական կարիքներին գոհացում տալու համար: Սոյն արարողութեանը ներկայ էին նաեւ Առաջնորդարանի ենթամարմինների անդամները:

Այնուհետեւ Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակը յաւերժացնող Յուշարձանի մօտ տեղի ունեցաւ ծաղկեմատոյց, որից յետոյ, Առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում գումարուեց նորընտիր Պատգամաւորական ժողովի առաջին նիստը:

Նիստը բացւած յայտարարուեց 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի Ընտրական Յանձնախմբի նախագահ պրն. Ղուկաս Ծատուրեանի եւ Թեմական խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանի ողջոյնի խօսքերով: Օրակարգի համաձայն նիստը շարունակւեց Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական ու Կրօնական խորհուրդների եւ Հաշւեքննիչ Մարմնի ընտրութիւններով, հետեւեալ կարգով.



**Պատգամաւորական Ժողովի Դիւան**

Պրն. Վարուժ Մինասեան՝ ատենապետ

Պրն. Մկրտիչ Աւետումեան՝ փոխ-ատենապետ

Տկն. Սեդա Այւազեան՝ ատենադպիր

Տկն. Սքաւլեթ Հայրապետեան՝ ատենադպիր

**Կրօնական Խորհուրդ**

Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեան

Արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան

Պրն. Արշալոյս Խուդավերդեան

Պրն. Գարեգին Մարկոսեան

Պրն. Սաքօ Տէր-Յովհաննիսեան

**Թեմական Խորհուրդ**

Պրն. Նոէլ Մինասեան

Պրն. Վրէժ Ծիրւանեան

Պրն. Վազգէն Թահմազեան

Պրն. Մասիս Հայրապետեան

Տկն. Քառոլին Դիլանչեան

Պրն. Սարօ Դիլանչեան

Դկտ. Վազգէն Մինասեան

**Հաշւեքննիչ Մարմին**

Պրն. Մեսրոպ Դաւթեան

Պրն. Ժորժ Հայրապետեան

Օրդ. Արտեմիս Խաչեան



Ընտրութիւնների աւարտին Պատգամաւորական Ժողովի Դիւանի ատենապետ պրն. Վարուժ Մինասեանը շնորհաւորելով նորընտիր կազմերին՝ ուժ ու կորով մաղթեց նրանց:

Սպահանի Հայոց Թեմի 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի անդրանիկ նիստն աւարտուեց Սրբազան Հօր բարեմաղթանքներով եւ աղօթքով:

*Սպահանի Հայոց Թեմի*
*Պատգամաւորական Ժողովի Դիւան*

## è àôØ ²Ü² òÆ Ðà ¶ º ôàð ² Î ²Ü-¶Æ îÜ² Î ²ÜÜº ðÆ ²Úò ºÈàô ÂÆðÜÀ ê.². ì ²Üø

Երեքշաբթի՝ 2013 թւականի մարտի 5-ին, Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան հրաւէրով միջկրօնական երկխօսութիւնների ծրագրերի ծիրում Ռումանիայից ժամանած Օրթոդոքս եկեղեցու 7 հոգանոց մի խումբ՝ բաղկացած բարձրաստիճան հոգեւորականներից եւ Բուխարեստի Աստուածաբանական Համալսարանի դասախօսներից, ընկերակցութեամբ «Ալմոսթաֆա Ալալամիյէ» խմբակցութեան Սպահանի մասնաճիւղի պատասխանատուների, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին եւ հանդիպում ունեցան Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի հետ: Հանդիպումը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում, որին ներկայ էին նաեւ Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի անդամները:



Առաջնորդ Սրբազան Հայրը ուրախութիւն յայտնելով քրիստոնեայ եղբայրների այցելութեան առթիւ, համապարփակ բացատրութիւն փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի կառոյցի ու իրավիճակի եւ Հայոց Եկեղեցու գործունէութեան վերաբերեալ: Նա բարձր գնահատեց կրօնների երկխօսութեան եւ համերաշխ փոխ-յարաբերութիւնների զարգացման ուղղութեամբ տարւող բոլոր աշխատանքները եւ կարեւոր համարեց պատւիրակութեան առաքելութիւնը, որը կարող է եւրոպական երկրներում եւ զանազան առիթներով ճշմարիտ թարգմանը հանդիսանալ Իրանում կրօնական փոքրամասնութիւնների ու յատկապէս քրիստոնէութեան եւ Հայոց Եկեղեցու ունեցած ազատութիւնների եւ վարչական-եկեղեցական ու կրօնական անկախ գործունէութեան մասին:



Գերշ. Սրբազան Հայրը յիշելով միաստուածեան կրօնների միջեւ Սպահանում տեղի ունեցած համագումարներն ու համատեղ նիստերը, ասաց որ համերաշխութեան եւ խաղաղ համագոյակցութեան այս նմուշը կարող է իրագործելի օրինակ ծառայել ամբողջ աշխարհի համար, եթէ նպատակ ունենանք եղբայրասիրութիւն եւ մարդասիրութիւն տարածել մեր շուրջ:

Պատւիրակութեան խօսնակ-ներկայացուցիչը ներկայացնելով իր ընկերակիցներին, շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար եւ համառօտ կերպով տեղեկութիւններ փոխանցեց Ռումանիայում ծաւալած իրենց աշխատանքների, ինչպէս նաեւ այնտեղ ապրող հայ համայնքի ու Հայոց Եկեղեցու գործունէութեան մասին:

«Ալմոսթաֆա Ալալամիյէ» խմբակցութեան Սպահանի մասնաճիւղի կողմից պատւիրակութեանն ընկերակցող ներկայացուցիչն եւս տեղեկութիւններ հաղորդեց խմբի հնգօրեայ ծրագրերի մասին եւ այն հանդիպումների վերաբերեալ, որ ունեցել են իսլամ կրօնի բարձրաստիճան հոգեւորական օրէնսգէտների հետ: Նա նշեց, որ բոլոր հանդիպումների ընթացքում եւս շեշտուել են փոխյարաբերութիւնների զարգացման անհրաժեշտութիւնն ու դրական կողմերը:

Պատւիրակութեան անդամները, հանդիպումից յետոյ, այցելեցին Ս. Ամենափրկչեան Վանքի «Յովսէփ Արեւմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» անւան թանգարան եւ իրենց տպաւորութիւններն արձանագրեցին թանգարանի բարձրաստիճան հիւրերի մատեանում:

## ՍՊԱՀԱՆԻ 5-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ Ս.Ա. ՎԱՆՔ

Երեքշաբթի՝ 2013 թւականի ապրիլի 30-ի կէսօրին, Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասադզադեգանի կարգադրութեամբ եւ գլխաւորութեամբ, իրանական կնոջ օրւայ առթիւ, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեց 5-րդ շրջանի քաղա-

քապետարանի իգական սեռի ամբողջ աշխատակազմը: Խումբը Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցի այցելելուց յետոյ, Առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում հանդիպեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանին: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնք. Վարուժ Մինասեանը, Նոէլ Մինասեանը, Արշալոյս Խուդավերդեանը, Թեմական Խորհրդի անդամ տկն. Քառոլին Դիլանչեանը եւ Պատգամաւորական Ժողովի Դիւանի անդամ տկն. Սեդիկ Այւազեանը:



Սկզբում առաջնորդ Սրբազան Հայրն այցելութեան առիթով ուրախութեան եւ շնորհակալական խօսքեր յայտնեց քաղաքապետի այս իրայատուկ կարգադրութեան համար: Նա առ ի ծանօթութիւն, պատւիրակութեանը ընդհանուր գծերով բացատրութիւններ փոխանցեց Թեմի եւ Առաջնորդարանի կացութեան եւ գործունէութեան վերաբերեալ:



Գերշ. Սրբազան Հայրը յանուանէ եւ զբաղեցրած իրենց պաշտօնով ու հանգամանքով ներկայացրեց հանդիպմանը ներկայ Առաջնորդարանի ներկայացուցիչներին եւ շեշտելով, որ Հայոց Առաջնորդարանի եւ ազգային այլ հաստատութիւնների պատասխանատու կազմերում ներգրաւած իգական սեռի մեծ թւով ներկայացուցիչների առկայութիւնը ապացոյցն է այն իրողութեան, որ Հայոց Եկեղեցին մեծ համարում ունի հայ կանանց ուժականութեան, կարողութիւնների եւ ընդունակութիւնների վրայ, որով լուրջ դերակատարութիւն եւ բարձր պատասխանատուութեամբ մասնակցութիւն է ապահովում նրանց համար, ովքեր ընտանեկան պարտականութիւնների կողքին լաւապէս վերահասու են լինում իրենց վստահւած ազգային բազմատեսակ աշխատանքներին: Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ կանանց փոխանցեց իր շնորհաւորանքները՝ իրանական կնոջ օրւայ կապակցութեամբ եւ ուժ ու կորով մաղթեց նրանց:

Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասաւզադեգանը շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար, քաղաքապետարանի կին պաշտօնեաների Ս. Ամենափրկչեան Վանք այցելելու կապակցութեամբ ասաց. *«Ցանկացանք կնոջ օրւայ առթիւ իւրայատուկ եւ տպաւորիչ ծրագրի մասնակից դարձնել մեր գործակիցներին, որի պատճառով ընտրեցինք Ս. Ամենափրկչեան Վանքը, համոզւած լինելով, որ այս կենտրոնին առնչւող Նոր Ջուղայի հայ համայնքը երկար դարեր համերաշխութեամբ ապրելով պարսիկ ազգի կողքին՝ լաւագոյն ապացոյց եւ օրինակն է միաստւածեան կրօնների հետեւորդների խաղաղ համակեցութեան եւ հետեւաբար՝ արդիւնաւէտ գործակցութեան»*:

Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանն եւս շնորհաւորանքներ փոխանցեց այցելած պատւիրակութեան անդամներին եւ վստահութիւն յայտնեց, որ քաղաքապետարանում աշխատող բոլոր կանայք ամենայն պատասխանատուութեամբ եւ լրջութեամբ են վերաբերւում իրենց յանձնւած պարտականութիւններին:

Հանդիպման աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը ծաղիկներ նւիրեց կանանց, ովքեր համեստ հիւրասիրութիւնից յետոյ այցելեցին «Խաչատուր Կեսարացի» անւան թանգարան եւ տպաւորւած մեկնեցին Ս.Ա. Վանքից:

# ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ԵՒ Ս. ԶԱՏԿՒԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Շաբաթ, մարտի 30-ի երեկոյեան, Նոր Ջուղայի եկեղեցիներում մատուցելով սուրբ եւ անմահ Պատարագ՝ աւարտուեցին Մեծ Պահոց օրերը, եւ հաւատացեալ ժողովուրդն անցկացնելով պահեցողութեան եւ Արարչին առաւել մօտենալու ժամանակաշրջանը՝ ընդառաջ գնաց Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին:



Շաբաթ՝ մարտի 30-ի երեկոյեան, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը նախագահեց Նոր Ջուղայի Ս. Ներսէս եկեղեցում մատուցած Ս. Պատարագին:

Կիրակի՝ մարտի 31-ի առաւօտեան, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, հրաշափառ Յարութեան տօնի առթիւ Ս. Պատարագ մատուցեց Նոր Ջուղայի եկեղեցիներում: Թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսաւոր թափորով մուտք գործեց Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցի, որտեղ եպիսկոպոսական սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց՝ Փրկչի յաղթական Յարութեան տօնի առթիւ: Արարողութեան երգեցողութեան բաժինը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Ս. Պատարագի ընթացքում Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն իր զատկական ոգեշունչ պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներին, որն ընթերցուեց նաեւ Թեմի միւս եկեղեցիներում՝ պատարագիչ հոգեւորականների միջոցով:

Առաջնորդ Սրբազան Հայրն իր պատգամում անդրադառնալով Քրիստոսի կրած չարչարանքներին, խաչելութեանը, մահուանը եւ յարութեանը, որոնք տեղի ունեցան աշխարհի փրկութեան համար, մէջբերեց Պօղոս առաքեալից խօսք, որտեղ թողութեան եւ արդարութեան ձեռք բերման միջոցն է համարուել Քրիստոսին հաւատալը: Պատգամի մի այլ բաժնում Սրբազան Հայրն ընդգծելով հայ ժողովրդի վերածնունդը, աւելացրեց. «*Չարչարուած, խաչուած եւ խոցուած սրտով հայ ժողովուրդը երբեք չի կորցրել իր յոյսը եւ անքակտելի հաւատը՝ իր յարութեան մասին: Իր վէրքերից, իր գերեզմանից նա միշտ վերակենդանացել է՝ Քրիստոսի Յարութեան մեծ աւետիսով, նոր կեանքի, նոր գալիքի, նոր գարնան յոյսով եւ երգով*»:



Ս. Պատարագի աւարտին Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդն ընդունեց ժողովրդի շնորհաւորանքները:

Յատկանշական է, որ Ծաղկազարդից մինչեւ Ս. Զատիկ տեւող Աւագ Շաբաթուայ ժամանակաշրջանում Նոր Ջուղայի եւ Շահինշահրի եկեղեցիներում կանոնաւոր կերպով տեղի ունեցան բոլոր արարողութիւնները՝ հաւատացեալ ժողովրդի խուռներամ մասնակցութեամբ: Համաձայն նախօրօք յայտարարուած ժամանակացոյցի, գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը հերթաբար նախագահեց Թեմի տարբեր եկեղեցիների արարողութիւններին՝ իր հայրական օրհնանքը փոխանցելով ներկայ ժողովրդին:



Ծաղկազարդ տօնի եւ Աւագ Հինգշաբթի առաւօտեան՝ Քրիստոսի Վերջին Ընթրիքի յիշատակի օրուայ առթիւ մատուցած Ս. Պատարագներին ներկայացան նաեւ Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների աշակերտ-ուհիները՝ իրենց պատասխանատուների ընկերակցութեամբ, ովքեր յատուկ բոյր հաղորդեցին արարողութիւններին:

# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ «ԼՈՒՍԱՀԱՆԳԻՍՏ»



Ս. Յարութեան տօնին յաջորդող Նոր Կիրակի կամ Կրկնազատկի օրը, Փերիա գաւառի Ներքին Խոյգան գիւղի մօտ, բլրի վրայ գտնուող «Լուսահանգիստ» կոչւող սրբավայրում, որտեղ հաւատի համար նահատակւած Գրիգոր անունով մի հաւատացեալ քրիստոնեայի շիրիմի վրայ կառուցւած է փոքրիկ մի մատուռ, ամէն տարի տեղի է ունենում ուխտագնացութիւն եւ Հոգեհանգստեան արարողութիւն: Վերջին տարիներում, որպէսզի ժողովուրդն աւելի շատ հնարաւորութիւն ունենայ մասնակցելու արարողութեանը, յատուկ կարգադրութեամբ այն կատարւում է Կրկնազատկի նախորդ ուրբաթ օրը: Առ այդ, ուրբաթ՝ 2013 թւականի ապրիլի 5-ին, Հոգեհանգստեան արարողութիւն կատարւեց «Լուսահանգիստ»-ում: Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի յայտարարութեամբ, բազմահարիւր ուխտաւորների մասնակցութեամբ կազմակերպւել էր ուխտագնացութիւն, որն իրականացաւ գարնանային պայծառ մի առաւօտ՝ նախորդ գիշերը թեթեւ տեղացած անձրեւից ստեղծւած թարմ եւ մաքուր մթնոլորտում:



Սրբազան գերեզմանի շուրջ, Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի գլխաւորութեամբ կատարւեց Հոգեհանգըստեան արարողութիւն: Ներկայ էին նաեւ արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը, Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի եւ Ն.Ջ. Հայոց Եկեղեցեաց Վարչութեան անդամները:

Հոգշ. Հայր Սուրբը, արարողութեան աւարտին իր քարոզում ուրախութիւն յայտնելով՝ քրիստոնէական հաւատի իբրեւ գեղեցիկ դրսեւորում կատարւած ուխագնացութեան ընձեռնւած առիթի համար, ասաց. ***«Փառք եւ գոհութիւն Ամենակարող Աստծուն, որ մինչեւ այսօր մեր հաւատացեալ ժողովուրդը ջերմեռանդութեամբ կառչած է իր ճշմարիտ հաւատին եւ տակաւին տէրն է իր սրբութիւններին եւ սրբազան արժէքներին»***, ապա իր խօսքն ուղղելով ներկայ ուխտաւորներին, շարունակեց. ***«Պատի՛ւ ձեզ՝ սիրելի՛ հաւատացեալներ, որ պայծառազարդում էք այս սրբավայրը, որը սրբատեղի է դառնում միայն ու միայն ձեր ներկայութեամբ եւ աղօթքների զօրութեամբ: Այս առիթով պարտականութիւն ունեմ Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի անունից ձեր բոլորին շնորհաւորել Զատկւայ տօնի առիթով, նաեւ աղօթել, որ այսօրւայ այստեղ կատարած ձեր ուխտն ընդունելի լինի Աստծու մօտ եւ Նա կատարի ձեր խնդրանքները, փափագներն ու աղօթքները»***:



Հոգշ. Հայր Սուրբն արարողութիւնից յետոյ եղաւ ժողովրդի մօտ եւ աղօթք ու «Պահպանիչ» կարդաց ցանկացող անձանց եւ մանուկների վրայ:

Ուխտագնացութեանը եւ Հոգեհանգստեան արարողութեանը մասնակցած հաւատացեալները հոգշ. Հայր Սուրբի քարոզն ունկնդրելուց, մոմ վառելուց եւ աղօթելուց յետոյ՝ իրենց օրը շարունակեցին բնութեան գրկում: Եղանակն եւս մինչեւ ճաշից յետոյ նրանց նկատմամբ բաեհամբոյր գտնւեց եւ ուխտաւորները, ովքեր հանգրւանել էին Նամակերտ գիւղի նախկին ազգային հիւանդանոցում, Ղարղուն եւ Սնկերտ գիւղերում, նաեւ ազատ բնութեան գրկում՝ վրանների տակ, մեծ բաւարարութիւն ստացան:

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒՄ



Շաբաթ՝ 2013 թուականի ապրիլի 13-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Գէորգ եկեղեցում տեղի ունեցաւ Կիրակնամուտքի ժամերգութիւն: Արարողութեանը նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Ներկայ էին Շահինշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, ազգային իշխանութեան ներկայացուցիչներն ու հաւատացեալ բազմաթիւ հայորդիներ:

Կիրակնամուտքի ժամերգութեան աւարտին, առաջնորդ Սրբազան Հայրն ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի սրբատառ երեք կոնդակները, որոնցով Վեհափառ Հայրապետն աստիճաններ էր շնորհել Թեմի երեք քահանաներին: Արժն. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանն արժանացել էր աւագութեան աստիճանին, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը ծաղկեայ փիլոն օգտագործելու արտօնութիւն էր ստացել, իսկ Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը քահանայական լանջախաչ կրելու իրաւունքին էր արժանացել:



Կոնդակների ընթերցումից եւ աստիճանների շնորհումից յետոյ, Առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական խօսքը փոխանցեց ներկայ ժողովրդին եւ քահանայ հայրերին. նա մատնանշելով Պօղոս առաքեալի խօսքը՝ ուղղած եկեղեցու սպասաւորներին՝ Քրիստոսի օրինակով Աստծուն նւիրուելու իբրեւ կենդանի զոհ, ասաց. «***Աստծու ծառայութեան մէ՛ջ ապրեցէք, որովհետեւ Աստուած ողորմած Աստուած է եւ մեր այդ նւիրումն ընդունելու է իբրեւ հոգեւոր պաշտամունք***»:

Գերշ. Սրբազան Հայրն իր որդիական շնորհակալութիւնը յայտնեց Արամ Ա Կաթողիկոսին՝ իր խնդրանքին ու դիմումին ընդառաջելու եւ Թեմի քահանայ հայրերին աստիճաններ շնորհելու կապակցութեամբ, ապա խօսքն ուղղելով քահանաներին, ասաց. «***Սիրելի՛ քահանայ հայրեր, դուք ձեր աշխատանքի մէջ եղէ՛ք համեստ ու խոնարհ եւ ապրեցէ՛ք Աստծու ծառայութեան մէջ, հետամուտ եղէք միշտ լաւին, բարուն եւ ճշմարիտին: Աստծու ձեզ տւած զանազան շնորհներն օգտագործեցէ՛ք Աստծուն եւ մեր սիրեցեալ ժողովրդին ծառայելու նւիրական ճանապարհին***»:

Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն իր խօսքի աւարտին, իր, ազգային իշխանութեան եւ հոգեւորականաց դասի անունից շնորհաւորեց պատիւ ստացած քահանայ հայրերին, նրանց հարազատներին եւ Թեմի ժողովրդին, նրանց մաղթելով երկար եւ քաջառողջ կեանք:

Արարողութիւնից յետոյ, ներկայ հաւատացեալները մօտեցան նոր աստիճաններ ստացած հոգեւոր հայրերին եւ իրենց շնորհաւորանքներն ու բարեմաղթութիւնները փոխանցեցին նրանց, որից յետոյ եկեղեցու սրահում, որտեղ հաւաքւած էին թեմակալ առաջնորդը, հոգեւորական դասը, Կրօնական Խորհրդի եւ Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան անդամները, նոր աստիճաններ ստացած քահանայ հայրերի անունից Առաջնորդ Սրբազան Հօրը եւ Կրօնական Խորհրդին շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալըստանեանը:

Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան միջոցով եկեղեցու շրջափակում կազմակերպւել էր համեստ հիւրասիրութիւն:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԵԹԱՆ 98-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՊԱՀԱՆՋԱՏԷՐ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ՝ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Ինչպէս նախորդ տարիները, ապրիլ 24-ի նախօրէին Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների աշակերտները, տեսչութիւնները, ուսուցչական կազմերն ու ծնողական խորհուրդները պահանջատիրական կարգախօսների վանկարկումներով ու պաստառներով պատկան դպրոցներից քայլերթ կազմակերպեցին դէպի Ս. Ամենափրկչեան Վանք, որտեղ ներկայութեամբ՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, հոգեւոր հայրերի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ 98-ամեակի Ոգեկոչման Յանձնախմբի անդամների, իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Եղեռնի Բիւրաւոր Նահատակներին:

**Կիրակի՝ ապրիլի 21**



Առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Նոր Ջուղայի Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի սաներն ու պատասխանատուները: Սկզբում թոթովախօս մանուկների շուրթերից հնչեցին ազգային երկու երգեր եւ մէկ արտասանութիւն, իսկ գեղաւեստական կատարումների ընթացքում նրանք վեր բարձրացրած բռունցքներով վանկարկեցին դատապարտող եւ հատուցում պահանջող կարգախօսներ:



Աշակերտական ելոյթից յետոյ, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը ողջունելով պահանջատէր մանուկների ներկայութիւնը Եղեռնի Նահատակների Յուշարձանի մօտ, նրանց յորդորեց չմոռանալ հայ նահատակներին եւ երբէք չլռելով՝ հատուցում պահանջել ցեղասպան Թուրքիայից: Վերջում դպրոցի անունից երկու աշակերտներ ծաղիկներով պատած հատուցում խորհրդանշող գեղեցիկ գերպ տեղադրեցին Յուշարձանի մօտ, իսկ իւրաքանչիւր սան առանձին ծաղիկ մատուցեց նահատակների յիշատակին:



Նոյն օրը, կէսօրին ժամը 12-ին, տեղի ունեցաւ Հայոց Ազգային «Արմէն» Տարրական Համալիրի աշակերտութեան ծաղիկների մատուցումը: Նրանք եւս իրենց պատասխանատուների ընկերակցութեամբ իրենց պահանջատիրական ձայնը միացրեցին համայն հայութեան ձայնին:



Ծրագրի սկզբում աշակերտների ներկայացուցիչները ծաղիկներով զարդարուած մի խորհրդանշական խաչքար տեղադրեցին Յուշարձանի մօտ, որից յետոյ՝

«Խաչքար» բանաստեղծութիւնը ասմունքեց Վիւիանա Միրզայեանը:

Ապա հայերէն լեզւով աշակերտական խօսքն ընթերցեց Լուսիա Մատթէոսեանը, անգլերէն լեզւով խօսքը՝ Նելիանա Գրիգորեանը եւ Լուսին Մինասեանը, իսկ պարսկերէնով՝ Միքիա Դաւթեանը:

Ծրագրի շարունակութեան մէջ Ծաղկանուշ Ծատուրեանի հեղինակած «Ապրիլ 24» բանաստեղծութիւնն ասմունքեցին Վահագն Թահմազեանը, Նարինէ Խուդաբախշեանը, Շիրակ Դիլանչեանը եւ Էրիքա Գէորգեանը: Անուհետեւ հնչեցին երկու խմբական երգեր, իսկ վերջում Դիւն Յովհաննիսեանը կատարեց «Ախպէրս ու ես» երգը:



Վերոնշեալ ելոյթների աւարտին իր հայրական օրհնանքը փոխանցեց Առաջնորդ Սրբազան հայրը: Նա դիմելով աշակերտութեանը՝ ասաց. «*Ինձ համար մեծ ուրախութիւն է ողջունել ձեզ Ապրիլեան Նահատակների Յուշարձանի առջեւ: 98-րդ անգամն է, որ մենք ժամադրւել ենք մեր նահատակների հետ: Այսօր դուք դպրոցը եւ դասարանը թողած, եկել էք այստեղ, մեր նահատակներին աւելու, որ չէք մոռացել նրանց ու չէք մոռանալու: Դուք եկել էք որպէս պահանջատէր սերունդ՝ մեր պայքարը շարունակելու*»:

Վերջում աշակերտները ծաղիկներ մատուցեցին Յուշարձանին, որոնց ժապաւէնների վրայ գրւած էր պահանջատիրական կարգախօսներ:

Վերոնշեալ երկու ծրագրերը վարեց Մանիա Ղուկասեանը:

**Երկուշաբթի՝ ապրիլի 22**

Երկուշաբթի՝ ապրիլի 22-ի կէսօրին ժամը 12:45-ին, Հայոց Ազգային «Քանանեան» Աղջկանց եւ «Կատարինեան» Տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտ-ուհիներն ու պատասխանատուներն իրենց յարգանքի տուրքը մատուցելու նպատակով ներկայացան Ս. Ամենափրկչեան Վանք:

Սկզբում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ հաղորդավար Նայիրի Թահմազեանը, որից յետոյ յանուն «Կատարինեան» դպրոցի՝ աշակերտական խօսք ընթերցեց Արգամ Թորոսեանը, ապա Վանանդ Իսաղուլեանն ասմունքեց Գէորգ Էմինի գրչին պատկանող «Հայաստան» բանաստեղծութիւնը:

«Քանանեան» դպրոցի անունից Սէրլի Ծահբազեանը եւ Մեղրի Ղուկասեանը ասմունքեցին «Ես այն մէկ հայն եմ թանգարանի մէջ» եւ «Թեւածել են ամպեր վրաս» բանաստեղծութիւնները՝ Վարանդի հեղինակութեամբ:



Այնուհետեւ առաջնորդ Սրբազան Հայրն իր խօսքում այսպէս փոխանցեց. «98 *տարիներ առաջ ցեղասպան Թուրքը ծրագրւած ջարդ կազմակերպեց՝ հային բնաջնջելու համար եւ ձեզ նման աշակերտներ մնացին առանց դպրոցի, տան ու հայրենիքի: Այս բոլորն իմանալով չե՛նք կարող լռել, չըրողքել եւ պահանջատէր չլինել: Ապրիլ* 24-*ը ողբալու օր չէ, մենք աշխարհին եւ մանաւանդ ցեղասպան Թուրքից ողորմութիւն չենք հայցում, այլ պահանջում ենք մեր արդար իրաւունքները*»:



Վերջում տեղի ունեցաւ ծաղիկների մատուցման արարողութիւն՝ աշակերտների միջոցով:

Յատկանշելի է, որ անցնող օրերի ընթացքում Ս. Ամենափրկչեան Վանքի պատերը զարդարւել էին բոլոր բաժինների աշակերտութեան պատի թերթերով ու նկարչութիւններով եւ «Քանանեան» աղջ. դպրոցի պաստառով, որի վրայ պատկերւած էին՝ Արարատ լեռը եւ Ծիծեռնակաբերդի անմար կրակը:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 98-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

**Երեքշաբթի՝ ապրիլ 23-ի երեկոյեան**

Հայոց Ցեղասպանութեան 98-րդ տարելիցի առիթով ապրիլի 23-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասի, տեղի ունեցաւ հսկումի արարողութիւն, որն աւարտուեց միասնական աղօթքով:



Արարողութեանը յաջորդեց լռութեամբ մոմերով երթը, եւ ներկաները, առաջնորդութեամբ՝ գերշ. Սրբազան Հօր, հոգեւոր հայրերի, Իրանի Իսլամական Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի, Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի պատասխանատու Սարգիս Մկրտչեանի, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի եւ ազգային մարմինների անդամների ու Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Սկաուտական Միաւորի ջահակիր խմբի, քայլեցին դէպի Ս. Ամենափրկչեան Վանք:



Քայլերթն ընթացաւ Սպահանի գլխաւոր պողոտաներով՝ Արեւելեան ու Արեւմտեան Նազարներով եւ Ս. Ամենափրկչեան Վանքի փողոցով: Երթն աւարտուելուն պէս, մոմերը տեղադրուեցին Վանքում վեր խոյացած Հայոց Ցեղասպանութեան Նահատակների Յուշարձանի մօտ, ինչպէս նաեւ պատուանդանի վրայ տեղադրուած Դեր-Զորից բերուած հայ նահատակների մասունքների շուրջ:




Այնուհետեւ սկիզբ առաւ բողոքի համահաւաքը՝ ներկաների մէկ րոպէ յոտնկայս լռութեամբ, որից յետոյ բացման խօսքով հանդէս եկաւ օրւայ հաղորդավար Մանիա Ղուկասեանը: Խօսքում կարեւորութեամբ ասուած էր, որ ժողովուրդները, ի մասնաւորի հայութեան պէս աշխարհասփիւռ ազգերը, կարող են յարատեւել ու ապրել իրենց մշակոյթով, ազգային միասնականութեամբ եւ ամենակարեւորը՝ քաղաքական պայքարի խորը գիտակցութեամբ:




Ապա Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի անունից ելոյթ ունեցաւ Խորհրդի փոխ-ատենապետ Վրէժ Ծիրւանեանը: Նա մատնանշելով հայ ժողովրդի իրագործած պահանջատիրական աշխատանքները, աւելացրեց. *«Պահանջում ենք միջազգային իրաւասու դատարաններում Թուրքիայի պետութեանը դատի յանձնել՝ հայ ժողովրդին ցեղասպանութեան ենթարկելու եւ հայրենազուրկ դարձնելու, հայութեան պատմամշակութային ժառանգութիւնը ոչնչացնելու ու նիւթական հարստութիւնը սեփականացնելու համար։ Պահանջում ենք, որ այդ պետութիւնը հայ ժողովրդի բռնագրաւեալ հայրենիքը վերադարձնի իր իրաւատիրոջը եւ մարդկային ու նիւթական վնասների դիմաց հատուցում կատարի։ Ահաւասիկ մեզ մնում է վերակազմակերպուելով որպէս մէկ ամբող-*

*ջական ժողովուրդ՝ համախմբուենք համահայկական եւ համազգային բնոյթ կրող ծրագրերի օրակարգերի շուրջ ու նոր թափ եւ ուժականութիւն տանք Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման աշխատանքներին»:*



Օրուայ ելոյթների շարանում ընթերցւեց «Թադէոս Թադէոսեան» Պատանեկան Միութեան խօսքը՝ Վահագն Խուդաբախշեանի միջոցով: Սոյն միութեան անդամները նոյն օրը երեկոյից Վանքի շրջափակում 24-ժամեայ նստացոյցի էին դիմել եւ համահաւաքի ամբողջ ընթացքում պահանջատիրական կարգախօսների վանկարկումներով ու յեղափախական երգերով ոգեւորում էին ներկաներին: Պատանեկան Միութեան խօսքում կարեւորութեամբ ասւած էր. «*Մենք՝ Նոր Ջուղայի պատանիներս ու երիտասարդներս, հաւատարիմ մնալով մեր հոգեւոր ու ազգային արժէքներին եւ լաւապէս սերտելով հայ ազգի պատմութիւնը, մշակոյթն ու լեզուն, պէտք է ջանք չխնայենք հայապահպանման, ազգապահպանման եւ ամենագլխաւորը՝ Հայ Դատի արդար լուծման ուղղութեամբ: Երբ մեր օրերում, քաղաքակիրթ հասարակութիւնն իր լռութեամբ թոյլ է տալիս շարունակւի հայ ազգի նկատմամբ իրագործւած ցեղասպանութեան ուրացումը՝ իր արդիական ու նորացւած ձեւերով, մեզ է մնում, որ առաւել յանձնառութեամբ մեր միասնական ուժերը լարենք՝ ի խնդիր մեր արդար իրաւունքների ձեռք բերման, խորտակելով մեր առջեւ ծառացած իւրաքանչիւր պատնէշ*»:




Համահաւաքի շարունակութեան մէջ գեղարւեստական բաժնում գեղեցիկ կոմպոզիցիայ իրագործւեց՝ երգի, պարի եւ ասմունքի կատարումներով՝ նւիրւած Ցեղասպանութեան բիւրաւոր նահատակներին՝ ի մասնաւորի Կոմիտաս Վարդապետին: Գեղարւեստական կատարումների շարանում ասմունքով եւ պարային կատարումներով հանդէս եկան Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Կռունկ» Համոյթի ասմունքի եւ պարի խմբերը:




Սոյն բաժնում Նայիրի Թահմազեանը, Մանիա Ղուկասեանը եւ Թալին Մովսիսեանը ասմունքեցին Պարոյր Սեւակի «Եռաձայն Պատարագ»-ից հատւածներ, իսկ երգերի մենակատարմամբ հանդէս եկան խմբավար Համիկ Ալեքսանդրեանը՝ «Գարուն ա, ձուն ա արել» եւ «Կռունկ», իսկ մեներգիչ Վանա Ծիրանեանը՝ «Կիլիկիա» երգերով: «Գարուն ա, ձուն ա արել» երգի ընթացքում մուտք գործեց Հայոց Ցեղասպանութեան 98-ամեակը խորհրդանշող ջահակիր խումբը, որը մինչեւ գեղարւեստական բաժնի աւարտն իր ջահերի լուսաւորութեամբ՝ իւրայատուկ խորհրդաւորութիւն պարգեւեց ծրագրին: Գեղարւեստական կատարումները եզրափակւեցին պահանջատիրութիւն խորհրդանշող սրապարով: Սոյն կոմպոզիցիան իրագործւել էր ղեկավարութեամբ՝ Ռիմա Սիմոնեանի, Կարին Տէր-Մարտիրոսեանի եւ Նոնա Բախշեանի:

Որպէս համաքաւաքի եզրափակիչ խօսք՝ ներկաներին իր հայրական պատգամը փոխանցեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Սրբազան Հայրն անդրադառնալով վերածնւած հայ ժողովրդին՝ ասաց. «*Դարերը մեզ սուր եւ թուր հրամցրեցին, բայց մենք այդ սրերն ու թրերը վերածելով բահերի ու բրիչների՝ հնչեցրինք աշխատանքի քաղցր ձայնը: Դարերը մեզ դժւարութիւններ ու նեղութիւններ հրամցրեցին, մեր պատիւն ու արժանապատւութիւնը ոտնակոխեցին, բայց ենք մնացինք ուժեղ եւ հզօր՝ մեր ինքնութիւնը Արարատի նման անարատ պահելով*»:

Այնուհետեւ առաջնորդ Սրբազան Հայրը մէջբերելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի խօսքը, որտեղ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նշման ուղեգիծն է յայտարարել՝ «յիշել, յիշեցնել եւ պահանջել» բառերը, աւելացրեց, որ 100-ամեակի շե-

մին մեր քաղաքականութիւնը պէտք է ճշտենք նշուած երեք բառերի հիման վրայ:



Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն իր պատգամի աւարտին շնորհակալական խօսք ուղղելով երկրի, ի մասնաւորի Սպահան նահանգի պետական այրերին՝ քայլարշաւն արտօնելու համար, համայն հայութեանը յորդորեց՝ մինչեւ մեր արդար իրաւունքներին վերատիրանալը, միակամ կեցւածքով շարունակել պահանջատիրական պայքարը եւ մի կողմ նետել այն տապանաքարը, որն աշխարհը փորձում է դնել մեր Դատի վրայ:

Բողոքի համահաւաքն աւարտուեց մոմավառութեամբ:



Հարկ է նշել, որ երեկոյի ամբողջ ընթացքում Եղեռնի զոհերի յիշատակը յաւերժացնող Յուշարձանի շուրջ անմար ջահերով հսկումի արարողութիւն տեղի ունեցաւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Սկաուտական Միաւորի անդամների միջոցով: Իսկ աւանդոյթի համաձայն տեղի ունեցաւ նաեւ արեան տուչութիւն:

**Չորեքշաբթի՝ ապրիլ 24-ի առաւօտեան**

Ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 11:30-ին, Ս. Ամենափրկչեան Վանքի շրջափակում Հայոց Ցեղասպանութեան Յուշարձանի մօտ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ նախագահութեամբ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասի: Արարողութեան ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Այնուհետեւ օրւայ հաղորդավար Նայիրի Թահմազեանը հրաւիրեց Հայոց Ցեղասպանութեան 98-ամեակի Ոգեկոչման Նոր Ջուղայի Յանձնախմբի ներկայացուցիչ Սարինէ Յարութիւնեանին՝ Յանձնախմբի խօսքն ընթերցելու: Ահա մէջբերումներ՝ այդ խօսքից. «*Այսօր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նախաշեմին, անհրաժեշտ է առաւել քան երբէք գիտակցենք, որ այս պահանջատիրութեան յաջողութիւնը եւ մեր ժողովրդի արդար Դատի լուծումը հնարաւոր է միայն ու միայն առօրեայ եւ երկարաշունչ, չյոգնող ու չվարանող, միասնական եւ միահամուռ աշխատանքով ու պայքարով, եւ չմոռանանք, որ մեր անմեղ նահատակներն սպասում են իրենց տառապանքների, սպանդի եւ տարագրութեան ճանաչմանն ու հատուցմանը: Պիտի համոզւենք, որ Հայ Դատն է մեր առօրեան, մեր կեանքի կարեւոր բաժինը, մեր մտածումների ու մտահոգութիւնների գերագոյն խնդիրը եւ օրակարգը*»:



Յանձնախմբի խօսքին յաջորդեց առաջնորդ Սրբազան Հօր, հոգեւորականաց դասի, ազգային մարմինների, միութիւնների եւ դպրոցների պատասխանատուների ծաղիկների մատուցումը, որից յետոյ՝ ելոյթ ունեցաւ Իրանի Իսլամական Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը՝ այսպէս ասելով. «*Ներկայ ժամանակահատուածում ականատեսն ենք, թէ ինչպիսի յարափո-*

*փոխ իրավիճակում է գտնւում տարածաշրջանը եւ ինչ իրադարձութիւններ են տեղի ունենում մեր հարեւանութեամբ, ինչպիսին են Սիրիայի դէպքերը, Իրաքը, Քուրդստանը, արաբական երկրների շարժումները եւ իշխանութիւն ու գերիշխանութիւն յաւակնող երկրների միջամտութիւնները տարբեր հարեւան երկրներում, որոնք ցոյց են տալիս, թէ Հայ Դատի լուծման ծիրում եւ տարածաշրջանում խաղաղութիւն հաստատման հարցում հաւանաբար նոր իրադարձութիւնների ականատեսն ենք լինելու»:*





Պրն. Բեգլարեանը վերջում շնորհակալութիւն յայտնեց Իրանի պետական այրերին, ովքեր ինչպէս միշտ գիտակցեցին բողոքի համահաւաքի եւ քայլարշաւի կազմակերպման անհրաժեշտութիւնը:





Համահաւաքի աւարտին կայացաւ ժողովրդի ծաղիկների մատուցումը, ապա կէսօրից յետոյ ժամը 1-ին, պահանջատէր հայորդիների խուռներամ մասնակցութեամբ սկիզբ առաւ բողոքի քայլարշաւը, որն ընթացաւ Սպահանի Հաքիմ-Նեզամի, Թոհիդ, Արեւելեան Նազար եւ Ս. Ամենափրկչեան Վանքի պողոտաներով:



Քայլարշաւի ամբողջ ընթացքում հոծ թւով բազմութիւնը, առաջնորդութեամբ թեմակալ առաջնորդի, հոգեւոր հայրերի, պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի, Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի պատասխանատու Սարգիս Մկրտչեանի եւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ու ազգային մարմինների անդամների, վեր բարձրացրած բռունցքներով վանկարկեց դատապարտող եւ հատուցում պահանջող կարգախօսներ: Քայլերթն աւարտւեց Ս. Ամենափրկչեան Վանք վերադառնալով եւ վերածնունդ ներշնչող «Սարդարապատ» երգով:

**Չորեքշաբթի՝ ապրիլ 24-ի երերկոյեան**



Ապրիլի 24-ի երեկոյեան ժամը 8-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում կայացաւ դասախօսական-գեղարուեստական երեկոյ: Ձեռնարկն սկիզբ առաւ հաղորդավար Նայիրի Թահմազեանի բացման խօսքով, որտեղ ընդգծուած էր, որ հայը կը շարունակի մնալ պահանջատէր դիրքի վրայ եւ հաւատով կառչած իր իրաւունքներին:

Այնուհետեւ դասախօսութեամբ ելոյթ ունեցաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի պատասխանատու Սարգիս Մկրտչեանը:



Սկզբում դասախօսն անդրադառնալով Հայոց Ցեղասպանութեան իրականացման դրդապատճառին՝ մեծ Թուրան պետութեան ստեղծմանը եւ պանթուրքիզմական գաղափարախօսութեան շրջագծում մեր օրերում Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից իրականացուող մի շարք ծրագրերին, որոնք սպառնում են ո՛չ միայն Հայաստանի, այլեւ Իրանի ազգային անվտանգութիւնը, նշեց, որ Թուրքիային յաջողուեց իրագործել Ցեղասպանութիւնը, քանի որ գոյութիւն չունէին հայոց ազգային պետականութիւն եւ կազմակերպուած բանակ:

Դասախօսն իր խօսքի մի այլ բաժնում անդրադառնալով Հայրենիքում ապրող հայութեան՝ ի մասնաւորի երիտասարդութեան առջեւ ծառացած դժուարութիւններին, առկայ իրավիճակում Հայ Դատի իմաստի կապակցութեամբ ասաց. «*Այսօր Հայ Դատ նշանակում է՝ ամէն ճիգ թափել Հայաստանում ապրող հային այդ հողի վրայ պահելու եւ նրա համար արժանավայել կեանքի պայմաններ ստեղծելու ուղղութեամբ, քանի որ հզօր, ապահով եւ զարգացած երկրում արժանապատիւ կեանքով ապրող հայ մարդն է կարող լուծել այն Հայ Դատը, որը մեր բոլորի մտքում է*»:

Բովանդակալից դասախօսութեան աւարտին պրն. Մկրտչեանը հայ ազգի յաջողութեան գրաւականն այսպէս նկատեց. «*Կերտել բազմակողմանիօրէն զարգացած երկիր՝ հզօր տնտեսութեամբ եւ բանակով, հզօր կրթական ու գիտական համակարգով, իր շուրջ ունենալով Սփիւռքի մարդկային ու նիւթական ներուժը, Թուրքիայից պահանջել հայոց հողերը, գոյքն ու ունեցուածքը եւ զարկ տալ Արեւմտեան Հայաստանում ապրող հայութեան ազգային ինքնագիտակցութեան վերածնունդին: Եւ այս ամբողջը հնարաւոր է միայն հզօր Հայաստանով. հզօր Հայաստան՝ վերակազմակերպուած հզօր Սփիւռքով*»:



Ծրագրի երկրորդ բաժնում՝ իրականացուեցին գեղարուեստական կատարումներ: Սկզբում մեներգիչներ Արթին Ղարախանեանը՝ «Մայր ու որդի» եւ «Հրաժեշտ սիրելիներիս», իսկ Զարենուշ Աղուրեանը՝ «Կիլիկիա» երգերի կատարումներով յատուկ խորհրդաւորութիւն պարգեւեցին ծրագրին:

Այնուհետեւ բեմադրուեց Սուրէն Պարթեւեանի «Անմահ բոցը» դրամայից երկու գործողութիւն՝ բեմադրութեամբ Հրաչ Տէր-Յովհաննիսեանի եւ կատարմամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Լեւոն Շանթ» թատերախմբի: Սոյն ներկայացմամբ պատկերուած պոլսահայ երիտասարդ մտաւորականի ձերբակալումը, նրա ընտանիքի տառապանքներն ու կնոջ եղերական վախճանը, խորապէս յուզեցին հանդիսատեսին:



Ձեռնարկի աւարտին իր հայրական օրհնանքը ժողովրդին փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը: Նա յիշելով վերջին օրերի ընթացքում կայացած ոգեկոչման ծրագրերը եւ ժողովրդի խուռներամ մասնակցութիւնը, գնահատանքի խօսք ուղղեց Հայոց Ցեղասպանութեան 98-ամեակի Ոգեկոչման Նոր Ջուղայի Յանձնախմբին եւ սոյն Յանձնախմբի հետ համագործակցած անհատներին: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն իր խօսքի աւարտին պահանջեց՝ Թուրքիան ճանաչի՛ Հայոց Ցեղասպանութիւնը, ամբողջապէս հատուցի՛ հայ ժողովրդի բռնագրաւած մարդկային եւ ազգային իրաւունքների դիմաց եւ վերադարձնի՛ հայոց հոգեւոր ու մշակութային հարստութիւնները:

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԶԱՏ ԼՍԱՐԱՆ

Հինգշաբթի՝ ապրիլի 25-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում տեղի ունեցաւ երիտասարդական ազատ լսարան (Talk Show): Միջոցառումը կազմակերպել էր «Ռուբէն» Երիտ. Միութիւնը: Ծրագրին ներկայ էին Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի պատասխանատու Սարգիս Մկրտչեանը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչներ եւ համայնքի երիտասարդներ:



Սկզբում Մանիա Ղուկասեանը բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ մի շարք բացատրութիւններ տուեց հաւաքի կազմակերպման նպատակի եւ փոխանցելիք նիւթերի կապակցութեամբ:



Այնուհետեւ ծրագրի ընթացքում ելոյթ ունեցան Թալին Մովսիսեանը՝ «Հայոց Ցեղասպանութեան պատմական հոլովոյթը եւ պանթուրքիզմի իրականացման փուլերը», Լեռնիկ Ղազարեանը՝ «Հայ Դատը եւ մեր անելիքները 100-ամեակի նախաշեմին», Նարէ Ասատրեանը՝ «Իրան-Հայաստան փոխ-յարաբերութիւնները եւ հայկական հարցն Իրանի քաղաքականութեան համատեքստում» եւ որպէս եզրափակում՝ Մանիա Ղուկասեանը՝ «Հայոց Ցեղասպանութեան 100-անեակի ծրագրեր եւ Թուրքիայի կողմից մեզ սպառնացող վտանգները» նիւթերը շօշափելով:

Հարկ է նշել, որ իւրաքանչիւր բաժնում ցուցադրւում էին համապատասխան տեսանիւթեր եւ լուսանկարներ, իսկ նիւթերի փոխանցման ընթացքում հնչում էին առնչակից հարցումներ, որոնց պատասխանում էր հանդիսատեսը:

Ներկաներն արտայայտեցին նաեւ իրենց մտահոգութիւններն ու առաջարկները 100-ամեակին ընդառաջ գնալուն, որը վերածուեց հետաքրքիր երկխօսութեան:





Վերջում Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի պատասխանատու Սարգիս Մկրտչեանը ողջունելով Ռ.Ե.Մ.-ի այս նախաձեռնութիւնը, դիմեց ներկայ երիտասարդներին եւ ասաց. *«Դուք պէտք է զգօն լինէք ու խիզախ: Պէտք է կրթուէք եւ դառնաք լաւագոյն մասնագէտներ, որպէսզի ձեր գիտելիքներով կարողանաք չէզոքացնել Թուրքիայի հակահայ քարոզչութիւնները:*



*Դուք պարտաւոր էք միջազգային չուկա յում մակարդակ ներկայացնել եւ այդպէս դուք էլ կը նպաստէք Հայ Դատի լուծմանը, քանի որ դա ամենօրեայ պայքար է: Ուրեմն ամէն օր եղէ՛ք տեղեակ՝ երկրի մակարդակում տեղի ունեցող Հայ Դատին եւ Հայաստանին առնչւող հարցերին»:*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 98-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ ՊԱՐՍԻԿ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուրբաթ՝ ապրիլի 26-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Ջուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, նախաձեռնութեամբ Հայոց Ցեղասպանութեան 98-ամեակի Ոգեկոչման Նոր Ջուղայի Յանձնախմբի, տեղի ունեցաւ ձեռնարկ՝ պարսիկ հայրենակիցների համար: Ծրագրին ներկայ էին Իրանի Իսլամական Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչներ ու պարսիկ հայրենակիցներ, ի մասնաւորի համալսարանի դասախօսներ, ուսանողներ եւ ուսուցիչներ:



Սկզբում հաղորդավարներ Արթին Մուրադեանն ու Անասիկ Խաչիկեանը ներկաներին հրաւիրեցին մէկ րոպէ լռութեամբ յարգելու Հայոց Ցեղասպանութեան բիւրաւոր նահատակների յիշատակը, որից յետոյ ողջունեցին ներկաներին եւ համառօտ տեղեկութիւններ փոխանցեցին Ցեղասպանութեան իրողութիւնից՝ պաստառի վրայ ցուցադրուող համապատասխան պատկերներով:



Այնուհետեւ օրուայ դասախօս Ռոբերտ Բեգլարեանը, ողջունելով ներկաներին, շնորհակալութիւն յայտնեց նրանց՝ Հայոց Ցեղասպանութեան Ոգեկոչման Յանձնախմբի հրաւէրին ընդառաջելու համար:

Դասախօսն սկզբում անդրադարձաւ Հայոց Ցեղասպանութեան մասին վկայող մի շարք յօդուածների, մասնաւորաբար Ջամալզադէի ճամբորդական զեկոյցներին, որոնք արհաւիրքի օրերին տպագրուել էին իրանական թերթերում: Այնուհետեւ նշելով, որ Ցեղասպանութեան ենթարկուած շրջաններում եղած իրանցիները օժանդակել են հայերին եւ փրկել նրանց մահուան ճիրաններից, ակնարկեց քաղաքական գործիչ եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան նախարարներից Վահան Յովհաննիսեանի (Միրախորեան) «Հայաստան 1915» գիրքը, որտեղ հեղինակը նկարագրելով իր յուշերը՝ բացարել է, թէ իրանցի Հոսէյնէ Խանին ինչպէս է փրկել իրեն թուրք ցեղասպանի ձեռքից եւ երեք տարի ապաստան տուել Իրանի հիւպատոսարանում:



Պրն. Բեգլարեանն իր խօսքի շարունակութեան մէջ ակնարկելով 1948 թուականին հաստատուած ցեղասպանութիւնը բացատրող միջազգային բանաձեւը՝ ասաց. «*Թուրքիան Ցեղասպանութեան իրաւական, քաղաքական, տնտեսական եւ աշխարհագրական հետեւանքներից խուսափելու համար է, որ ուրանում է Հայոց Ցեղասպանութիւնը եւ հերքում այն՝ հակառակ առկայ բոլոր փաստերի*»: Այնուհետեւ անդրադառնալով պանթուրքիզմական գաղափարախօ-

սութեան ձեւաւորմանը եւ այն իրականացման շրջագծում կիրառուած դաժան քաղաքականութեանը, աւելացրեց. «*Հայոց Ցեղասպանութիւնը ո՛չ միայն իրականացուել է* 1915 *թուականի ժամանակահատուածում, այլեւ այն տեղի է ունեցել տարբեր ժամանակաշարջաններում՝ մի քանի տասնամեակ, Օսմանական Թուրքիայի, Երիտթուրքերի եւ Աթաթուրքի պետութիւնների օրօք, մինչեւ* 1923 *թուականը։* 1956 *թուականին եւս Թուրքիայում կոտորածներ են տեղի ունենում, որի պատճառով հարստահարւում, տեղահանւում եւ դէպի մահուան ճիրաններ են ուղարկւում տարբեր դաւանանքներ ունեցող վաճառականներ։ Եւ սա պատմութեան այն հատուածն է, որի մասին շատ քիչ է խօսւում*»։



Ռոբերտ Բեգլարեանը իր խօսքի աւարտին կարեւորութեամբ ընդգծելով, որ համայն հայութիւնը Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի շեմին շարունակելու է իր ջանքերը՝ ի խնդիր Ցեղասպանութեան միջազգային ճանաչման, մինչեւ կստանայ պատճառած վնասների հատուցումը, հայ եւ առ հասարակ բոլոր քաղաքական գործիչներին եւ պետական այրերին յորդորեց Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ արդարութեան վերահաստատման աշխատանքների կողքին չմոռանալ աշխարհում տեղի ունեցող միւս արհաւիրքները, ինչպիսին են Միանմարում մուսուլմանների ցեղասպանութիւնը եւ Գազայի խնդիրները:



Այնուհետեւ ներկաներին հրամցւեց գեղարուեստական յայտագիր, որտեղ արուեստի լեզւով ներկայացւեց դաժան ու սարսափելի օրերի արհաւիքը, որն աւարտւեց հայի չյուսահատող ու աննկուն կամքը պատկերող երգով: Սոյն յայտագիրն իրագործուել էր ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի, Կարին Տէր Մարտիրոսեանի եւ Նոնա Բախշեանի:



Կատարումների շարանում տեղ էին գտել պարային ներկայացումներ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան «Կռունկ» համոյթի պարախմբի կատարմամբ, եւ ասումնքներ՝ նոյն համոյթի ասմունքի խմբի անդամներ՝ Լեռնիկ Ծատուրեանի, Ալինա Տէր Սուքիասեանի եւ Կարէն Խանլարեանի մատուցմամբ, որոնք ասմունքեցին Սիամանթոյի, Դանիէլ Վարուժանի, Յակոբ Յակոբեանի եւ Գեղամ Սարեանի ստեղծագործութիւններից: Ընթացքում Մհեր Պօղոսեանը յուզիչ կերպով կատարեց «Ադանա» երգը՝ պարախմբի ընկերակցութեամբ, իսկ գեղարուեստական բաժնի աւարտին խրոխտ ձայնով երգեց «Հայաստան»-ը, որին զուգահեռ բոլոր կատարողները կեանքի ու վերածնունդի խորհրդանիշ կանաչ ճիւղերով բեմ բարձրացան: Բոլոր գեղարուեստական կատարումներն արժանացան ներկաների բարձր գնահատանքին:

Վերջում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

# ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒԵՑ ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԸ



Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան, Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, Հայ Կանանց Գթութեան Միութեան եւ Հայ Ուս. Ձհարմահալ Միութեան Ն.Ջ. Մասնաճիւղի համատեղ նախաձեռնութեամբ ապրիլի 7-ի երեկոյեան ժամը 7:30-ին, «Արարատ» Միութեան մարզասրահում մեծ շուքով նշւեց Մայրերի Տօնը: Միջոցառմանը ներկայ էին՝ Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, օրւայ բանախօս Թաթուլ Օհանեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ հայ մայրեր:

Սկզբում հնչեց հայ մայրերին նւիրւած գեղեցիկ երգ, որի բանաստեղծութեան հեղինակն է իրանահայ անւանի բանաստեղծ Վարանդը, իսկ երաժշտութեանը՝ Վարուժ Ոսկանեանը: Այնուհետեւ օրւայ հանդիսավար Արտեմիս Խաչեանը ողջոյնի եւ բարի գալստեան խօսք ընթերցեց: Բացման խօսքում հանդիսավարը մէջբերելով Իսահակեանի իմաստուն խօսքը՝ ասաց. «*Ամենալաւ կինը մայրն է: Մօր սիրտը մարդկութեան սիրտն է, տիեզերքի սիրտը: Հէնց միայն մայր ունենալու համար արժէ աշխարհ գալ*»:



Ապա օրւայ բանախօս ազգային-հասարակական գործիչ Թաթուլ Օհանեանն իր խօսքի սկզբում անդրադարձաւ «Մայր» բառի իմաստին, ապա մատնանշեց, թէ մօրը մեծարելով՝ մենք մեր արժէքներին «մայր» անունով ենք կոչել, ինչպէս՝ Մայր երկիր, մայրենի լեզու, մայրապետ, մայր Արաքս եւ այլն: Պրն. Օհանեանն իր խօսքի շարունակութեան մէջ հայ մօր դերը վեր դասելով՝ կարեւորութեամբ ընդգծեց նրա առաքելութիւնը սփիւռքեան պայմաններում:



Ծրագրի շարունակութեան մէջ մայրերը վայելեցին գեղարւեստական կատարումներ. Ռիմա Սիմոնեանի, Արմէն Ամիրխանեանի եւ դկտ. Սիլւա Ալլահվերդեանի ղեկավարութեամբ հանդէս եկան «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Կռունկ» ասմունքի եւ էստրադային ու Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբերը: Մօրը նւիրւած գեղեցիկ ասմունքային կատարումներով ներկայացան Վանէ Ծահնազարեանը, Կարէն Խանլարեանը, Վանիա Պետրոսեանը եւ Թանիա Մինասեանը, իսկ երգերի կատարմամաբ՝ Զարենուշ Աղուրեանը, Վեհանուշ Աւետումեանը եւ Սարօ Ղարախանեանը:



Որպէս եզրափակիչ խօսք, արտայայտւեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը այսպէս ասելով. «*Այսօր առաւօտեան մեր եկեղեցիներում կատարեցինք սուրբ եւ անման Պատարագ՝ նշելով Ս. Կոյս Մարիամ Աստւածածնի Աւետման Տօնը, սակայն այս պահին, ա՛յս սրահում զգալի է Պատարագի քաղցրութիւնը, որովհետեւ այսօր այս սրահը, այս սրբութիւններով՝ դարձել է եկեղեցի: Այն դարձել է պատարագ՝ մայրական շնչով, մայրական լեզւով ու բուրմունքով*»:

Ծրագրին ներկայացած մայրերին նւիրւած կրծքանշանների վրայի գրութեան կապակցութեամբ երեկոյի աւարտին տեղի ունեցաւ վիճակահանութիւն եւ չորս մայրեր արժանացան պարգեւների: Վերջում ներկաները հիւրասիրւեցին եւ վայելեցին «Անի» նւագախմբի գեղեցին կատարումները՝ ղեկավարութեամբ Արին Խաչիկեանի:

## êÎ²àôî²Î²Ü ºð¸Ø²Ü ²ð²ðàÔàôÂÆôÜ

## Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻԱՒՈՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 35-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Սկաուտական Միաւորի հիմնադրման 35-ամեակի նշման ձեռնարկների շարանում, ուրբաթ՝ 2013 թւականի մարտի 1-ի երեկոյեան, Միութեան մարզասրահում տեղի ունեցաւ սկաուտական երդման արարողութիւն:



Մինչ ծրագրի մեկնարկը, Սկաուտական Միաւորի Գերագոյն Մարմնի անդամները մուտքի մօտ դիմաւորեցին պատուոյ հիւրերին, եւ քաւորներին յանձնեցին Միաւորի պատւոյ անդամի փողկապներ:

Սկզբում տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն եւ յոտնկայս ունկնդրութեամբ հնչեց Իրանի Իսլ. Հանրապետութեան հիմնը, ապա Միաւորի նորաստեղծ հիմնը, որի խօսքերի հեղինակն է Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը եւ գործիքաւորումը կատարել է սկաուտ առաջնորդ Հարմա Կարապետեանը:



Ողջոյնի եւ բացման խօսքից յետոյ, Միութեան Կենտրոնական Վարչութեան անունից ելոյթ ունեցաւ տկն. Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, ով անդրադարձաւ ընտանիքից եւ դպրոցից յետոյ միութեան կարեւորութեանը, ապա Սկաուտական Միաւորին՝ որպէս ազգային դաստիարակութիւն ստանալու կարեւոր կենտրոն: Այնուհետեւ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը հրաւիրելով՝ կարեւորեց Միաւորի աշխատանքները եւ ասաց, որ «*Եթէ սկաուտական շարժումը 100-տարեայ պատմութիւն ունի եւ համարւում է միջազգային շարժում, ապա մեր իրականութեան մէջ որպէս 35-ամեայ անցեալ ունեցող Միաւոր՝ այն հայկականացել է եւ համարւում է ազգային շարջում*»:

Միաւորի նախատեսած աշխատանքների ելոյթներն սկսուեց Գայլիկ-Արծուիկների 4-ից 7 տարիքային խմբի ասմունքներով, ապա «Գետաշէն», «Երբ այստեղ մենք խումբ կազմած», «Ազգ իմ փառապանծ» խմբական երգերը կատարեցին 7-ից 10 տարիքային խումբը, պատասխանատուութեամբ վարիչ առաջնորդ Միրնուշ Ղուկասեանի եւ դեր-խմբապետ Վեհանուշ Խուդաբախշեանի: Երգերին երգեհոնի կատարումով ընկերակցում էր Հարմա Կարապետեանը:



Ապա խմբապետ Ռոբերտ Սիմոնեանի պատասխանատուութեամբ, Արի-Արենուշական հատուածները եւ երեց փաղանգը, ներկաների բուռն խրախուսանքների ներքոյ, ներկայացրեցին ֆիզիկական ցուցական բարդ աշխատանքներից թիրոլ, մարդով բուրգեր եւ ռոլինգներ հատուածները: Յաջորդ բաժնում սկաուտներ Մեղրի Ակոնը, Անի Ղազարեանը եւ Արամէ Մովսիսեանն ընթերցեցին 1912 թւականին Նոր Ջուղայում Սկաուտական շարժման հիմնադրութեան եւ տեղի ունեցած իրադարձութիւնների ամփոփ տեղեկագիրը: Այնուհետեւ պատրաստուած տեսանիւթի միջոցով Միաւորի հիմնադիր սերունդից սկաուտներ Ժորժիկ Մատթէոսեանը, Սիմոն Սիմոնեանը եւ Ռոբերտ Սիմոնեանն անդրադարձան Միաւորի հիմնադրման գործընթացին եւ կատարուած սկզբնական աշխատանքներին: Տեսանիւթում Մասիս Մինասեանն անդրադարձել էր 1980-ական թւականների, իսկ Հրաչ Տէր-Յովհաննիսեանը 1990-ական թւականների աշխատանքներին, որին յաջորդեց 1984 թւականի երդման արարողութիւնից մի հատուածի ցուցադրումը, որը նւիրուեց Միաւորի աշխատանքներին մեծ ներդրում ունեցած խմբապետ Ժորժ Դաւթեանի յիշատակին: Ներկաները նաեւ 2000 թւականից մինչ այսօր Միաւորի ծաւալած գործնէութեանը ծանօթացան ցուցադրուող լուսանկարների միջոցով:

Ծրագիրն ընդմիջուեց կազմակերպած ցուցահանդէսի բացումով, որտեղ ցուցադրուած էին, սկաուտների միջոցով պատրաստուած փոքր չափսերով սարքաւորումներ, լուսանկարներ, ձեռքի աշխատանքներ, գրքեր, յուշանուէրներ, անցեալի եւ ներկայ սկաուտական զգեստներ,

նշաններ ու թաշկինակներ:



Ընդմիջումից յետոյ ձեռնարկը շարունակեց խմբապետ Հրաչ Տէր Յովհաննիսեանի պատասխանատուութեամբ ցուցական շքերթով, որին մասնակցում էին Երէց փաղանգի եւ Արի-Արենուշական հատւածի բոլոր սկաուտները, նաեւ՝ Շահիշահրի սկաուտները, պատասխանատուութեամբ վարիչ առաջնորդ Էդուին Բաբումեանի:

Յաջորդ բաժնում, հանդիսաւոր կերպով ներկայացւեցին իւրաքանչիւր հատւածի թաշկինակները, որոնք օրհնւեցին Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի ձեռամբ: Ապա տեղի ունեցաւ երդւող հատւածների շքերթը եւ տեղաւորւումը, իւրաքանչիւր հատւածից երկուական ներկայացուցիչներ ներկայացան եւ Ս. Աւետարանի, Հայաստանի Հանրապետութեան, Իրանի Իսլ. Հանրապետութեան եւ «Արարատ» Միմութեան դրօշների վրայ երդման կարգը կատարեցին, որից յետոյ քաւորների միջոցով երդւեալներն ստացան թաշկինակ եւ փողկապ:



Սկաուտական Միաւորի Գերագոյն Մարմինը, Միաւորի անդամների աշխատանքը գնահատելու եւ արժեւորելու նպատակով մի շարք սկաուտների յանձնեց գնահատագրեր, համապատասխան աստիճաններ, նաեւ ռազմական, լեռնագնացութեան, երաժտութեան, նկարչութեան, լուսանկարչութեան եւ փայնեռինգի մասնագիտական նշաններ: Մի քանի սկաուտներ ստացան փոխանցագրեր՝ աւագ հատւած անցնելու, եւ ոմանք էլ՝ պաշտօններ:

Շնորհակալագրեր յանձնւեցին հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանին՝ սկաուտներին հոգեբանական խորհուրդներ տալու եւ Միաւորի նոր հիմնի բառերը գրելու, Մարգարիտ Դաւթեանին՝ Միաւորի 35-ամեայ արխիւներն ու տեղեկագրերը դասաւորելու եւ Մասիս Ղազարեանին՝ գօտիների պատրաստման համար, նաեւ՝ Հերմինէ Տէր Մարտիրոսեանին եւ Ծնողական Խորհրդին: Յուշանւէրներ յանձնւեցին Միութեան արտօնատէր պրն. Թաթուլ Օհանեանին՝ Միաւորին գրքեր նւիրելու համար, Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան եւ Թաւրիզի Մասնաճիւղի ու «Նայիրի» Միութեան սկաուտական բաժանմունքների ներկայացուցիչներին, ովքեր իրենց ներկայութեամբ պատւել էին երդման արարողութիւնը:

Վերջում ընթերցւեց Միաւորի 35-ամեակի առթիւ քոյր միութիւններից ստացւած ուղերձները: Երեկոյի առթիւ Գերագոյն Մարմնի նախագահուհի խմբապետ Մանիա Ղուկասեանը շնորհաւորելով նորակոչներին, յորդորեց նրանց՝ ե՛ւ անհատական ե՛ւ միութենական կեանքում ձգտեն վերելքների եւ բարձրացնելով՝ բարձրացնեն:



Ձեռնարկի աւարտին թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը հանդէս եկաւ հայրական օրհնանքով եւ շնորհաւորանքի ու գնահատանքի խօսքերով՝ ուղղւած սկաուտներին, նորակոչներին, Ծնողական Խորհրդին եւ յատկապէս այն ծնողներին, ովքեր իրենց զաւակներին վստահում են նման կառոյցների, որտեղ ազգասիրութեան, հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան դաստիարակութիւն են ընտանում: Սրբազան Հայրը նաեւ իր յարգանքը յայտնեց Միաւորի հիմնադիրների նկատմամբ եւ նրանց՝ ովքեր այսօր շարունակում են մասնակիցը լինել Միաւորի աշխատանքներին:

*Շարունակութիւնը՝ 24-րդ էջում*

# Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ «ԿՌՈՒՆԿ» ՊԱՐԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ

Հայաստան-Սփիւռք կապերի սերտացման եւ ամրապնդման միջոցներից մէկն անկասկած մշակութային փոխ-յարաբերութիւններն են, եւ ինչքան գեղեցիկ է, երբ այն ձեւաւորւում է պարի ու երաժշտութեան միջոցով եւ միմեանց աշխատանքին անծանօթ խմբերը հանդէս են գալիս համատեղ յաջող ելոյթով, որտեղ, որակ ներկայացնելուց բացի, երկու կողմերը ձեռք են բերում նոր փորձառութիւններ, նոր ծանօթութիւններ ու բարեկամներ:



Խօսքը հինգշաբթի՝ 2013 թւականի մարտի 7-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ «Արարատ» Միութեան սրահում Մշակութային Միաւորի «Կռունկ» պարախմբի կազմակերպած տարեկան համերգի մասին է, որը վայելում էր Հայաստանից ժամանած Հայկական-Ժողովրդական Երաժշտական Գործիքների Անսամբլի համագործակցութիւնը: Սա պարախմբի գեղարուեստական ղեկավար, Հայաստանից ժամանած պարուսոյց Նոնա Բախշեանի երկամեայ ծաւալած գործնէութեան ամփոփիչ համերգն էր, որն ընդգրկում էր 20-պարային բեմադրութիւններ:

Մինչ ծրագրի սկսումը, լազերային շոուով, ներկայացւեց հայոց պատմութեան կարեւոր դրւագների ու հայ մշակոյթի խորհրդանիշերն ու կարեւոր դէմքերը, ապա, որպէս արդէն իսկ աւանդոյթ, ծրագիրն սկսւեց խմբի համանուն՝ «Կռունկ» պարով:



Ընթացքում հոծ թւով հանդիսատեսը վայելեց պարախմբի եւ աւագ ու կրտսեր երեք խմբերի բաժանւած սաների ելոյթները, որոնք ներկայացնում էին հայկական պարարուեստի գեղեցիկ ու իմաստաւորւած մենապար ու խմբական պարային համարներ, որոնց մէջ արտացոլւում էր հայ ժողովրդի դարերի հերոսական դրւագները, սերունդների կուռ միասնութիւնը, անսասանութեան ռազմաշունչ պատկերն ու յաղթանակները: Պարերից յիշենք «Ով Հայոց Աշխարհ», «Սարդարապատ», «Սասունի պար», «Իմ Երեւան», «Կոմիտասեան մտորումներ», «Արցախի եղնիկ», «Սուսերապար» եւ այլն:



Համերգն ընդգրկում էր նաեւ օտար ազգերի եւ կենցաղային պատկերներ ներկայացնող համարներ, ինչպէս՝ «Թաթարական», «Մոլդովական», «Վրացական» պարեր, «Գարնանային անուրջներ», «Եղէգ», «Վալս», «Ջայֆ» եւ այլն:





Ելոյթների մեծամասնութիւնն իրականացաւ դհոլահարներ Սերգէյ Միքայելեանի, Նարեկ Մովսիսեանի, կլառնետ նւագող, դուդուկահար եւ շւիահար Մուշեղ Նազարեանի, քանոնահար Զարուհի Քալանթարեանի, ակորդիոնահար Գագիկ Դանիէլեանի եւ ստեղնաշարային գործիքների կատարող Կարէն Նաւասարդեանի կատարումների ներքոյ: Ելոյթներն ընդմիջող երաժշտական համարներն ու կլառնետի, շւիի ու քանոնի արւեստի վարպետութեան ցուցադրումն է՛լ աւելի բարձր տրամադրութիւն ապահովեցին դահլիճում:

Այդ ամէնի մէջ զգացւում էր «Կռունկ»-ի խօսքի պակասը, որի բացը մասամբ լրացրեց՝ ձեռնարկի բեմավար «Կռունկ» ասմունքի եւ գրական խմբի անդամ Գայիանէ Եղիազարեանը, ով պատկերաւոր ձեւով կատարեց Արշալոյս Սարոյեանի «Յաղթանակի պարը» ստեղծագործութիւնը: Ի միջայլոց նշենք, որ բեմավարը բացման խօսքի մէջ հակիրճ կերպով տեղեկութիւններ փոխանցեց «Կռունկ»-ի հիմնադրման եւ անցած ուղու մասին: Հիամերգն ամփոփւեց «Քոչարի» պարով:

«Կռունկ» պարախումբն առաջին անգամն էր, որ ելոյթ էր ունենում կենդանի երաժշտութեան ներքոյ, որը մեծ բաւականութիւն պատճառեց կազմակերպիչներին, երկու կողմերի խմբերին, ղեկավար կազմին, եւ արժանացան եւ Նոր Ջուղայի արւեստասէր հանդիսատեսի խրախուսական երկարատեւ ծափողջոյններին, ինչպէս նաեւ թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր քաջալերանքի խօսքերին, որն իր խօսքում, բարձր գնահատեց երաժշտական եւ պարային ելոյթների մասնակիցներին, պարուսոյցին եւ կազմակերպիչներին՝ գեղեցիկ երեկոյ մատուցելու առումով:



Վերջում պարախումբը յուշանւէր եւ ծաղիկներ նւիրեց պարուսոյցին, ծաղիկներով գնահատեց նաեւ նւագախմբին: Ձեռնարկի կազմակերպիչ Մշակութային Միաւորի Վարչութիւնն եւս իր շնորհաւորանքները եւ շնորհակալութիւնները յայտնեց ծաղիկներ նւիրելով:



Աւելացնենք, որ «Կռունկ» պարախմբին այժմ ունի 25 անդամ (17-ը աղջիկ եւ 8-ը տղայ), որի կողքին ուսանում են երեք տարիքային սաներ, որով խմբի ընդհանուր թիւը հասնում է 36-ի: Այժմ ողջունելի երեւոյթ է տղաների ներկայութիւնը բեմում, առանձնապէս փոքր սաների մէջ միակ տղայի ներկայութիւնը. յոյս ունենք, որ նրան եւս միանալու են իր տարեկիցները:

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԱՅՑԸ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Ն.Ջ. Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սաների այցը Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան «Նալբանդեան» գրադարան՝ գնահատելի եւ կարեւոր այն ծրագրերից է, որը համալրում է դպրոցի գեղեցիկ այլ աշխատանքները: Սոյն նախաձեռնութիւնն իր խրախուսիչ մեծ դերն ունի երեխաներին փոքր տարիքից ծանօթացնելու գրադարանին եւ գրադարանից օգտուելու պայմաններին: «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութիւնը եւ ուսուցչական կազմը քաջ գիտակցելով «Արարատ» Միութեան «Նալբանդեան» գրադարանի կարեւորութիւնը, որպէս ամենօրեայ հասանելի գրադարան, ամենամեայ կարգով նախաձեռնում եւ իրականացնում են գրադարան այցելելու ծրագիրը:



Չորեքշաբթի՝ 2013 թւականի մարտի 13-ի առաւօտեան ժամը 9-ին, սաներն ուղեկցութեամբ տեսչուհի Քառոլին Դիլանչեանի, ուսուցչական կազմի ու Ծնողական Խորհրդի անդամներ, այցելեցին «Արարատ» Միութիւն՝ սոյն ազգային հաստատութեան հետ առաւել ծանօթանալու եւ անակնկալնելով ողողուած օր վայելելու համար:

Միութեան շրջափակում աշակերտներն ըստ խմբակների առանձնացան եւ իրենց դաստիարակների ուղեկցութեամբ հերթաբար այցելեցին տարբեր բաժանմունքներ, ապա կարգապահ շարքերով մուտք գործեցին գրադարան, որտեղ դաստիարակների միջոցով մանուկներին հասկանալի ոճով բացադրութիւն տրուեց գրադարանի ու գրքերի բաժանումների մասին: Նրանք առիթ ունեցան ծանօթանալ ընթերցասրահից օգտուելու, անդամագրուելու եւ գիրք ստանալու կանոններին:



Հարց ու պատասխանի ձեւով երեխաների ուշադրութիւնը կենտրոնացուեց գրքերից օգտուելու եւ յատկապէս անվնաս վերադարձնելու կարեւոր հանգամանքին: Աշակերտներին բացատրուեց, որ նրանք ցանկութեան դէպքում իրենց օգտագործած գրքերը կարող են նուիրել գրադարանին: Այսպիսով երեխաները հետաքրքիր դասաժամ անցկացրեցին իրենց այնքան հարազատ Միութեան շրջափակում եւ հիւրասիրուեցին Ծնողական Խորհրդի միջոցով պատրաստուած նախաճաշով:



Այցելութեան ընթացքում սաներն օգտուեցին նաեւ մանկական բաժնի եւ մարզասրահի մարզական հնարաւորութիւններից, որոնք նոյնպէս ուրախանալու, մարզուելու եւ օրն առաւել զւարճալի զբաղմունքներով անցկացնելու առիթ ընձեռեցին:

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւնը միակ վայրն է, որտեղ առանց տարիքային խմբաւորումների մուտք են գործում համայնքի անդամները, իսկ Միութեան գրադարանը միակ հայկական գրադարանն է, որ երեկոյան ժամերին է դռները բաց հայ համայնքի ընթերցասէր հասարակութեան համար:

# ՆՈՐԱՄՈՒՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ





Նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի Վարչութեան եւ կազմակերպութեամբ նշանակւած գործադիր յանձնախմբի, երկուշաբթի՝ մարտի 18-ի երեկոյեան, Միութեան յարկի տակ կազմակերպւել էր հանդիպում՝ 2012-2013 թթ. ուսումնական տարեշրջանի նորամուտ ուսանողների հետ:

Որպէս երեկոյի բացում, ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքերով ելոյթ ունեցաւ Թալին Մովսիսեանը, զեկուցեց Միաւորի միամեայ աշխատանքների մասին եւ ուսանողներին առաջարկեց Միաւորի աջակցութիւնը: Նա նորամուտ ուսանողներին հրաւիրեց, ցանկութեան դէպքում, մասնակցել Միաւորի աշխատանքներին:

Յաջորդիւ ցուցադրւեց Միաւորի աշխատանքները ներկայացնող լուսանկարներ, որից յետոյ ելոյթ ունեցաւ Միաւորի Վարչութեան նախագահ Նարբէյ Զարդն-Դաւուդը: Նա անդրադարձաւ հանդիպման նպատակներին, որն է՝ ուսանողներին համախմբել Միաւորի շուրջ, եւ բացատրեց Միաւորի կառոյցի, վարչական կազմի ու աշխատանքի մասին:



Միաւորի կապ Նորիկ Պօղոսեանն իր եւ Կենտրոնական Վարչութեան անունից շնորհաւորելով նորամուտ ուսանողներին անդրադարձաւ կազմակերպւած երեկոյի դերին՝ անդամ ներգրաւելու առումով, բացատրելով, որ ինքը եւ միւս անդամները եւս նոյն կերպով են անդամագրւել Միաւորին:

Վերջում Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչ Միգանուշ Տէր Մարտիրոսեանն ելոյթ ունենալով՝ շնորհաւորեց եւ բարեմաղթանքներ կատարեց նորամուտ ուսանողութեանը եւ յոյս յայտնեց, որ Միաւորի գործնէութեան աշխուժ ընթացքը շարունակւելու է նոր անդամ-ուհիներով:

Ձեռնարկի աւարտին նորամուտ ուսանողներին յանձնւեցին գնահատագրեր: Երեկոն աւարտւեց միասնական լուսանկարւելով եւ համեստ հիւրասիրութեամբ:

*Շարունակութիւն 20-րդ էջից*

ê Î ² àô î ² Î ²Ü º ð ¸ Ø ²Ü ²ð ²ðàÔàôÂÆôÜ...

Նշելի է, որ սոյն ձեռնարկն իրականացաւ Միութեան Կենտրոնական Վարչութեան հովանաւորութեամբ եւ Սկաուտական Միաւոր Գերագոյն մարմնի նախաձեռնութեամբ, որի կազմակերպչական աշխատանքները կատարել էին Գործադիր Յանձնախումբը եւ երկու ենթայանձնախմբեր: Նաեւ իրենց անվերապահ համագործակցութիւնն էին ցուցաբերել Նոր Ջուղայի եւ Շահինշահրի Ծնողական խորհուրդներն ու անհատներ: Սկաուտական մարշը նւագեց Կարէն Օհանեանը եւ երեկոն վարեց՝ վարիչ առաջնորդ Նայիրի Թահմազեանը:

# ԻՐԱՆԱՀԱՅ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ 25-ՐԴ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

## ԲԱՑՈՒՄ

25-րդ Գարնանային խաղերի բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ չորեքշաբթի՝ 2013 թուականի մարտի 20-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան մարզասրահում:



*«Աստղեր, որ շողացին ու չընկան, աստղեր, որ լուսաւորեցին թէ՛ անցեալը եւ թէ՛ ներկան»*. Իրանահայ վաստակաւոր մարզիկներին նուիրուած 25-րդ Գարնանային խաղերի բացման ծրագրի հանդիսավարներ Մանիա Ղուկասեանը եւ Արթին Մուրադեանը վերոնըշեալ նշանաբանով ու գարնանամուտը բնութագրող բանաստեղծական կտորի կատարմամբ ողջունեցին պաշտօնական հիւրերին, Հայրենիքից ժամանած եւ իրանահայ մարզիկ-ուհիներին, մարզիչներին ու պատասխանատուներին եւ ներկայ հազարաւոր հանդիսատեսներին, նաեւ ողջունեցին պետական հրաւիրեալների ներկայութիւնն ու իրանական տարեմուտի առթիւ բարեմաղթանքներով շնորհաւորեցին նրանց:

Պատուոյ օթեակում ներկայ էին Սպահանի հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, քահանայից դասից, Պատգամաւորական Ժողովից, Թեմական ու Կրօնական խորհուրդների, «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութիւնից, Հայ Դատի Նոր Ջուղայի Յանձնախմբից ներկայացուցիչներ եւ Միութեան արտօնատէր պրն. Թաթուլ Օհանեանը: Երեկոն իրենց ներկայութեամբ պատուել էին նաեւ Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ներկայացուցիչ Ռուբիկ Սարխուշեանը եւ իրանահայ անուանի բանաստեղծ Վարանդը:

Բացման արարողութեան պաշտօնական բաժնում Միութեան Սկաուտական Միաւորի Արի-Արենուշական հատուածի եւ Երէց փաղանքի միջոցով կատարուեց դրօշակի արարողութիւնը եւ ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ հնչեց Իրանի Իսլ. Հանրապետութեան հիմնը: Այնուհետեւ հանդիսատեսի ծափողջիւնների ներքոյ սրահ մուտք գործեցին 25 մարզական վետերաններ, որից յետոյ Միութեան ստորադային խմբի երգիչ-ուհիները հանդէս եկան խաղերին նուիրուած երգով, որի խօսքերի հեղինակն էր բանաստեղծ Վարանդը, երաժշտութեան հեղինակը՝ մայեստրօ Արմէն Ամիրխանեանը եւ գործիքաւորումը կատարել էր Րաֆֆի Շահրազեանը:



Այնուհետեւ հանդիսատեսը ծափողջիւններով եւ խանդավառ երաժշտութեան ներքոյ դիմաւորեց մարզական պատուիրակութիւններին, որոնք ներկայացնում էին՝ Երեւանի, Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան, Թեհրանի «Սիփան» Միութեան, Թեհրանի «Րաֆֆի» Համալիրի, Հ.Մ.Ա.Կ.-ի Թաւրիզի Մասնաճիւղի, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան եւ Շահինշահրի Մասնաճիւղի բասկետբոլ եւ սեղանի թենիս մարզաճիւղերի մարզիկ-ուհիները:



Միութեան Կենտրոնական Վարչութեան անունից ելոյթ ունեցաւ Վարչութեան նախագահ պրն. Վարուժ

Մինասեանը, նշելով. «*Սփիւռքեան հայահոծ կամ փոքրաթիւ համայնքները, Հայրենիքից հեռու իրենց սերունդներին ազգային դաստիարակութեան ու հայրենասիրութեան ոգին փոխանցելու եւ իրենց կենսունակութիւնը պահպանելու նպատակով, երկարատեւ ծրագրերին զուգահեռ կազմակերպում են նաեւ կենտրոնական միջոցառումներ, մշակութային ու մարզական փառատօներ։ Ահաւասիկ սա մեր 25-րդ համախմբումն է՝ Գարնանային խաղերի առանցքի շուրջ, որն արդարացիօրէն նւիրել ենք նրա իրական արժանաւորներին՝ իրանահայ վաստակաշատ ու անւանի մարզիկներին, նրանց՝ ովքեր 25 ու աւելի տարիներ իրենց կուրծքը զարդարած մեդալներով, լուսաւորել են յետագայ սերունդների ուղին՝ քայլելու մարզական առողջ ճանապարհով ու հպարտանքի առիթ են հանդիսանում նրանց ծնունդ տւող հայկական համայնքների ու միութիւնների համար…*»։



Ապա թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական ողջոյնի խօսքում ասաց. «*Դարձեալ խաղերի ջահը վառեցինք Ս. Ամենափրկչեան Վանքում գտնւող Նահատակաց Յուշարձանի կրակով։ Կարծէք այդ կրակը ջերմացնում է մեր հոգիները եւ մանաւանդ պարտադրում հաւատարիմ մնալ նրանց կտակին՝ պահապանը լինել մեր արդար ու անժամանցելի իրաւունքներին։ Այսօր չենք կարող երախտագիտութեան զգացումներով չյիշել նրանց՝ ովքեր եկան, գործեցին ու անցան՝ յիշատակի կրակը թողնելով մեր պատանիների ու երիտասարդների հոգիների մէջ։ Հանգի՛ստ ու խաղաղութիւն նրանց հոգիներին։ Յարգա՛նք մանաւանդ այսօր գործող պատասխանատուներին, կազմակերպիչ յանձնախմբի անդամներին ու այն անձանց, որոնց աշխատանքով ու նւիրումով իրականանում են այսպիսի սքանչելի փառատօներ… Միասնաբա՛ր աշխատենք՝ մէկ Հայրենիքի եւ մէկ ժողովրդի գիտակցութեամբ։ Միասնաբա՛ր պայքարենք՝ ազատ, անկախ ու ամբողջական Հայաստանի ու ամբողջական հայութեան համար*»։

Բացման ծրագրի նախօրէին, ներկայութեամբ ազգային իշխանութեան ու Միութեան ներկայացուցիչների, Յուշարձանի կրակից ջահը վառել եւ օրհնել էր գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Խօսքերից յետոյ ցուցադրւեց տեսանիւթ, որով ներկայացւում էր Ս. Ամենափրկչեան Վանքի շրջափակում գտնւող Ապրիլեան Եղեռնի Նահատակների յիշատակը յաւերժացնող Յուշարձանի մօտ տեղի ունեցած ջահավառութեան արարողութիւնն ու ջահակիր խմբի միջոցով ջահի «Արարատ» Միութեան կենտրոնատեղ տեղափոխւելու ընթացքը:



Ջահ, որի կրելու պատիւը տրւել էր իրանահայ վաստակաշատ մարզիներ Իրանի եւ Ասիայի բռնցքամարտի ախոյան Սերոժ Խանլարեանին, թեկւանդոյի ախոյան եւ միջազգային մարզիչի կոչում ունեցող Ռոստոմ Աղազարեանին եւ երկրի կանանց 400-մետր վազքի ախոյանի կոչում ունեցող եւ երկար տարիներ 200 մետր վազքի մրցանիշն իր անունով գրանցած Ռիթա Մելիքեանին, սրահ բերւեց ոտքի ելած ներկաների բուռն ծափողջիւնների ու ոգեւորիչ երաժշտութեան ներքոյ, եւ վերջինիս միջոցով, իբրեւ գլխաւոր ջահակրի, բոցավառւեց 25-րդ Գարնանային խաղերի կրակը:



Խաղերի ընթացքում մարզական ոգով առաջնորդւելու նպատակով մարզիկների ու իրաւարար կազմի ներկայացուցիչների միջոցով կատարւեց երդման կարգ, որից յետոյ ընթերցւեց Հ.Մ.Ա.Կ.-ի Կենտրոնական Վարչութիւնից ստացւած ուղերձը: Յաջորդ բաժնում մարզական ցուցական ելոյթներով հանդէս եկան Միութեան Մարզական Միաւորի մանկա-պատանե-

կան բասկետբոլի խումբը՝ մազիչներ Անգինէ Խաչատըրեանի եւ Հերմոնդ Մարկոսեանի պատասխանատուութեամբ:



Գեղարուեստական բաժնում Միութեան Մշակութային Միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի անդամուհիները ներկայացրեցին բնութեան վերազարթօնքն ազդարարող եւ գարնանամուտն աւետող հետաքրքիր կենդանի պատկեր, որտեղ անտառի բարի փերին, հսկայական եղեւնիները, ծառ ու ծաղիկները եւ բնութեան այլ տարրերը խինդ ու պարով աւետում էին գարնանամուտն ու իրենց ուրախ տրամադրութիւնը փոխանցում եղանակին համահունչ բանաստեղծական կտորների միջոցով, որը համալրւում էր էստրադային խմբի անդամուհիների երգերով, «Կռունկ» պարախմբի սաների պարով, հայոց ազգ. «Քանանեան» աղջկանց դպրոցի էյրոբիկ եւ մարզական կերպարներով խմբերի ցուցական ներկայացումներով:

Գեղարուեստական բաժնի իրականացման համար իրենց համագործակցութիւնն էին ցուցաբերել տկն. Ռիմա Սիմոնեանը, մայեստրո Արմէն Ամիրխանեանը, պարուսոյց Սոսէ Մինասեանը, մարզիչ Թալին Մովսիսեանը, խմբավար Համիկ Ալէքսանդրեանը, Հենրիկ Մելիքեանը, DJ-Վահէն, Սեպուհ Ղուկասեանը եւ Հրանուշ Բաղումեանը: Երեկոն աւարտւեց շնորհակալական խօսքերով ու բարեմաղթանքներով եւ Միութեան շրջափակում հրավառութեամբ:

## ՆՇՒԵՑ ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ 25- ԱՄԵԱԿԸ



2013 թուականի մարտի 20-ին, 25-րդ Գարնանային խաղերի բացման հանդիսութեան աւարտին, Միութեան սրահին կից դահլիճում նշւեց Գարնանային խաղերի 25-ամեակը, որտեղ ներկայ էին Նոր Ջուղայի, Թեհրանի եւ Շահինշահրի պաշտօնական հիւրերը, վետերանները, բացման ծրագիրը իրականացնող պատասխանատուները եւ միաւորների ներկայացուցիչները:

Ներկաներին ողջունեց հանդիսավար Մանիա Ղուկասեանը եւ հրաւիրեց Միութեան արտօնատէր պրն. Թաթուլ Օհանեանին՝ օրւայ առթիւ արտայայտւելու:



Պրն. Օհանեանը հետաքրքիր տեղեկութիւններ փոխանցեց անցեալի մարզական կեանքի մասին եւ թւարկեց այն անձանց անունները, ովքեր մեծ ներդրում են ունեցել Միութեան մարզական կեանքի ձեւաւորման գործին, ապա հետաքրքիր յուշերով ներկաներին մտովի փոխադրեց մի քանի տասնակ տարիներ առաջ, որով ներկաների մեծամասնութիւնը մի պահ ապրեցին անցեալի այն գեղեցիկ օրերը, երբ մասնակից էին Միութեան աշխատանքներին:

Խաղերի ջահակիր խմբի եւ Միութեան արտօնատիրոջ միջոցով կտրւեց օրւայ առթիւ պատրաստւած կարկանդակը, որից յետոյ շքանշաններ յանձնւեցին ջահակիր խմբի անդամներ Ռիթա Մելիքեանին, Սերոժ Խանլարեանին, Ռոստոմ Աղազարեանին, խաղերի հիմնի խօսքի հեղինակ բանաստեղծ Վարանդին, «Իրանահայ Անւանի Մարզիկներ» գրքի հեղինակ Ալֆրեդ Հաւանին, որը սակայն բացակայ էր այդ պահին, Միութեան արտօնատէր Թաթուլ Օհանեանին, անցեալ շրջանի Կենտրոնական Վարչութեան անդամուհիներ Մասիս Մինասեանին, Սեդա Այւազ-Բալեանին, Վահիկ Այւազեանին, Ժորժիկ Ղազարեանին եւ Ռազմիկ Ալեքսանդրեանին: Շքանշաններ յանձնւեցին նաեւ Նորիկ Օհանեանին՝ Միութեան մարզիկների հետ անվճար մարզումներ անցկացնելու համար, եւ երկրի կանանց բասկետբոլի մարզիչ եւ Կենտրոնական Վարչութեան անդամ Այլին Մելիքեանին:

Որպէս հանդիսութեան աւարտ, թեմական առաջ-

նորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը շնորհաւորանքի եւ գնահատանքի խօսքերի կողքին ընդգծեց անցեալը կարեւորելու հանգամանքը, ողջունեց խաղերը վաստակաւոր մարզիկներին նւիրելու կազմակերպիչ յանձնախմբի մտայղացումը եւ ասաց, որ մոռանալ անցեալը՝ նշանակում է հեռանալ արմատներից. սա նաեւ դաստիարակչական նշանակութիւն ունի. նոր սերունդը պէտք է իմանայ, որ կայ անցեալ, որի վրայ պիտի կերտել ապագան: Նա իր յարգանքը յայտնեց բոլոր անցեալի մարզիկներին եւ բոլոր նրանց՝ որոնց միասնական աշխատանքով խանդավառութիւն ստեղծւեց Միութեան շրջափակում: Առաջնորդ Սրբազան Հայրը նաեւ իր յարգանքը յայտնեց ժողովրդին՝ իրենց ներկայութեան համար:

## ԽԱՂԵՐԻ ՓԱԿՈՒՄ

*«Թէեւ այս տարեայ մրցումները կայացան միայն երկու մարզադաշտերում, սակայն ինքնին վկայեց, որ մեր ժողովուրդը, ի մասնաւորի իրանահայութիւնը, իր կազմակերպչական, ազգային եւ նպատակասլաց ըմբռնումներով ի զօրու է մարզիկ-ուհիներին ի մի բերել մէկ գաղափարի շուրջ եւ աշխոյժ ու առողջ մթնոլորտում կազմակերպել մարզական մրցակցութիւն, ինչու չէ նաեւ ստեղծել ընկերակցութիւններ:*



*Բոլորս գիտակցում ենք, որ նման միջոցառում կազմակերպելը դիւրին չէ, այն տարիների փորձառութեան ու ներդրումների կուտակման դրսեւորումն է: Նման միջոցառումներն արժեւորւում են նրանով, որ ծառայում են ազգային նպատակներին, մարդկային բարոյական զարգացմանն ու յանձնառու եւ գիտակից սերնդի դաստիարակութեանը, որոնք անշուշտ ձեռք են բերւում ընտանիքներում, դպրոցներում եւ միութիւններում վիթխարի աշխատանքի ու մարդուժի շնորհիւ, որով երաշխաւորւում է մեր ազգի փայլուն ապագայի կերտման»*,- այսպէս ասաց Իրանի Իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը Գարնայնին խաղերի փակման առիթով, որը կայացաւ մարտի 25-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան մարզասրահում, որից յետոյ հանդիսավարութեամբ Մանիա Ղուկասեանի, մրցանակակիր մարզիկ-ուհիներին յանձնւեց նւաճած մեդալները, գաւաթներն ու գնահատագրերը ձեռամբ թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր, յարգելի պատգամաւորի, Միութեան արտօնատէր՝ պրն. Թաթուլ Օհանեանի, ազգային իշխանութեան, Հայ Դատի Յանձնախմբի, Միութեան Կենտրոնական Վարչութեան, Մարզական Միաւորի եւ Գործադիր յանձնախմբի ներկայացուցիչների:



Մարզական մրցութիւններն աւարտւեցին Սկաուտական Միաւորի Արի-Արենուշական եւ Երէց փաղանքի հատւածի միջոցով դրօշակի իջեցման արարողութեամբ, որին յաջորդեց խաղերի խորհրդանշական կրակի մարումը:

Յիշեցնենք, որ մրցութիւնները տեղի ունեցան բասկետբոլ եւ պինգ-պոնգ մարզադաշտերում, որտեղ պայքարի դաշտ իջան Երեւանի, Թեհրանի, Թաւրիզի, Շահինշահրի եւ Նոր Ջուղայի մարզիկ-ուհիները: Արժէ նշել, որ գեղեցիկ եւ գնահատելի երեւոյթ էր Իրանի բասկետբոլի ազգային հաւաքականի հայ մարզիկների համեստ մասնակցութիւնն այս մրցութիւններում:

Հնգօրեայ խաղերի ընթացքում իրենց անվերապահ համագործակցութիւնը ցուցաբերեցին Մարզական, Երէցների, Մշակութային, Սկաուտական եւ Ուսանողական միաւորները, կարգապահական կազմը, խմբերի մարզիչներն ու պատասխանատուները, իրաւարար կազմը, բուժսպասարկման կենտրոնի բժիշկ-պատասխանատուն եւ բուժքոյրերը եւ անհատներ, որի շնորհիւ իր յաջող աւարտին հասաւ իրանահայ 25-րդ Գարնանային խաղերը:

Խաղերի ընթացքում մարզասրահի նախասրահում Ուսանողական Միաւորը կազմակերպւել էր լուսանկարների ցուցահանդէս, որտեղ այցելուներն առիթ ունեցան դիտելու 25-ամեայ Գարնանային խաղերի եւ ընդհանուր մարզական կեանքի լուսանկարներ, անհատական նւաճումների մեդալներ, գնահատագրեր եւ այլ փաստաթղթեր:

# «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



2012 թուականի աշնանը, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան եւ Համաշխարհային Հայկական Կոնգրեսի համատեղ նախաձեռնութեամբ, «Հայապահպանութեան գործում նշանակալի աւանդի համար» համահայկական ամենամեայ մրցանակաբաշխութեան շրջանակում կայացաւ «Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցը» խորագրով շարադրութեան մրցոյթ՝ նպատակ ունենալով նպաստելու սփիւռքահայ երիտասարդ սերունդների կողմից Հայոց Ցեղասպանութեան եւ դրա հետեւեանքների առաւել ընկալմանը եւ նրանց ներգրաւմանը Հայ Դատի, Ցեղասպանութեան միջազգային ճանաչման, դատապարտման եւ պահանջատիրութեան գործընթացներում:






Սոյն մրցոյթին Նոր Ջուղայից մասնակցել էին՝ Հայոց Ազգային «Քանանեան» աղջ. դպրոցի միջնակարգի աշակերտուհիներ Մեղրի Ղուկասեանն ու Շաղիկ Մատթէոսեանը, որոնք արդիւնքների ամփոփումից յետոյ, արժանանալով կազմակերպիչների բարձր գնահատանքին, արձանագրեցին բացառիկ յաջողութիւն: Շաղիկ Մատթէոսեանը հանդիսացել է առաջին կարգի մրցանակակիր, իսկ Մեղրի Ղուկասեանը՝ երկրորդ, ստանալով համապատասխան դիպլոմներ եւ դրամական պարգեւներ: Անկասկած պահանջատէր սերնդի այս ներկայացուցիչների փայլուն յաջողութիւնն ուրախութիւն, անհուն բերկրանք ու պարծանք է պատճառում ո՛չ միայն պատկան դպրոցի պատասխանատուներին այլ ամբողջ համայնքին:



Հարկ է նշել, որ «Քանանեան» դպրոցի աշակերտների յաջողութիւնները Սպահանի Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի կողմից կազմակերպուած մրցոյթներում, ոչ-պակաս խանդավառութեան պատճառ են հանդիսացել: Ընթացիկ ուսումնական տարեշրջանում աշակերտուհի Շաղիկ Մատթէոսեանը մասնակցելով վեբլագագրութեան մրցոյթին՝ իր ստեղծած վեբլագով, որի հասցէն է Hoghugeensani.blogfa.com, երկրորդ կարգի յաղթող ճանաչեց: Պատմածքագրութեան մրցոյթի արդիւնքի ամփոփումից յետոյ նոյնպէս փայլեցին դպրոցի աշակերտուհիներ Շաղիկ Մատթէոսեանը՝ գրաւելով առաջին տեղը, եւ Արմինէ Առաքելեանը՝ երրորդ հանդիսանալով:

Նշեալ յաջողութիւնների կապակցութեամբ շնորհաւորելով յիշեալ աշակերտուհիներին, նրանց ծնողներին եւ «Քանանեան» դպրոցի պատասխանատուներին, նրանց եւ բոլոր հայ աշակերտներին մաղթում ենք իրենց բացառիկ ձիրքով ու տաղանդով արձանագրել նորանոր յաջողութիւններ եւ առաջընթաց:

# ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՒ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ջ. Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի կազմակերպութեամբ, ընթացիկ ուսումնական տարեշրջանում կայացել են մի շարք միջոցառումներ՝ եկեղեցական ու ազգային-աւանդական տօների նշման կապակցութեամբ եւ այցելութիւններ, հաճելի անակնկալներ մատուցելով երեխաներին:

## ԱՄԱՆՈՐԵԱՑ ՀԱՆԴԷՍ

Մանկապարտէզ-Նախակրթարանի աւանդոյթի համաձայն, դեկտեմբերի 24-ի առաւօտեան, տեղի ունեցաւ «Նախօրեակ» տօնը, ուր Ձմեռ Պապիկն այցելելով մանուկներին՝ նրանց պարգեւեց նուէրներ:



Այս տարի առաջին անգամը լինելով հանդէսին նախորդող օրերին, առանձնաբար դպրոց հրաւիրուեցին խմբակների սաների մայրերը, որոնք իրենց երեխաների հետ միասին պատարստեցին գեղեցիկ եւ պսպղուն զարդեր՝ դասարաններին տօնական տեսք հաղորդելու եւ այն գեղեցկօրէն զարդարելու համար:



Նոր Տարուայ նախօրէին, չորեքշաբթի՝ դեկտեմբերի 26-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում տեղի ունեցաւ աւանդոյթի վերածուած դպրոցի ամանորեայ հանդէսը, որին մեծ խանդավառութեամբ էին պատրաստել սաները:

Սկզբում ողջոյնի խօսքով եւ ամանորեայ բարեմաղթանքներով ելոյթ ունեցաւ դպրոցի տեսչուհի Քառոլին Դիլանչեանը, որից յետոյ կայացաւ երեկոյի առաջին բաժինը՝ աշակերտների գեղարուեստական ներկայացումը: Սոյն ներկայացումը հիմնականում իրագործուեց Նախակրթարանի աշակերտների միջոցով, իսկ ընթացքում նախ Մանկապարտէզի երկու մեծ խմբակները՝ Դեղինները, ապա փոքրերը՝ Մանուշակագոյնը, բեմ ներկայանալով, գեղարուեստական բաժնի տարբեր դրուագներն ընդմիջեցին խմբական համահունչ երգերի եւ արտասանութիւնների կատարմամբ:



Ներս մտան պատմիչները՝ փոխանցելով, որ շուտով հիւր են գալու հեքիաթների հերոսները՝ Կարմիր Գլխարկը, գայլերը, աղուէսներն ու նապաստակները՝ իրենք իրենց մասին պատմելու համար. արարի ամբողջ ընթացքում հերոսները ներս մտնելով՝ սկսեցին պատմել հեքիաթներում իրենց կատարած գործերի մասին, իսկ գայլերը, ովքեր չարութեամբ էին հանդէս եկել միւսների նկատմամբ, ի վերջոյ գիտակցելով իրենց սխալը՝ խօստացան նոր տարուայ ընթացքում լաւ արարքներ բանեցնել: Հերոսների գեղեցիկ երկխօսութեանը յաջորդեց Ձիւանուշիկի եւ Ձմեռ Պապիկի գալուստը: Վերջում գայլերը, աղուէսները եւ նապաստակները, իր նուէրների պարկը ճանապարհին թողած Ձմեռ Պապին օգնեցին գտնել խաղալիքներով եւ մրգերով լեցուն պարկը եւ դրանք նուիրել բոլոր մանուկներին:

Ձեռնարկի երկրորդ բաժնում տեղի ունեցաւ տօնախմբութեամբ, ուր երեխաներն ու իրենց հարազատները հիւրասիրուեցին, պարեցին եւ վայելեցին ուրախ մթնոլորտը:

## ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆ

Ս. Վարդան Զօրավարին երեխաներին առաւել ճանաչեցնելու նպատակով, Մանկապարտէզ-Նախակրթարանի պատասխանատուները չորեքշաբթի՝ փետրուարի 6-ի առաւօտեան, դպրոցի յարկի ներքոյ կազմակերպել էին գեղեցիկ միջոցառում, որտեղ Ծնողական Խորհրդի անդամ Մարինէ Ասատրեանը մանուկներին դիւրըմբռնելի ձեւով նկարագրեց Վարդա-

նանց Պատերազմը: Այնուհետեւ պատմութեանն ուշի-ուշով հետեւող աշակերտներին անակնկալի բերեց զինազգեստներով զգեստաւորուած Վարդան Զօրավարը, իսկ պատմիչն առիթը պատեհ համարելով աշակերտներին մօտկից ծանօթացրեց հերոսի ռազմական զգեստներին:



Վարդան Մամիկոնեանի դերակատարը երեխաներին փոխանցելով իր պատգամը՝ նրանցից իւրաքանչիւրին նւիրեց մի գրքոյկ՝ Վարդանանց Պատերազմին առնչւող նիւթերով ու խաղերով:

Ծրագրի աւարտին երեխաները սիրելի հիւրի պատւին կատարեցին հայրենասիրական երգ եւ արտասանութիւն:

## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանն ինչպէս միշտ ուրախ մթնոլորտում նշւեց Մանկապարտէզ-Նախակրթարանում, երկուշաբթի՝ փետրուարի 11-ի առաւօտեան:



Երեխաների այս սիրելի տօնն անմոռանալի դարձնելու համար, շաբաթներ առաջ ծրագրուել էր մի գողտրիկ միջոցառում, որից բոլորը մեծ բաւականութիւն ստացան: Աշակերտները ուրախ եւ խանդավառուած, Միկի եւ Մինի մկնիկների դիմահարդարումներով վայելեցին անակնկալներով լեցուն միջոցառումը: Չարաճճի ծաղրածուի ներկայութիւնից սաների շուրթերից չհեռացաւ ժպիտը եւ նրանց աչքերում առաջացաւ հրճւանքի փայլ:

Վերջում ծաղրածուի միջոցով բոլոր աշակերտներին նւիրւեցին դպրոցի Ծնողական Խորհրդի ջանքերով Մինի եւ Միկի մկնիկների տեսքով ձեւաւորուած աւանդական աղանձի կապոցները:

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Չորեքշաբթի՝ փետրուարի 13-ի առաւօտեան, դպրոց մտնելու պահին չէիր կարող չնկատել գունաւոր թղթերով ու խայտաղբետ ծաղիկներով զարդարուած Տեառնընդառաջի աւանդական թուփը: Ժամը 9:30-ին, երեխաները եւ ուսուցչուհիները բոլորւեցին դպրոցի բակում, որոնց միացան արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանն ու Ջանիկ սրկ. Ղազարեանը՝ Տեառնընդառաջը նշելու համար: Նախ Քահանայ Հայրը օրւայ խորհրդի կապակցութեամբ խօսեց երեխաների հետ, ապա հաւաքական Տէրունական աղօթքից յետոյ հնչեց տօնին առնչւող շարականներ Տէր Հօր եւ տիարցուի միջոցով: Քիչ անց վառւեց աւանդական թուփը եւ բոլոր երեխաներն ընկերակցութեամբ Քահանայ Հօր, ուսուցիչների եւ Ծնողական Խորհրդի անդամների, շրջելով խարոյկի շուրջ, երգեցին մանկական եւ հայրենասիրական գեղեցիկ երգեր:



Միջոցառման աւարտին բոլորը հիւրասիրւեցին համեղ հրուշակներով եւ մանուկներն ուսուցչուհիների օգնութեամբ թռան խարոյկի վրայից:

## ԾԱՂԿԱԶԱՐԴ

Կիրակի՝ մարտի 24-ի առաւօտեան, Ծաղկազարդի Տօնի առթիւ, Մանկապարտէզ-Նախակրթարանի աշակերտները ներկայացան Ս. Յովհաննու եկեղեցում մատուցւող ս. Պատարագին եւ ունկնդրեցին պատարագչի՝ արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի օրւայ առնչութեամբ պատգամը: Արարողութեան աւարտին մանուկներն ուռենու օրհնած ճիւղերով եւ մոմերով մաս կազմելով պատարագիչ Քահանայ Հօր առաջնորդութեամբ եւ երգչախմբի երգեցողութեամբ հանդիսաւոր թափօրին՝ վերակենդանացրին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԻՒՆ

(*Կարդալ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան վերաբերող լուրերի շարքում, էջ*՝ 23):



# ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆՇՈՒՄԸ Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի, երեքշաբթի՝ ապրիլի 9-ի երեկոյեան, Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, ներկայութեամբ դպրոցի սաների մայրերի ու տատիկների, մեծ սիրով յագեցած միջոցառմամբ նշուեց սրբութեան եւ նուիրումի խորհրդանիշ հայ մօր տօնը:

Սկզբում իրագործուեց գեղարուեստական բաժինը՝ կատարմամբ դպրոցի թոթովախօս աշակերտների: Նախ բեմը տրամադրուեց Մանկապարտէզի մեծ եւ փոքր խմբակներին՝ երկու Դեղիններին եւ Մանուշակագոյնին, որոնք մօրը նուիրուած երգերի եւ արտասանութիւնների կատարմամբ ջերմութիւն եւ ուրախութիւն պարգեւեցին բոլորին: Իսկ ընթացքում մայրերին ուղղուած մեծարանքի սրտաբուխ խօսքերով ու բարեմաղթանքներով առանձնաբար ելոյթ ունեցան Դեղին խմբակների բոլոր սաները: Այնուհետեւ հերթը հասաւ Նախակրթարանի աշակերտներին, ովքեր բեմ ներկայացան պարային գեղեցիկ շարժումներով: Նրանք նոյնպէս իրենց մայրերի նկատմամբ ունեցած սէրն ու յարգանքը երեւան հանեցին՝ երգերից եւ արտասանութիւններից կազմուած մի փունջով:

Գեղարուեստական բաժնի աւարտին շնորհաւորական խօսքով եւ բարեմաղթանքներով հանդէս եկաւ տեսչուհի Քառոլին Դիլանչեանը, որից յետոյ նա հրաւիրեց տարիների կրթական գործիչ Հռիփսիկ Սիմոնեանին՝ օրուայ առնչութեամբ դասախօսելու:



Տկն. Սիմոնեանն իր հիացմունքն արտայայտեց սաների ելոյթների եւ դպրոցի պատասխանատուների կազմակերպած ձեռնարկի կապակցութեամբ: Նա նշեց, որ մայրն աւելի է սրբացել Աստուածամօր մայրութեան աւետումից յետոյ եւ աւելացրեց. «*Աստուած երբ ստեղծեց տղամարդուն, ինչ-որ մի բան պակասում էր՝ սէր տածելու, բազմանալու, փայփայելու եւ ցաւի դիմաց համբերութեամբ հանդէս գալու համար, եւ այդ պատճառով Տէրն ստեղծեց կնոջը՝ նրան տալով մայրութեան կարողութիւն: Մայրութիւնն առաքելութիւն է. ինչպէս առաքեալներն են ժողովրդի մէջ տարածել լաւն ու բարին, նոյնպէս մայրն էլ միշտ զգօն լինելով՝ պատրաստ է առաջնորդելու իր զաւակներին*»: Տկն. Սիմոնեանն անդրադառնալով մօրը որպէս սրբութիւն գովաբանած երգերին, խօսքերին, բանաստեղծութիւններին եւ բազմաթիւ գեղարուեստական կատարումներին, կարեւորութեամբ ընդգծեց նուիրումի եւ սիրոյ խորհրդանիշ հայ մօր առաքելութիւնը եւ ասաց. «*Այսօր հայ մայրերի տօնն է: Մենք մեր տօնն առանձնացրել ենք համաշխարհային մայրերի տօնից, որովհետեւ բացառիկ է հայ մօր պարտականութիւնը: Աշխարհում որեւէ ազգ կամ մայր չի կարող հանդգնել հակառակն ապացուցելու, եթէ ծանօթ լինի հայոց պատմութեանը*»: Նա իր խօսքի շարունակութեան մէջ ակնարկելով մեր պատմութեան մէջ հայ մօր կատարած սխրագործութիւններին եւ անձնազոհութիւններին, շարունակեց. «*Անցեալից խօսելը շատ լաւ է. մեր երեխաները նոյնպէս իրաւունք ունեն լսելու, թէ ինչ են կատարել իրենց մայրերը: Մենք եւս պէտք է պսակենք այնպիսի փառքեր եւ տանք այնպիսի արդիւնքներ, որ մեր զաւակները հեռու անցեալը յիշելու հետ միաժամանակ յիշեն նաեւ մօտ անցեալը՝ իրենց մայրերին*»: Տկն. Հռիփսիկ Սիմոնեանը վերջում դիմելով երիտասարդ մայրերին՝ յորդորեց հեռու մնալ արեւմտեան դաստիարակութիւնից եւ զաւակներին սնել հայոց լեզուով եւ հայկական սրբութիւններով ու մշակոյթով:



Դասախօսութեան աւարտին ներկաներն առիթ ունեցան արտայայտուելու օրուայ առթիւ՝ բարեմաղթանքներով եւ զաւակին դաստիարակելու առնչութեամբ սեփական տեսակէտներով:

Վերջում տեղի ունեցաւ ընդունելութեամբ:

## §Â. Â² ¸¾àêº²Ü¦ ä²î²Üº Î²Ü ØÆàôÂº²Ü ²Ü¸²ØÜºðÆ ²Úòº Èàô ÂÆôÜÀª ²¼¶²ÚÆÜ- Ð²ê²ð²Î²Î²Ü ¶àðÌÆâ Â. Â²¸¾àêº²ÜÆ ÞÆðÆØÆÜ

«Թ. Թադէոսեան» Պատանեկան Միութեան անդամները, 2013 թուականի ապրիլի 1-ի առաւօտեան, այցելեցին Նոր Ջուղայի Հայոց Ազգային Գերեզմանատուն, որտեղ ձեռամբ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեց ազգային-հասարակական գործիչ, Հ.Յ. Դաշնակցութեան զինուոր եւ սոյն Միութեան հիմնադիրներից Թադէոս Թադէոսեանի շիրիմի մօտ՝ հանգուցեալի եւ առ յաւէտ հեռացած միւս զինակից ընկերների յիշատակին: Արարողութեանը ներկայ էին նաեւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դաւթեանը եւ Պատանեկան Միութեան Վարիչ Մարմինը:



Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ, «Թ. Թադէոսեան» Պատանեկան Միութեան Վարչութեան խօսքն ընթերցեց Լաուրա Խուդաբախշեանը, որտեղ անդրադառնալով հանգուցեալ ընկերոջը, ընդգծեց. *«Նա մարմնացումն էր անձնազոհութեան եւ բոլոր այն ուեալների, որոնք հարկաւոր են իրական դաշնակցականին»:* Խօսքի շարունակութեան մէջ նա աւելացրեց. *«Մենք՝ Թադէոս Թադէոսեանի որդիներս, ջանք չենք խնայի՝ նրա ուխտն իրականացնելու համար: Մենք շարունակելու ենք Թադէոսեանի եւ նրա զինակիցների սուրբ գործը ամենայն անձնազոհութեամբ, նուիրուածութեամբ, լրջութեամբ եւ բոլոր այն յատկանիշերով, որոնցով օժտուած են ազգի նուիրեալները»:*

Այնուհետեւ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը նոյնպէս կարեւորելով ազգին ծառայելը, յորդորեց ներկայ պատանիներին՝ ո՛չ միայն յիշել նուիրեալներին, այլ շարունակել նրանց ճանապարհը:

## î º ² èÜÀÜ ¸ ² è ² æÆ î úÜ ² Î ² î ² ðàôÂÆôÜÀ Þ ² ÐÆÜÞ ² Ðð àôØ

Չորեքշաբթի՝ 2013 թուականի փետրուարի 13-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահն ու բակը լեցուն էր հաւատացեալներով, ովքեր տօնում էին մանուկ Յիսուսի ընծայումը տաճարին: Շահինշահրի հոգեւոր հովիւ հոգշ Տ. Անանիա վրդ. Գունճնեանի գլխաւորութեամբ եւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբյեանի մասնակցութեամբ կատարուեց նախատօնական երեկոյեան ժամերգութիւն, ապա սուրբ Խորանից վառուած մոմով, որը նշանակում է մեր Տիրոջ եւ Փրկչի աշխարհ բերած լոյսը՝ որպէս կեանքի եւ փրկութեան խորհրդանիշ, վառուեցին եկեղեցում ներկայ նորապսակ զոյգերի եւ հաւատացեալների ձեռքում գտնուող մոմերը:



Նախատօնակի արարողութիւնից յետոյ, օրւայ առիթով յաւուր պատշաճի քարոզեց հոգեշնորհ Հայր Սուրբը եւ իր խօսքի մէջ ընդգծելով այսաց. *«Մեր Փրկիչը՝ Ինքն Իր անձով լոյս ու ջերմութիւն է բերում հաւատացեալներին, եւ մարդիկ, ովքեր այսօր Ս. Խորանից մոմեր են վառում, մանուկ Յիսուսի հաւատի լոյսն ու ջերմութիւնն են տանում իրենց տները: Թող յաւերժ վառուի եւ միշտ անմար մնայ մեր հաւատի լոյսը»:*

Ապա դպրոցի բակում տեղի ունեցաւ աւանդական հրավառութիւնը: Շահինշահրի չորս նորապսակ զոյգերը վառեցին խարոյկը, որի շուրջ համախմբուած ժողովուրդին խորհուրդ արած հաւատացեալների միջոցով բաժանուեցին տարբեր անուշեղէններ, հրուշակներ եւ օրւայ համապատասխան ուտելիքներ:

Եկեղեցական արարողութիւնից եւ աւանդական հրավառութիւնից յետոյ տեղի ունեցաւ մանուկների օրհնութիւն եւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբյեանի միջոցով եկեղեցու Ս. Խորանի առջեւ օրհնուեցին եւ Աստծուն ընծայուեցին նորածին մանուկներ:

Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան միջոցով հիւրասիրութիւն էր կամակերպւել նորապսակ զոյգերի համար, որին ներկայ նաեւ էին արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբյեանը եւ Շահինշահրի Վարչու-

թեան անդամները: Արժն. Տէր Հայրը եւ Շահինշահրի Վարչութեան անդամները նորապսակ զոյգերին յանձնեցին պատրաստուած նուէրներ եւ նրանց ցանկացան յաջողութիւն, փոխադարձ սէր ու յարգանք, եւ իրենց խրատներով ու աղօթքներով երիտասարդներին երկար կեանք ու բարեկեցութիւն մաղթեցին: Նորապսակներն իրենց հերթին խոստացան արդարացնել բոլորի յոյսերն ու սպասումները:

Ի պատիւ Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան, պէտք է ասել, որ հիւրասիրութեան աշխատանքը կատարուել էր գեղեցիկ ու ճաշակով:



# ՄԻՋԻՆՔԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ



2013 թւականի մարտի 6-ին, Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութիւնը տօնում էր Միջինքը: Արեւագալի արարողութիւնն աւարտուելուն պէս, բոլոր ներկաները տեղ զբաղեցրին սրահում: Տօնակատարութեանը մասնակցում էր Շահինշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, համայնքի Վարչութեան անդամները: Հանդէսը բացուած յայտարարեց եւ բոլորին բարի գալուստ մաղթեց Միութեան նախագահ տկն. Անահիտ Օհանեանը: Նա հակիրճ բայց բովանդակալից ներկայացրեց Միջինքի իմաստն ու աւանդական սովորութիւնները:



Այնուհետեւ մատուցւեցին աւանդական կերակուրներ՝ մախոխ, բանջարով ապուր, հաց ու պանիր եւ գարնանաբոյր կանաչեղէն:

Սեղանն օրհնեց եւ Միջինքի մասին խօսեց հոգեշնորհ Հայր Անանիա Գուճանեանը, ասելով. «Միջինքն ըստ էութեան տօն չէ, բայց այն զգուշացնում է հաւատացեալներին որ հասել ենք Մեծ Պահքի կէսին եւ անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր հաւատացեալ նայի իր անցած պահքին, ստուգի իր հաւատը, հոգով մաքրւի եւ շարունակի պահքը»:

Ներկաները ճաշակեցին սեղանի բարիքներից, որն ուղեկցւեց երգերով ու արտասանութիւններով: Իրենց գեղեցիկ ձայնով ու երգերով ներկաներին հաճոյք պատճառեցին պրն. Հրանդ Ղարախանեանը եւ տկնք. Լիդա Շահբազեանը, Մագի Յարութիւնեանը եւ Էլիզ Շահիջանեանը: Արտասանեցին տկնք. Նւարդ Փանոսեանն ու Քարմէն Շահիջանեանը:

# Ü.æ. Ð²Ú Ø.Ø. §²ð²ð²î¦ ØÆàôÂº²Ü Þ²ÐÆÜÞ²ÐðÆ Ø²êÜ²ÖÆôÔÆ Üàð Î°Ü îðàÜ²î°ÔÆÆ ÐàÔúðÐÜ¾Ø



Ուրբաթ՝ 2013 թուականի մարտի 15-ի առաւօտեան ժամը 11-ին, Շահինշահրի հայ համայնքի անդամները եւ Նոր Ջուղայից հրաւիրեալ անձինք ի մի էին եկել Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի պողոտայում գտնուող ազգապատկան հողատարածքի վրայ, որտեղ գովազդագրերով եւ պաստառներով յայտնւում էր Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի Մասնաճիւղի նոր կենտրոնատեղիի կառուցման աւետիսը:



Նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, ներկայութեամբ Շահինշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների, ազգային մարմինների, Հայ Դատի Նոր Ջուղայի Յանձնախմբի, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական եւ Շահինշահրի Մասնաճիւղի վարչութիւնների անդամների, «Արարատ» Միութեան արտօնատէր պրն. Թաթուլ Օհանեանի եւ բազմաթիւ հայորդիների, տեղի ունեցաւ հողօրհնէքի կրօնական արարողութիւնը, որից յետոյ ազգային մարմինների պատասխանատուների միջոցով կատարուեց մարզա-մշակութային համալիրի շինարարութեան աշխատանքների բացումը:



Հողօրհնէքի արարողութիւնից յետոյ, բոլոր ներկաները հրաւիրուեցին Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահ, որտեղ կազմակերպուել էր պատշաճ ծրագիր՝ նշելու այս բարեբաստիկ եւ ուրախ առիթը: Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը շնորհաւորանքի եւ հրճւանքի խօսքերով ձեռնարկի բացումը կատարեց եւ արտայայտուելու համար հերթաբար ամբիոնի մօտ հրաւիրեց Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան նախագահ պրն. Վարուժ Մինասեանին եւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանին:

Պրն. Մինասեանը, նոր կենտրոնի կառուցումը Շահինշահրի հայ համայնքի պատմութեան մէջ կարեւոր ձեռքբերում եւ հայ երիտասարդութեան դաստիարակութեան աշխատանքի ծիրում անկիւնադարձային երեւոյթ համարելով, բացատրութիւններ փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի եւ Թեմական Խորհրդի որոշումների մասին՝ Շահինշահրում կատարուելիք շինարարական նախագծերի փաթեթի վերաբերեալ: Նա նշեց, որ շինարարական աշխատանքները յետագային համալրուելու են Շահինշահրում հայոց եկեղեցու շէնք կառուցելով եւ հայոց դպրոցի հիմ-

նական նորոգութիւններով:



Պրն. Մինասեանն իր խօսքերի մէջ շեշտելով այն հանգամանքը, որ Սպահանի Հայոց Թեմի հայութիւնը համարւում է մէկ ընտանիք ու միասնական համայնք, անհրաժեշտ նկատեց առգոյ հնարաւորութիւններն ու միջոցները համահաւասար կերպով տրամադրուեն Թեմի բոլոր անդամներին եւ աւելացրեց. «*Երկու տարի առաջ Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի ընդունած որոշումը տնտեսական ծանր պայմանների պատճառով յետաձգւեց, սակայն մեր նկարագրին յարիր չէր ընդունել մի որոշում եւ մոռանալ այն՝ առանց իրականացման. հետեւաբար, Թեմական Խորհուրդը կենսական համարելով Շահինշահրում մարզա-մշակութային համալիրի կառուցումը, նիւթական հնարաւորութիւն ձեռք բերելուց անմիջապէս յետոյ, անվարան որոշեց սկսել աշխատանքը: Շահինշահրի հայ համայնքը մարզա-մշակութային արդիական կենտրոնատեղի ունենալու արժանի համայնք է, եւ յատկապէս հայ երիտասարդութեան հայեցի առողջ դաստիարակութեան գործի համար արժէ մեծ գումարներ ծախսել*»:



Այնուհետեւ պրն. Վարուժ Մինասեանը, շնորհաւորանքի խօսքեր ուղղելով Շահինշահրի հայ համայնքին, յոյս յայտնեց, որ շինարարական աշխատանքներն ընթանալու են անարգել եւ շուտով Շահինշահրի ժողովուրդը, յատկապէս երիտասարդութիւնը, առիթ կունենայ վայելելու յարմար եւ օգտաշատ հնարաւորութիւններով օժտուած կենտրոնատեղին:



Արտայայտութիւնների շարանի աւարտին իր ոգեւորիչ եւ հայրական խօսքը փոխանցեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը: Նա գնահատեց եւ շնորհակալութիւն յայտնեց Սպահայն Հայոց Թեմի ազգային իշխանութեանը, որը տնտեսական ծանր պայմաններով հանդերձ քաջութիւնն ունեցաւ ձեռնարկել Շահինշահրի համար նախատեսուած շինարարական եւ նորոգութեան աշխատանքներին: Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքերի մէջ ասաց. «*Մենք՝ հայերս, ոտնակոխուած իրաւունքներ ունենք եւ մեզանից խլւել են մեր պապենական եւ պատմական հողերի մեծ մասը, որի պատճառով լաւ գիտակցում ենք, թէ ի՛նչ է նշանակում «հող»: Այսօր կրօնական յատուկ արարողութեամբ օրհնեցինք այն հողը, որի վրայ պէտք է կառուցւի հայ նոր սերնդին ազգային-մշակութային եւ մարզական ազնիւ ոգով դաստիարակութիւն տւող համալիրը, որի առողջ մթնոլորտում հայ երիտասարդը հնարաւորութիւն կունենայ հայօրէն մեծանալ եւ հասակ առնել՝ դառնալով գիտակից եւ արժանի հայորդի: Շահինշահրի հայ համայնքն արժանի է նոր պայմաններին համապատասխան եկեղեցի, մազա-մշակութային կենտրոն եւ հայոց դպրոց ունենալ*»:

Հանդիսութեան ընթացքում կատարւեց համեստ մի հիւրասիրութիւն եւ հրաւիրուած անձանց միջոցով այս ուրախ առիթի համար հնչեցին երգեր:

# ԱՒԱԳ ՇԱԲԱԹՒԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Մեր Փրկչի երկրաւոր կեանքի վերջին տնօրինութիւնները կարելի է խմբել դրանցից կարեւորագոյնի՝ Յարութեան անուան տակ, որ կոչւում է նաեւ Զատիկ: Յարութեան այս տօների խումբն ընդգրկում է 64 օրերի մի շրջան, որի մէջ են պարունակւում Ղազարոսի յարութեան շաբաթը, Ծաղկազարդի կիրակին, Աւագ Եօթնեակը, Զատկի կիրակի օրւանից մինչեւ Համբարձման տօնը եւ ապա մինչեւ Հոգեգալստեան կիրակի օրւայ տասնօրեակը եւ յաջորդող Եղիական պահոց վեցօրեակը:



Այդ շրջանի մուտքն է Ղազարոսի յարութեան յիշատակը, իբրեւ նախերգանք Փրկչի Յարութեան հրաշալի դէպքի: Փրկագործական այդ հրաշալի տեսարանի առաջին հանգրւանն է յաջորդ օրը տօնւող Ծաղկազարդը: Ծաղկազարդը յիշատակութիւնն է Յիսուսի առաջին անգամ մեսիաբար Երուսաղէմ Մուտքի: Մեր հին գրականութեան մէջ, աւետարանական պատմութեան ակնարկութեամբ, այն յաճախ կոչւում է Արմաւենեաց Կիրակի:

Այս տարի, կիրակի՝ մարտի 24-ի առաւօտեան Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում Ծաղկազարդի տօնի առթիւ Ս. Պատարագ մատուցեց ձեռամբ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի: Ս. եւ անմահ պատարագի աւարտին պատրաստւած եւ Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան անդամների միջոցով զարդարւած ձիթենու ճիւղերն օրհնեցին հոգշ. Հայր Սուրբի միջոցով եւ բաժանեցին ներկայ հաւատացեալներին, ովքեր այն տուն տարեցին ջերմեռանդութեամբ եւ այն խոր համոզումով, որ այդ օրհնութիւնը լինելու է նաեւ իրենց տան վրայ:

Ծաղկազարդը պիտակաբար կոչւում է նաեւ Գալուստ, իբրեւ Փրկչի մեսիաբար Երուսաղէմ գալուստի եւ չարչարանքների խորհրդանիշ: Այս պատճառով, դրան կցւում է նաեւ Քրիստոսի երկրորդ կամ վերջին գալստեան յիշատակը, որ կատարւում է երեկոյեան պաշտամունքի միջոցին, ի պատկեր վերջին դատաստանի եւ աստւածային արդարութեան: Կիրակի երեկոյեան, բազմաթիւ հաւատացեալների ներկայութեամբ տեղի ունեցաւ Դռնբացէքի խորհրդաւոր արարողութիւնը, որի ընթացքում հոգշ. Հայր Սուրբը երգեց «Բա՜ց մեզ, Տէ՜ր» յուզիչ շարականը եւ խորհուրդ արած կանանց միջոցով բացւեց 40 օրեր ի վեր փակւած մնացած Ս. Խորանի վարագոյրը:



Ծաղկազարդի յաջորդող եօթնօրեակը կոչւում է Աւագ Շաբաթ, որի առաջին երեք օրերը առանձնապէս մասնաւոր տնօրինական յիշատակութիւնների չեն կապւում: Աւագ երեքշաբթի օրը յատկապէս ուշադրութեան առարկայ է դառնում: Այդ օրը Շահինշահրում տեղի ունեցաւ երեկոյեան արարողութիւն, որի ընթացքում ընթերցւեցին Հին Կտակարանից բաժիններ՝ մարդու անկման կամ մեղքի, Ջրհեղեղի եւ Նոյեան Տապանի միջոցով փրկւած արդարների մասին, ապա օրւայ աւետարանական հատւածը, որն ընթերցւեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով՝ երկնքի արքայութեան մասին Յիսուսի պատմած Տասը Կոյսերի առակի վերաբերեալ: Աւետարանի ընթերցման պահին եկեղեցական շապիկ հագած տասը օրիորդներ, ովքեր ներկայացնում էին առակի հինգ իմաստուն եւ հինգ յիմար կոյսերը, վառւած մոմերով կանգնեցին Ս. Խորանի առջեւ: Արարողութեան աւարտին հոգշ. Հայր Սուրբն իր քարոզի մէջ ակնարկելով օրւայ խորհրդին, բացատրելով առակի իմաստը եւ շեշտելով բարեգործութեամբ ու առաքինի կեանք վարելու եւ յաւիտենական կեանքին արժանանալու համար մեր կեանքի ընթացքում «Պաշար» հաւաքելու մասին, խնդրեց Աստծուն, որ յատկապէս արարողութեանը ներկայացած եւ մասնակից դարձած բոլոր օրիորդներին իմաստութիւն պարգեւի:

Մարտի 28-ը՝ Աւագ Հինգշաբթի օրը, Տէրունական Ընթրիքի եւ Ս. Հաղորդութեան Խորհրդի տօնն էր: Առաւօտեան ժամը 10:30-ին Ս. եւ անմահ Պատարագ

մատուցւեց հոգշ. Հայր Սուրբի միջոցով, տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ ներկաներն ստացան Ս. Հաղորդութիւն:



Նոյն օրուայ երեկոյեան, յատուկ հանդիսաւորութեամբ կատարւեց Ոտնալւայի արարողութիւնը: Արարողութեանը նախագահեց եւ Ոտնալւայի կարգը կատարեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Առաջնորդ Սրբազան Հայրը, Ոտնալւայի արարողութիւնից առաջ ներկայացրած իր քարոզում անդրադառնալով աւետարանական պատմութեանը եւ խոնարհութեան խորհրդին, իրար սիրելը, եղբայրաբար յարգելը եւ հեզ ու խոնարհ նկարագիր ունենալը իւրաքանչիւր քրիստոնեայի պարտականութիւն եւ կոչում համարելով, յորդորեց բոլորին՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ հետեւորդներն ու աշակերտները լինել: Արարողութեան ընթացքում օրհնուած իւղը, որը պատրաստուած էր Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան անդամների միջոցով, բաժանւեց հաւատացեալ ժողովրդի միջեւ:



Ոտնալւայի կարգից յետոյ, դարձեալ թեմակալ առաջնորդի նախագահութեամբ կատարւեց Խաւարման երկարաժամ կարգը, որի ընթացքում առաջնորդ Սրբազան Հօր եւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով ընթերցւեցին աւետարանական եօթը ընթերցումները՝ Քրիստոսի մատնութեան, չարչարանքի եւ խաչելութեան վերաբերեալ: Արարողութեան ընթացքում, երբ «Փառք ի բարձունս»-ի աւարտին մարեցին եկեղեցու բոլոր լոյսերը եւ երգւեց յուզիչ եւ հոգեզմայլ «Ուր ես մայր իմ»-ը, մթութեան մէջ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը իր հայրական խօսքը փոխանցեց ներկայ բազմաթիւ հաւատացեալներին:

Աւագ Շաբաթ օրը մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի թաղման եւ գերեզմանի կնքման յիշատակի օրն է: Ճաշի Պատարագը այդ օրը կատարւում է երեկոյեան եւ այդ պատճառով կոչւում է Ճրագալոյց. որովհետեւ օրուայ այն պահն է, երբ ընտանեկան յարկի մէջ վառւում են լոյսերը, սկսած է լինում յաջորդ օրը:

Ճրագալոյցի առթիւ, շաբաթ՝ մարտի 30-ին, Ս. Պատարագ մատուցւեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք, որից յետոյ հաղորդւեցին ներկայ հաւատացեալները: Այդպիսով իր աւարտին հասաւ Մեծ Պահոց ժամանակաշրջանը եւ արարողութեան վերջաւորութեանը հնչած «Այսօր յարեաւ ի մեռելոց» շարականի բառերով Քրիստոսի յարութեան աւետիսը փոխանցւեց բոլորին:



Կիրակի՝ 2013 թւականի մարտի 31-ին, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ տօնի՝ Ս. Զատկի առթիւ հանդիսաւոր Ս. եւ անմահ Պատարագ մատուցւեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով: Ս. Պատարագի ընթացքում ընթերցւեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի պատգամը Ս. Զատկւայ տօնի առթիւ: Ս. Պատարագի ընթացքում տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք, եւ Ս. Հաղորդութիւն ստացան գրեթէ բոլոր ներկաները:

Ս. Պատարագից յետոյ, հայոց դպրոցի դասարանների միջանցքում Զատկական տօնի առթիւ ժողովրդի շնորհաւորանքներն ընդունեցին հոգշ. Հայր Սուրբն ու Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անդամները: Դպրոցի բակում, յատկապէս մանուկ-պատանիներն զբաղւում էին աւանդական հաւկթախաղով:

Հարկ է նշել, որ Աւագ Շաբաթւայ եկեղեցական բոլոր արարողութիւնների երգեցողութիւնները կատարւեցին Շահինշահրի «Նարեկ» երգչախմբի միջոցով:

# ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ ԱՆԴՐԱՆԻԿ ՁԵՌՆԱՐԿ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐՈՒԱՆ»

Առ ի գործադրում Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի հռչակագրի թելադրանքների, որով Վեհափառ Հայրապետը 2013 թուականը հռչակել էր «Հայ Մօր Տարի» եւ պահանջել պատշաճ միջոցառումներով արժեւորել եւ մեծարել հայ մօրն ու նրա դերակատարութիւնը հայ ազգի կեանքում, Շահինշահրի հոգեւոր տէսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի եւ Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան յատուկ կարգադրութեամբ, կեանքի է կոչուել «Հայ Մօր Տարուայ» Նշման Շահինշահրի Յանձնախումբը, որի անդամներն են ըստ հետեւեալի.

Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեան՝
նախագահ
Տկն. Վարդուհի Պօղոսեան՝
փոխ-նախագահ
Օրդ. Էլինա Փիլոսեան՝
քարտուղար
Տկն. Լիդա Շահբազեան՝
գանձապահ
Տկն. Անիթա Խաչատրեան՝
հաշուապահ
Տկն. Իսկուհի Դեհբաշեան
Տկն. Վալենթին Թորոսեան
Տկն. Ռոզաննա Նալբանդեան
Տկն. Լինա Փիլոսեան
Տկն. Լորեթա Կիրակոսեան
Պրն. Ռազմիկ Մարկոսեան՝
Շահինշահր Հայ Համայնքի Վարչութեան կապ

Յանձնախմբի նախատեսած ծրագրերի անդրանիկ միջոցառումն ու մեկնարկն եղաւ հինգշաբթի՝ 2013 թուականին ապրիլի 11-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում «Մայրերի Օր»-ւայ առթիւ կազմակերպուած երաժշտախառն ուրախ երեկոն:

Ծրագրում ներկայ էին հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անդամները, մայրեր՝ իրենց ամուսիններով եւ Նոր Ջուղայից ու Շահինշահրից բազմաթիւ մարդիկ: Ծրագրին ընդառաջել էին



կազմակերպիչներին անակնկալի բերած մեծաթիւ ժողովուրդ, եւ սրահում տեղ չլինելու պատճառով հարկադրաբար միջանցքում եւ բակում նոր սեղան-աթոռներ էին աւելացուել:

Ծրագրի բացումը կատարեց տկն. Վարդուհի Պօղոսեանը, կազմակերպիչ Յանձնախմբի կողմից շնորհակալութեան եւ շնորհաւորանքի խօսքեր փոխանցելով ներկաներին:

Օրուայ համար նախատեսուած էին Շահինշահրի շնորհալի երիտասարդների միջոցով կատարուող երգերի եւ ասմունքների համարներ նաեւ խանդավառութիւն եւ ուրախ մթնոլորտ ստեղծող երաժշտութիւն: Տկն. Պօղոսեանն ասմունքելու համար հերթաբար հրաւիրեց Թենի Յովսէփանին, Արսինէ Աղախանեանին եւ Փինիկ Փանոսեանին, ովքեր արտասանեցին «Այդ մենք ենք գալիս» բանաստեղծութիւնը, Արգամ Նազարեանին եւ Արգին Ղարիբեանին՝ ովքեր «Մայրս» բանաստեղծութիւնը ձօնեցին հայ մայրերին, նաեւ ինքը՝ տկն. Պօղոսեանը հայ մայերին նուիրեց «Մօր սիրտը» բանաստեղծութիւնը, ապա իրենց դիւթիչ ձայնով բեմ ներկայացան Արութին Հախնազարեանը՝ «Անգին մայրեր», Անդրէ Խաչատրեանը՝ «Մօր սէրը», Սոնա Մինասքանեանը եւ Արութիւն Հախնազարեանը՝ զուգերգ «Հայոց մայրեր», Նոռա Աղախանեանը եւ Անդրէ Խաչատրեանը՝ զուգերգ «Մայրս» եւ Այլին Քեշիշեանը՝ «Մայր» երգերով: Անհատ երգիչների շարքն աւարտեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով հայ մայրերին նուիրուած «Մայր իմ սուրբ ու բարի» գեղեցիկ երգով: Ասմունքների եւ երգերի կատարումների առաջացրած գոհունակութիւնը մեծ էր հանդիսատեսի մօտ. դրա ապացոյցը բուռն ծափահարութիւններն եւ ուրախութեան կանչերն էին:



Գեղարուեստական բաժնից յետոյ, ներկաները հիւրասիրուեցին Յանձնախմբի անդամների միջոցով պատրաստուած պատառիկներով:

Այնուհետեւ բեմը տրամադրուեց տաղանդաւոր երիտասարդներ Մարտիկին եւ Սեպուհին, ովքեր իրենց ուրախ երգ-երաժշտութեամբ պարի հրաւիրեցին ներկաներին:

Ուրախ մթնոլորտն աւելի գեղեցկացաւ եւ խորհրդաւոր դարձաւ, երբ «Հայ Մօր Տարուայ» Նշման Շահինշահրի Յանձնախումբը գեղե-

ցիկ մի մտայղացումով բեմ կանչեց ներկայ բոլոր այն մայրերին, որոնց ծննդեան թւականը ապրիլի 7-ն էր. նրանց համար պատրաստուել էր տարեդարձի կարկանդակ: Յանձնախմբի կողմից շնորհաւորանքներ եւ բարեմաղթութիւններ փոխանցւեցին նրանց: Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանն եւս շնորհաւորելով նրանց, իր գնահատանքի խօսքերը փոխանցեց բոլոր հայ մայրերին, նրանց մաղթելով քաջառողջութիւն, երկար կեանք եւ երջանկութիւն: Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքում յատուկ շեշտեց. «*Մայրը մեզ համար սրբութիւն է: Ինչքա՞ն էլ գովասանքներ հիւսեն մօր համար, տակաւին քիչ են ճշմարտապէս եւ բաւարար կերպով երախտագիտութիւն յայտնելու նրան: Աղօթում եմ, որ Աստուած ուրախ եւ առողջ պահի մեր մայրերին եւ նրանց կեանքը լցնի իրենց զաւակներով ուրախանալու եւ հպարտանալու պահերով: Թող որ մեր մայրերի աչքերն արտասուք չտեսնեն, եւ եթէ լինի այդպիսին, ապա այդ արտասուքները միայն ու միայն իրենց զաւակների յաջողութեան եւ երջանկութեան համար թափւող սուրբ կաթիլներ լինեն*»: Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքերի շարունակութեան մէջ յոյս յայտնելով, որ Յանձնախմբի գալիք ձեռնարկներն եւս ընդառաջւելու են նոյն այդ օրւայ խանդավառութեամբ, շնորհակալական խօսքեր ուղղեց Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեանը՝ Յանձնախմբի կեանքի կոչման եւ համագործակցութեան համար, «Հայ Մօր Տարւայ» Յանձնախմբի անդամներին՝ ովքեր առաջին իսկ պահերից լրջութեամբ նւիրւեցին իրենց վստահւած աշխատանքին, համայնքի տաղանդաշատ ասմունքողներին եւ երգիչ-ուհիներին ու երաժիշտներին՝ ովքեր ուրախ պահեր ապահովեցին հանդիսութեան համար:



Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի արտայայտութիւններից յետոյ տեղի ունեցաւ Յանձնախմբի կողմից կազմակերպւած բախտախաղի վիճակահանութիւնը եւ յաղթողը պարգեւատրւեց Ս. Աստւածածնի պատկերով գեղեցիկ մի շրջանակով: Ապա դարձեալ բեմը տրամադրւեց երաժիշտներին, ովքեր ուրախ մթնոլորտ ու տրամադրութիւն ապահովեցին մինչեւ գիշերւայ ժամը 11:00-ը:

## ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՅԱՐԿԻ ՏԱԿ

2013 թւականի ապրիլի 10-ի առաւօտեան Շահինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սաները մեծ ուրախութեամբ լցւած իրենց պարտքը կատարեցին մայրերի տօնի առիթով: Ծրագրում ներկայ էին Շահինշահրի հոգեւոր տէսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչները, սաների ծնողները եւ տատիկները:

Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուհի տկն. Ալիս Մկրտչեանը՝ բարի գալստեան խօսքերով եւ շնորհաւորանքով՝ թանկագին տօնի կապակցութեամբ եւ ապա բեմ հրաւիրելով օրւայ բանախօս հոգշ. Հայր Սուրբին, տօնի առիթով իր պատգամը փոխանցելու, որն իր հերթին շնորհաւորելով մայրերի տօնը նշեց, որ այս մասին խօսելու համար դժւարութեամբ են յարմար բառեր գտնւելու: Նա իր խօսքում նշեց. «*Մօր մասին խօսելն առաջին հերթին մեծ պատասխանատւութիւն է եւ երկրորդ՝ մօր մասին խօսել նշանակում է խօսել մի սրբութեան մասին*»: Ապա մէջբերելով բանաստեղծի խօսքերը, թէ՝ «Ինչե՞ր ասես որ չեն արել այս ձեռքերը» ու աւելացնելով՝ «Կամ չեն տեսել այս աչքերը» եւ փոխ առնելով երգի բառերը թէ՝ «Խոնարհւում ենք մեք ձեր առաջ», ասաց. «*Խոնարհւել նշանակում է՝ հոգով խոնարհ եւ հեզ լինել մօր նկատմամբ*»:



Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքում մի այլ տեղ նշեց. «*Հայ մայրը տեսել է շատ բաներ, ինչպիսին են Եղեռն,*

*ոճիռ, աքսոր, պատերազմ եւ այլն, եւ նոյնիսկ ամենադժուար պայմաններում ծնել են հերոսներ եւ դաստիրակել նրանց»*: Հետաքրքիր մէջբերում կատարելով Լիզբոնի դէպքում զոհուած հերոս Արայի մահուան օրն իր մօր արտայայտած խօսքերից թէ՝ «*Ես հպարտ եմ, որ առանց իմանալու հերոս եմ ծնել եւ մեծացրել, բայց ցաւում եմ, որ շատ զաւակներ չեմ ունեցել՝ ուրիշ զինուորներ նուիրելու ազգիս*», նշեց թէ հայ մայրն ինչքա՜ն հոգատար եւ մտահոգ է իր ծնած երեխայի դաստիարկութեան, ուսման եւ ինչու չէ նաեւ ապագայի համար: Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքերի աւարտին ասաց. «*Բոլորս նոյնիսկ մօր մէկ բարեւին պէտք է մօտենանք սիրով, յարգանքով եւ երկիւղածութեամբ*», եւ իր խօսքն աւարտեց երգի բառերով՝ «*Ա՜խ իմ մայր թանկագին, տուն կը գամ ես կրկին, կը սեղմեմ քեզ իմ կրծքին*»:



Ծրագրի երկրորդ բաժնում, դպրոցի սաներն իրենց քաղցր ձայներով ներկայացրեցին ծաղիկներին, գարնանը եւ մայրերին նուիրուած երգեր, որոնք մեծ ուրախութիւն եւ հուզմունք առաջացրեցին ներկաների մօտ: Քաղցր եւ գեղեցիկ էր սաների շուրթերից լսել մայրական սէրն արտայայտող երգեր, որոնցից մէկում ասում էին. «Իմ մայրիկին եմ սիրում Այբուբենի չափ, Այբուբենն եմ սիրում իմ մայրիկի չափ»:



Սաները մեծ ուրախութեամբ կատարեցին իրենց դաստիրակներից սովորած երգերը, ապա մայրիկներին նուիրեցին իրենց իսկ ձեռքերով պատրաստած շատ գեղեցիկ աշխատանքներ՝ ուրախացնելով եւ հրճւանք պատճառելով նրանց:

Ծրագրի վերջում Ծնողական Խորհուրդը կազմակերպել էր համեստ հիւրասիրութիւն եւ մայրերին ու տատիկներին նուիրեց գեղեցիկ յուշանուէրներ:

## Ø ² Úð º ðÆ î úÜÀ Þ ² ÐÆÜ Þ ² ÐðÆ Ð ² Úà ò ² ¼ ¶ ² ÚÆÜ §êð ´ à ò ì ² ð ¸ ²Ü ²Üò ¦ º ô §Ø ² êÆê ¦ ¸ ä ð à ò à ô Ø

Մեծ է հայ մօր արժէքը, հայ մօր սիրտը, հայ մօր սէրը:



Երեքշաբթի 2013 թւականի ապրիլի 16-ի առաւօտեան Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմը, Ծնողական Խորհրդը եւ դպրոցի աշակերտ-ուհիները համատեղ աշխատանքով տօնեցին հայ մայրերի գեղեցիկ տօնը:

Սոյն ծրագրում ներկայ էին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տէսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունճանեանը, Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի ատենապէտ Ջանսոն Աղաբաբայեանը, Շահնշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչները եւ հայոց դպրոցի աշեկերտ-ուհիների մայրերը:

Ծրագրի բացումը կատարեցին վեցերորդ դասարանցի Էնուիքօ Զէյնալեանը եւ Մելինէ Մուրադեանը՝ բարի գալստեան խօսքերով եւ մայրերին ուղղուած բարեմաղթանքներով, ցանկանալով նրանց անսպառ ժպիտ եւ ուրախութիւն: Ապա հրաւիրուեց տկն. Վարդուհի Պօղոսեանը՝ օրւայ առթիւ արտայայտուելու: Տկն. Պօղոսեանն իր խօսքում նշեց. «*Հայ մայրը տարբերւում է իր գեղեցկութեամբ, վսեմութեան, ազգային ոգով եւ դեռ աւելի բարձր աստաճանի վրայ է կանգնած աշխարհի միւս մայրերի համեմատ*»: *Նա շարունակեց. «Սփիւռքահայ մօր պարտականութիւնն է*



*երեխաներին հայեցի դաստիարկել, եւ ամենակարեւորը՝ լաւ կերպով սովորեցնել մայրենի լեզուն։ Հայ մայրն է, որ սնուցանում, դաստիրակում եւ մեծացնում է զաւակներին։ Նա նոյնիսկ մինչեւ խոր ծերութիւն հետաքրքրւում եւ մտահոգւում է իր զաւակներով»*: Տկն. Պօղոսեանը շեշտեց, որ միայն ապրիլի 7-ին չէ, որ պէտք է մեծարել հայ մայրերին. ամբողջ տարին նոյնիսկ քիչ է մեր յարգարնքը նրանց մատուցելու համար: Նա իր խօսքերի աւարտին հայ մայրերին ցանկանալով առողջ եւ սիրով լի կեանք, նշեց. «*Հայ մայրերը թող իրենց ամբողջ սէրը փոխանցեն իրենց երեխաններին, քանի որ ինչքան սէր փոխանցեն՝ կրկնապատիկը կը ստանան իրենց զաւակներից*»։

Ծրագրի երկրորդ բաժնում դպրոցի աշակերտ-ուհիները հանդէս եկան «Մայրիկ», «Մայրիկիս ժպիտը» եւ «Զինւորիկն եմ ես փոքրիկ» խմբերգերով, ապա մօր մասին գեղեցիկ բանաստեղծութիւններ արտասանեցին Մեգան Բարփեանը, Վանէ Թահմազեանը, Անաբէ Շահբազեանը եւ Արիս Մուրադեանը: Վերջում «Մենք ենք մեր սարերը» զուգերգով ներկայացան Նազելի Մարկոսեանը եւ Վանէ Օրոջեանը: Աշակերտներին նւագակցում էր տկն. Աննա Դանիէլը:

Ծրագրի աւարտին, օրւայ առիթով իր պատգամը փոխանցեց Շահինշահրի հոգեւոր տէսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը՝ իր ուրախութիւնն արտայայտելով՝ «*Ես ուրախ եմ, որ այսօր մեր երեխաներն իրենց սրտի խօսքը, երախտագիտութիւնն ու սէրը արտայայտեցին ծնողներին երգի եւ արտասանութեան միջոցով*»։ Հոգշ. Հայր Սուրբը գնահատելով դպրոցի ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի աշխատանքը եւ մտայղացումը՝ ծրագրի վերաբերեալ, մայրերին մաղթեց՝ «*Թող ձեր չւաքը միշտ լինի ձեր զաւակների վրայ եւ ձեր աղօթքը, օրհնութիւնն ու առաջնորդութիւնը ձեր զաւակների համար լինեն լոյս եւ լոյսի ճանապարհ, որոնք առաջնորդում են ձեր զաւակներին՝ միայն հայի նկարագիր եւ լաւ կամք ունեցող, մաքուր, ազնիւ եւ հեզ հայ աշակերտ լինելու*»։

Վերջում բոլորին յաջողութիւն եւ բարի օր մաղթեց աշակերտուհի Արմիկ Թուսեանը:

Ներկաները դպրոցը թողնելուց առաջ օգտւեցին Ծնողական Խորհրդի կողմից պատրաստւած համեստ հիւրասիրութիւնից:

## Þ²ÐÆÜÞ²ÐðÆ Ð²Ú Î²Ü²Üò ºÎºÔºò²êÆð²ò ØÆàôÂÆôÜÀ ÜÞºò Ø²Úðºðì îúÜÀ



Երեքշաբթի՝ 2013 թւականի ապրիլի 16-ի երեկոյան, Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան անդամները մեծ խանդավառութեամբ, զատկական, մայրերի տօնի եւ Միութեան նոր գրասենեակի բացման երեք առիթները միատեղած՝ հանդիսութիւն էին կազմակերպել Շահինշահրի Սրբոց Վարդանանց դպրոցի սրահում:

Ծրագրի սկզբում Միութեանը տրամադրւած նոր սենեակի բացումը կատարեց Շահինշահրին հոգեւոր տէսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ.Գուճանեանի ձեռամբ եւ ներկայութեամբ

Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցչին: Հոգշ. Հայր Սուրբը սենեակի բացումից յետոյ, Կանանց Միութեան անդամներին ուղղելով իր խօսքը՝ գոհունակութիւն յայտնեց Միութեան տարած աշխատանքների կապակցութեամբ, ցանկանալով տրամադրւած նոր հնարաւորութիւնը առաւել խթան հանդիսանայ Միութեան գործունէութեան ծաւալման եւ անդամների թւի աճման: Հոգշ. Հայր Սուրբը շեշտեց, որ Ծահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրած Միութիւնն իր կենսունակութեամբ համայնքի ամենաեռանդուն մարմինը կարելի է համարել:



Ապա հայոց դպրոցի սրահում կազմակերպւած հանդիսութեան բացումը կատարեց Միութեան նախագահ տկն. Անահիտ Օհանեանը՝ բարի գալստեան խօսքով եւ Մայրերի Տօնին նւիրւած բարեմաղթանքներով ու ցանկութիւններով: Տկն. Օհանեանը հրաւիրեց հոգշ. Հայր Սուրբին օրւայ պատգամը փոխանցելու, ով իր խօսքում ասաց. «*Մեր կեանքում մնայուն ներկայութիւն, դեր, տեղ եւ գուրգուրանք ունի մայրը: Հայ մայրը արժանի է միայն մէկ բառի եւ դա սրբութիւնն է*», ապա նշեց. «*Եթէ չլինէին հայ մայրերը, չէին լինի Կոմիտասներ, Մեսրոպ Մաշտոցներ, Խորենացիներ եւ այլն: Մայրը Աստծու ներկայացուցիչն է երկրի վրայ, նա իշխում եւ օրհնում է իր զաւակներին, ինչպէս Աստւած նոյնն է անում վերեւից*»:



Հոգշ. Հայր Սուրբն աղօթեց Կանանց Եկեղեցասիրաց Միութեան հիմնադիր մայրերի եւ հանգուցեալ անդամների համար: Նա շատ գեղեցիկ արտայայտութեամբ փակեց իր խօսքը՝ ասելով. «*Որեւէ միութիւեան մէջ եթէ չկայ սէր եւ միասնականութիւն, այն դառնում է ժամանակաւորէպ, բայց անհաւասիկ այս Միութիւնը, հիմնադիր մայրերի ձեռքով ստեղծւել է սիրոյ հիմունքների վրայ եւ այսօր այդ ցանած սերմը բոլոր անդամուհիների միջոցով ջրւել, աճեցւել եւ կանգուն է պահւել*»:

Ծրագրի երկրորդ բաժնում Կանանց Միութեան անդամները եւ հիւրերը պատրաստել էին մօր մասին գեղեցիկ բանաստեղծութիւններ եւ երգեր՝ ըստ յետեւեալի. Արմիկ Թորոսեանը՝ «Պար երգ, Անահիտ Ստեփանեանը՝ «Դու ով ես մայր», Ծողիկ Քեշիշեանը՝ «Մօր սէրը», Ռիթա Մկրտչեանը՝ «Մօր ձեռքերը», Վարդուհի Պօղոսեանը՝ «Մօր սէրը», Վանէ Թահմազեանը՝ «Արմատները եւ տերեւները» բանաստեղծութիւնները, իսկ Ծաղկուշ Մանուրեանը՝ «Մայրս», Վարդուշ Հախնազարեանը՝ «Կանչէ կռունկ», Սառա Գրիգորեանը՝ «Արազ» եւ Ռիթա Մկրտչեանը՝ «Ապրիր մայրիկ» երգերը:

Գեղարւեստական բաժնից յետոյ, տեղի ունեցաւ գիտելիքների եւ արագաշարժութեան մրցութիւններ, որը մեծ խանդավառութիւն ստեղծեց: Ապա տեղի ունեցաւ զատկական հաւկթախաղ, որին յաջորդեց ուրախ մթնոլորդ, պար եւ երաժշտութիւն, լատար ու համեստ հիւրասիրութիւն:

Ծրագրի փակումը կատարւեց հոգշ. Հայր Սուրբի յուզիչ «Ով է ասել» երգով:

Յատկանշելի է որ օրւայ առիթով կատարւեցին նւիրատւութիւններ:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 98-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

18 ապրիլ 2013

**ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՅԹ**

Հինգշաբթի՝ 2013 թւականի ապրիլի 18-ի երեկոյեան, Ապրիլեան Մեծ Եղեռնի 98-ամեակի Ոգեկոչման Շահինշահրի Յանձնախումբը ապրիլեան նահատակների յիշատակին կազմակերպել էր շախմատի եւ սեղանի թենիսի մրցութիւններ:

Մարզաշարի բացմանը ներկայ էին Շահինշահրի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անդամները, մասնակից մարզիկներ եւ մեծ թւով հայորդիներ:






Մրցութիւնների բացման առթիւ Յանձնախմբի անունից բացման խօսք ներկայացրեց տկն. Մառիթա Սարեանը: Նա սկզբում բոլոր ներկաներին հրաւիրեց մէկ րոպէ լռութեամբ յոտնկայս յարգել ապրիլեան անմեղ նահատակների յիշատակը, ապա ակնարկելով վայրագ թուրքի մտադրութիւններին՝ հայ ժողովրդի ոչնչացման եւ բնաջնջման վերաբերեալ, շեշտեց, որ 21-րդ դարում բոլոր հայորդիները, թէ՛ Հայրենիքում եւ թէ՛ Սփիւռքում զգաստ, արթուն ու ամուր կանգնած են՝ պաշտպանելու իրենց իրաւունքները, իսկ յատկապէս հայ մարզիկները միջազգային մրցաբեմերում իրենց յաջողութիւններով պատիւ, վեհութիւն եւ առաւել մեծ յաղթանակ են պարգեւում հայութեանը: Տկն. Սարեանը մրցոյթներին մասնակցած անձանց յաջողութիւն մաղթեց, ապա խօսքը փոխանցեց Յանձնախմբի նախագահ պրն. Ջանիկ Թահմազեանին, որն իր հերթին շնորհակալական եւ յաջողութիւնների խօսքեր ուղղեց մարզիկներին:

Յաջորդիւ հոգշ. Հայր Սուրբն իր պատգամը փոխանցեց՝ ասելով. «*Ուրախութիւն եւ պատիւ է մեզ համար, ապրիլեան այս օրերին ոգեկոչել մեր նահատակների արեան կանչը, աղօթել նրանց հոգիների համար, նաեւ պահանջել մեր արդար դատը*»:



Հոգշ. Հայր Սուրբը գնահատեց Յանձնախմբի սկսած աշխատանքները՝ միջոցառումների կազմակերպման վերաբերեալ եւ մարզական խաղերի կապակցութեամբ մտայղացումը: Նա գնահետեց մասնակցած մեծ թւով երիտասարդ-ուհիներին, ովքեր այսպիսով՝ առողջ մթնոլորտում իրենց յարգանքի տուրքն են մատուցում ապրիլեան անմահ նահատակներին: Նա շարունակելով իր խօսքը, շեշտեց, որ պարտք է հայ երիտասարդներին՝ նախ ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնն իր ամբողջութեամբ, ապա ճանաչեցնել այն վայրագ թուրքին: Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքն ուղղեց երիտասարդներին՝ ասելով. «*Մենք մեր միասնականութեամբ պէտք է ցոյց տանք թուրքին, որ 98 տարիներ յետոյ նոյնիսկ չենք մոռացել, ընդերկար չենք մոռանալու մեր նահատակներին եւ վճռականօրէն պահանջելու ենք մեր հողերը: Մեր նահատակների վրէժը լուծելու ենք մեր կեանքն գնով, գործով, միասնականութեամբ եւ մասնակցութեամբ*»: Ապա Հայր Սուրբն իր աղօթքը բարձրացրեց առ Աստուած՝ իւրաքանչիւր նահատակի հոգու խաղաղութեան համար, եւ փառք տուեց Աստծուն՝ հայ ծնւելու, հայ սնւելու եւ հայ ապրելու համար:

Ծրագրի բացման արարողութիւնից յետոյ սկսեց մարզական մրցաշարը: Շախմատի մրցութեանը մասնակցում էին թւով 11 աղջիկ եւ տղաներ՝ Վանէ Սահակեանը, Նորվան Թահմազեանը, Թէոդիկ Աւանէսեանը, Լէոնի Դանիէլը, Շիրակ Հախնազարեանը, Արգին Խուդավերդեանը, Գեղարդ Թահմազեանը, Մելիսա Խանմելիքեանը, Նելի Դանիէլը, Նարէ Մարկոսեանը, Էրիկ Դանիէլը: Մրցութեան ընթացքին հետեւում էր Յանձնախմբի անդամ եւ շախմատիստ Անաշէ Բաբումեանը: Մասնակիցներն աւելի քան 2 ժամ մրցեցին, որի արդիւնքում Թէոդիկ Աւանէսեանը գրաւեց առաջին տեղը, Լէոնի Դանիէլը, Արգին Խուդավերդեանը եւ Շիրակ Հախնազարեանը՝ երկրորդ տեղը, իսկ Գեղարդ Թահմազեանը եւ Մելիսա Խանմելիքեանը գրա-

ւեցին երրորդ տեղը:



Հայոց դպրոցի միւս սրահում, սեղանի թենիսի մրցութեանը մասնակցում էին թւով 16 մարզիկ-ուհիներ՝ Արին Քեշիշեանը, Շիրակ Հախնազարեանը, Ջաեա Ռաշան, Յովակ Թահմազեանը, Ադրիան Ծառուկեանը, Համո Քամարզարեանը, Էնրիքօ Զէյնալեանը, Զարէ Մարկոսեանը, Մասիս Մանուկեանը, Էդւին Փիլոսեանը, Սաքօ Խաչատրեանը, Հելէն Նալբանդեանը, Մառինա Մանասէրեանը, Հերմինէ Մանուկեանը, Ռոզանա Նալբանդեանը եւ Ալիս Մանուկեանը: Աշակերտական բաժնում Արին Քեշիշեանը գրաւեց առաջին տեղը, Շիրակ Հախնազարեանը՝ երկրորդ եւ Ջաեա Ռաշան՝ երրորդ տեղերը: Տիկնանց բաժնում առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերը գրաւեցին հերթաբար օրդ. Հելէն Նալբանդեանը, տկն. Մառինա Մանասէրեանը եւ տկն. Հերմինէ Մանուկեանը, իսկ երէց տղամարդկանց բաժնում Զարէ Մարկոսեանը գրաւեց առաջին տեղը, Մասիս Մանուկեանը՝ երկրորդ եւ Էդւին Փիլոսեանը՝ երրորդ տեղերը:

19 ապրիլ 2013

### ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ

Ապրիլեան Մեծ Եղեռնի 98-ամեանկի Ոգեկոչման Շահինշահրի Յանձնախումբը ուրբաթ՝ ապրիլի 19-ի առաւօտեան, կազմակերպել էր շրջագայութիւն՝ դէպի Ն. Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանք:



Յանձնախմբի այս մտայղացմանն ընդառաջեցին Շահինշահրի համայնքի շուրջ 50 անձինք՝ մեծահասակ եւ պատանի, որոնց ընկերակցում էին Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան եւ Յանձնախմբի անդամները: Նրանք, հետաքրքիր զուգադիպումով, առաւօտեան ժամը 10-ին, մասնակցեցին Ս. Ամենափըրկչեան Վանքի Յովսէփ Արեմաթացի եկեղեցում Սպահանի Հայոց Թեմի 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի անդրանիկ նիստի առթիւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի նախագահութեամբ, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանի եւ հոգեւորականաց դասի, նորընտիր պատգամաւորների եւ ազգային մարմինների ներկայացուցիչների մասնակցութեամբ մատուցւող բացման աղօթքին եւ յաջորդիւ՝ Մեծ Եղեռնի Յուշարձանի առջեւ ծաղկեմատոյցին:

Տպաւորիչ ծրագրից յետոյ, խումբն առանձնաբար այցելեց Ս. Ամենափրկչեան Վանքի Յովսէփ Արեմաթացի եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» անւան թանգարան:

### ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Ուրբաթ՝ ապրիլի 19-ի երեկոյան, Ապրիլեան Մեծ Եղեռնի 98-ամեակի Ոգեկոչման Շահինշահրի Յանձնախումբը կազմակերպել էր երիտասարդական կլոր սեղան: Ծրագրին ներկայ էին Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Շահինշահրի Հայ Համանյքի Վարչութեան, Ոգեկոչման Յանձնախմբի եւ համայնքի անդամներ եւ բազմաթիւ երիտասարդներ:



Ծրագրի բացումը կատարեց Յանձնախմբի նախագահ պրն. Ջանիկ Թահմազեանը՝ շնորհակալական խօսքեր ուղղելով ներկաներին՝ մասնակցութեան համար, ապա ներկայացրեց եւ հրաւիրեց օրւայ դասախօս երիտասարդ-ուհիներին՝ իրենց պատրաստած նիւթերը փոխանցելու համար:

Համայնքի երիտասարդներից չորսը կլոր սեղանի դասախօսութիւնները ներկայացրին ըստ հետեւեալի.

* Անի Մինասքանեանն ուսումնասիրութեան էր ենթարկել 19-րդ դարի վերջաւորութեանը եւ 20-րդ դարի սկզբում Արեւմտեան Հայաստանում տիրող պատմական իրավիճակը, յատկապէս Թուրքիոյ միջոցով հայութեան դէմ կիրառւած անմարդկային բռնութիւններն

ու սպանդները մինչեւ Ցեղասպանութեան իրականացումը, ապա միայն թղթի վրայ մնացած հայոց իրաւունքների սահմանումը:

* Արիս Դաւթեանը ներկայացնելով «Թուրքիայում ապրող հայերը» նիւթը, պարզ եւ ընկալելի կերպով բացատրեց Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ Թուրքիայում եւ Արեւմտեան Հայաստանում զանազան ձեւերով տարբեր բնակավայրերում յարատեւող հայերի մասին, խօսելով «պաշտօնական», «իսլամացած (համշենահայեր)», «քրդացած» եւ «ծպտեալ» հայերի մասին՝ հետաքրքիր մանրամասնութիւններ փոխանցեց նրանց ապրելակերպի եւ հայկականութեան նկատմամբ այս խմբաւորումների կեցւածքի եւ կապւածութեան վերաբերեալ, փոխանցելով Թուրքիոյ եւ Արեւմտահայաստանի մէջ տարածւած ու տակաւին իրենց իսկական ազգութեանը կառչած «հայերի» կարեւորութեան, առանձնայատկութիւնների եւ ծաւալած աշխատանքների մասին տեղեկութիւններ:



* Վահէ Թահմազեանը կենտրոնանալով «Հայ Դատի ձեռքբերումները» նիւթի շուրջ, խօսեց բազմակողմանի յաջողութիւնների եւ Հայ Դատի արդար ու ամբողջական լուծման ուղղութեամբ տարւած ու տարւող աշխատանքների մասին՝ մատնանշելով բոլոր այն յաղթական նւաճումները, որ կատարւել են զանազան երկրներում եւ բազմազան ատեաններում:

* Գեղարդ Թահմազեանը շօշափելով «Ներկայ մարտահրաւէրները» նիւթը, գեղեցիկ կերպով ներկայացրեց բոլոր այն հրամայականները, որոնք պէտք է իւրաքանչիւր հայի ուշադրութեան կենտրոնը լինեն եւ Հայ Դատի լուծման ուղղութեամբ աշխատող բոլոր հայ կազմակերպութիւնների աշխատանքների առանցքը հանդիսանան:

Իւրաքանչիւր նիւթի ներկայացումից յետոյ ներկաների միջոցով հարցումներ ուղղւեցին երիտասարդ դասախօսներին, ովքեր փորձեցին բաւարար պատասխաններ տալ նրանց:

Ձեռնարկի աւարտին հրաւիրւեց հոգշ. Հայր Սուրբը՝ իր պատգամը փոխանցելու բոլորին: Նա իր հրճւանքն ու գոհունակութիւնը յայտնեց Հայոց Ցեղասպանութեան 98-ամեակի ոգեկոչման աշխատանքների ծիրում համանքի երիտասարդների գործօն մասնակցութեան համար եւ վստահութիւն յայտնեց, որ եթէ համատեղ, միասնական եւ գիտակից այս կեցւածքով շարունակւեն պահանջատիրական աշխատանքները, յաջողութեամբ եւ արդարութեամբ են պսակւելու դրանք՝ մեզ բերելով Հայ Դատի արդար լուծման:

21 ապրիլ 2013

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԻՒՆ

Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման աշխատանքների շարանում, կիրակի՝ ապրիլի 21-ի երեկոյան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կազմակերպւել էր գիտելիքների մրցութիւն, որին իրենց մասնակցութիւնն էին բերել հայոց դպրոցի աշակերտ-ուհիները: Աշակերտներին մեծ ուրախութիւն պարգեւեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ Նոր Ջուղայի հոգեւորականաց դասի այցելութիւնը:



Ծրագրին ներկայ էին նաեւ Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Ապրիլեան Եղեռնի 98-ամեակի Ոգեկոչման Շահինշահրի Յանձնախմբի անդամները, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչները եւ աշակերտների ծնողներն ու հարազատները:



Ծրագրի բացումը կատարեց տկն. Մառիթա Քեշիշեանը՝ բարի գալստեան խօսքեր ասելով բոլորին, նշելով, որ թէեւ աշակերտները գտնւում են դպրոցական քննութիւնների եղանակին, սակայն ոչ մի բան չխանգարեց նրանց որպէսի հաստատակամօրէն մասնակցեն

այս մրցութիւններին, ապա յոյս ունենալով որ կը լինի աշխոյժ մրցակցութիւն, մասնակիցների համար յաջողութիւն ցանկացաւ:

Օրւայ մրցութեան համար իրաւարար խումբ էին նշանակուել հայոց դպրոցի ուսուցչուհիներից տկնյք. Մառիթա Քեշիշեանը, Անահիտ Այւազեանը, Քարմէն Մատթէոսեանը եւ Վարդուհի Պօղոսեանը:



Մրցութեանը մասնակցել էին տարրկան բաժնից Սեւանա, Մասիս, Արցախ, Վան եւ Արարատ, իսկ ուղեցոյց բաժնից Արծիւներ եւ Սեւան խմբերը: Իւրաքանչիւր խումբ ընդգրկում էր երեքական աշակերտ: Մրցակցութիւնը կազմակերպ եւ հետաքրքիր կերպով տեղի ունեցաւ երեք փուլերով: Աշակերտ-ուհիների պատրաստուածութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց թէ՛ ուսուցիչներին եւ թէ՛ ծնողներին:



Ծրագրի ընդմիջումին, տկն. Մառիթա Քեշիշեանը հրաւիրեց գերշ. Սրբազան Հօրը՝ իր հայրական օրհնանքը փոխանցելու աշակերտներին եւ ներկաներին: Գերշ. Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնեց ծրագրի կազմարկերպման եւ աշակերտութեան մասնակցութեան առթիւ, նշելով. «*Ապրիլ ամիսը մեր ժողովրդի համար անմոռանալի ամիս է եւ ո՛չ թէ լացի ու սգոյ ամիս. այն պահանջատիրական պայքարի ամիս է, եւ որքան մեր աշակերտները գիտակից ու մեր պատմութեամբ հարստացած լինեն եւ լաւ իմանան այն, անցեալից դասեր քաղեն եւ հայերէն լեզուն լաւապէս սերտեն, այնքան առողջ են ապրելու ներկան եւ ապագան կերտելու են մեծ յոյսերով*»: Վերջում Առաջնորդ Սրբազն Հայրը յաջողութիւն եւ բարի երթ մաղթեց մասնակից աշակերտ-ուհիներին:

Մրցութեան աւարտին իրաւարար խումբն արդիւնքները ներկայացնելով՝ տարական բաժնում առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերը գրաւած յայտարարեց հերթաբար Արցախ, Արարատ եւ Սեւանա խմբերին, իսկ ուղեցոյց բաժնում յաղթող խումբ ճանաչեց Սեւան խմբին:



Յաղթող խմբերը պարգեւատրուելու են Ոգեկոչման առթիւ կազմակերպուած բուն ձեռնակի ընթացքում:

Յանձնախմբի կողմից պատրաստուել էր համեստ հիւրասիրութիւն:

## 22 ապրիլ 2013
## ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՋԵՌԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ



Երկուշաբթի՝ ապրիլի 22-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, տեղի ունեցաւ նկարչութեան եւ ձեռարւեստի ցուցահանդէս՝ Հայոց Ցեղասպանութեան թեմայով, որին ներկայ էին Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Շահինշահրի Հայ Հա-

մայնքի Վարչութեան եւ Ոգեկոչման Յանձնախմբի անդամներն ու զգալի թւով համայնքի անդամներ:



Ցուցահանդէսի բացումը կատարեց հոգշ. Հայր Սուրբի եւ Ոգեկոչման Յանձնախմբի նախագահ պրն. Ջանիկ Թահմազեանի ձեռամբ: Սրահի պատերը ծածկւած էին աշակերտ-ուհիների եւ համայնքի երիտասարդների նկարած պատկերներով. բոլորը ինչ որ կերպ իրենց զգացումները թղթին յանձնելով՝ նկարագրել էին վայրագ թուրքին, մեր անմեղ ժողովրդին՝ Սուրիոյ աւազների վրայ, Արարատ լեռը եւ մեր եռագոյն դրօշը: Բոլորը խորհրդաւոր էին եւ յուզիչ. երբ դիտում ես այդ նկարչութիւնները, մի պահ ոգեւորւածութեամբ եւ յոյսով լցւած մտածում ես՝ դեռ կան սերունդներ, որ պահանջատէր են մեր արդար իրաւունքների նկատմամբ եւ ուրախանում ես, որ նրանք անտարբեր չեն Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ:

Յանձնախումբը պատրաստել էր յուշատետր, որպէսզի ցուցահանդէս այցելողներն իրենց զգացումները եւ մտածումները գրեն Եղեռնի եւ ձեռնարկի մասին. տետրը լցւեց բազմաթիւ յուշագրութիւններով:

## 23 ապրիլ 2013
## ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԾԱՂԿԵՄԱՏՈՅՑ



Ապրիլի 23-ի երեկոյան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի բակում կառուցւած Ապրիլեան Եղեռնի Յուշարձան-Խաչքարի առջեւ ի մի եկած հայորդիներ, նախ մասնակցեցին Հոգեհանգստեան արարողութեանը, որը կատարեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի գլխաւորութեամբ, հոգեւոր հովիւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի մասնակցութեամբ եւ Շահինշահրի «Նարեկ» երգչախմբի երգեցողութեամբ:




Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչ տկն. Մարիթա Քեշիշեանը ընթերցեց Համայնքի Վարչութեան Ապրիլեան Եղեռնի առթիւ հրապարակած կոչը, որի մէջ նշւել էր թէ թուրքերը դեռ 1915 թւականից շատ առաջ ծրագրել էին ցեղասպանութիւն գործել եւ ոչնչացնել ու բնաջնջել հայերին: Այնտեղ շեշտադրումով ասւել էր. «*Թուրք ոճրագործների այս արարքը դատապարտելի է, եւ մենք բոլոր հայերս պէտք է ճանաչել տանք Ցեղասպանութիւնը, քանի որ Ցեղասպանութեան ուրացումը յանգեցնում է նոր ոճրագործութիւնների: Այդ պատճառով հայ ժողովուրդը պէտք է համախմբւի համահայկական օրակարգերի շուրջ եւ որպէսզի վերելքը թռիչքային լինի՝ հրամայական են՝ վերակազմակերպում Սփիւռքում, արդարութիւն, ժողովրդաւարութիւն, միասնականութիւն եւ ազգային հզօր կազմակերպւածութիւն հայրենիքում*»:

Ծրագրի միւս բաժնում տկն. Մարիթա Սարեանն ընթերցեց Ապրիլեան Եղեռնի 98-ամեակի Ոգեկոչման Շահինշահրի Յանձնախմբի խօսքը, որի մէջ դարձեալ շեշտւում էր՝ հայութեան բեկորների միասնականութեան եւ միահամուռ լինելու անհրաժեշտութիւնը, որով հայ ժողովուրդը կը կարողանայ իր կոչն ուղղել համայն աշխարհին եւ իր ձայնը լսելի դարձնել՝ իր արդար իրաւունքների վերատիրացման նպատակով, այն համոզումով, որ Մեծ Եղեռնից վերապրած հայ ժողովուրդն իր եզակի տոկունութեամբ եւ հետեւողականութեամբ ի զորու է դիմագրաւել Հայ Դատի բազմազան ճակատներում նետւած մարտահրաւէրները եւ ծանօթացնել նրա իրաւական արժէքը միջազգային ատեաններում: Տկն. Սարեանն իր խօսքն աւարտեց՝ «*Տուտով կը ծագի արեւն արդարութեան. յաղթանակը մերն է*» յուսադրիչ նախադասութեամբ:

Բողոքի համահաւաքի եւ ծաղկեմատոյցին իրենց

յատուկ բաժինն ունեն Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» ու «Մասիս» դպրոցների աշակերտ-ուհիները. խմբերգներով ներկայացրին «Թող հնչէ շէփոր», «Քայլենք միասին», «Զինուորիկն եմ ես փոքրիկ» երգերը, ապա ասմունքեցին Մեգան Բարֆեանը՝ «Ես այն մէկ հայն եմ», Արալիկ Թահմազեանը՝ «Մենութեան խաւար» եւ Ադանա Այւազեանը՝ «Հայն իր ազգը չի ուրանայ» բանաստեղծութիւնները, իսկ զուգերգներով հանդէս եկան Վաչէ Քեշիշեանը եւ Արին Մինասեանը՝ «Ախպէրս ու ես», Ջեփիւռ Շահիջանեանը, Վանէ Օրոջեանը, Նազելի Մարկոսեանը, Արինէ Նազարեանը եւ Ռենիթա Նազարեանը՝ «Կարմիր Կակաչները», Արգին Շահմիրզայեանը եւ Արութին Հախնազարեանը՝ «Մենք չենք մոռացել» երգերի կատարումով:



Ծրագրի ընթացքում տեղի ունեցան ծաղիկների եւ ծաղկեպսակների զետեղում Ապրիլեան Զոհերի Յուշարձանի առջեւ՝ Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան, Շահինշահրի պատգամաւորների, Ոգեկոչման Յանձնախմբի, «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի ուսուցչական կազմերի, Ծնողական խորհուրդների եւ աշակերտութեան, Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութեան, «Նարեկ» եւ «Նարօտ» Երգչախմբերի, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» եւ Փերիոյ Կրթասիրաց միութիւնների Շահինշահրի մասնաճիւղերի եւ Հայ Դատի Յանձնախմբի միջոցով:

Ծրագրի շարունակութեանը Շահինշահրի Հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը եւ հոգեւոր հովիւ արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբեանը կատարեցին մոմավառութիւն, որոնց հետեւեց ներկայ բազմութիւնը:

Վերջում իր բովանդակալից պատգամը փոխանցեց հոգշ. Հայր Սուրբը՝ ասելով. «*Փա՜ռք Քեզ, ո՜վ Աստուած, որ հայ ենք ծնուել, եւ ունենք նահատակներ՝ որոնց մարտիրոսութեան շնորհիւ մենք կարողանում ենք կանգնել Քո եկեղեցում, այն խաչի դիմաց, որը 98-տարիներ առաջ մեր նահատակներն իրենց ուսերի վրայ վերցրեցին եւ քայլեցին այս անգամ դէպի նոր Գողգոթայ, որով փրկեցին մեր հայ ազգը, մշակոյթը, կրօնն ու լեզուն*»:




Հոգշ. Հայր Սուրբն իր արտայայտութիւնների շարունակութեան մէջ վստահեցրեց, որ Ապրիլեան Եղեռնին նուիրուած ծրագրերը մեր նոր սերնդի կեանքում բանալու են նոր էջ, որն առաջնորդում է դէպի Հայ Դատի արդար յատուցում եւ աննահանջ պայքար: Նա, իր խօսքի աւարտին գնահատեց Յանձնախմբի տարած աշխատանքները՝ օրւայ կապակցութեամբ եւ կոչ ուղղեց ներկաներին, որպէսզի խուռներամ շարքերով մասնակցեն յաջորդ օրւայ Ս.Պատարագին եւ բողոքի քայլարշաւին:

Համահաւաքի աւարտին տեղի ունեցաւ նստացոյց Շահինշահրի համայնքի երիտասարդների միջոցով, որին հսկեց անձամբ հոգշ. Հայր Սուրբը:

24 ապրիլ 2013
## ԱՊՐԻԼ 24-Ը ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ



Չորեքշաբթի՝ ապրիլի 24-ի առաւօտեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին, ձեռամբ Շա-

հինշահրի հոգեւոր հովիւ արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի եւ երգեցողութեամբ Շահինշահրի «Նարեկ» երգչախմբի:



Եկեղեցական արարողութիւնից յետոյ, համահաւաք տեղի ունեցաւ դպրոցի բակում, որին յաջորդեց բողոքի քայլարշաւը հայոց դպրոցի ուղղութեամբ ձգւող պողոտայով: Շահինշահրի հայորդիներն իրենց խուռներամ եւ միահամուռ մասնակցեցին եկեղեցական արարողութեանն ու քայլարշաւին, եւ իրենց բողոքի ձայնը բարձրացնելով՝ միացան աշխարհասփիւռ հայութեան պահանջատիրութեանը:

Քայլարշաւի աւարտին, բոլոր պահանջատէր հայորդիները միասին «Սարդարապատ» երգով կենտրոնացան հայոց դպրոցի բակում, որտեղ ունկնդրեցին Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող պարսկերէն լեզւով բանաձեւը՝ ընթերցւած պրն. Էդւին Բաբումեանի միջոցով:



Բողոքի ցոյցի աւարտին, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ.Գուճանեանն իր գեղեցիկ պատգամը փոխանձեց՝ ասելով. «*Ապրիլ 24 նշանակում է նահատակների արեան կանչի օր, Հայոց Ցեղասպանութեան եւ Թուրքիոյ վայրագութեան եւ անգթութեան փաստ եւ իրողութիւն, մեր հողերի ու նահատակների հոգիների եւ արեան պահանջատիրութեան օր: Ահաւասիկ այսօր 98 տարիներ են անցել, երբ մեր նահատակ մայրերն ու հայրերը, քոյրերն ու եղբայրները իրենց կեանքն ու անձը յանձնեցին Դեր-Զորի աւազներին, որպէսզի այսօր հայ ժողովուրդը ապրի հայի նկարագրով*»: Հոգշ. Հայր Սուրբը իր խօսքն աւարտեց հետեւեալ խորիմաստ եւ մտածելու տեղիք տւող արտայայտութեամբ. «*Որտե՞ղ ենք մենք, ի՞նչ ենք անում եւ ինչի՞ համար: Եթէ թշնամին մեզ վերադարձնի մեր հողերը, մենք պէտք է պատրաստ լինենք արժեւորել դա մեր կեանքով, տէր կանգնել դրանց եւ մեր պապենական հողերի վրայ հաստատել մեր կեանքը*»:

Վերջում նա գնահատեց Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեանը՝ ոգեկոչման ծրագրերն իրագործելու նպատակով բազմակողմանի համագործակցութեան համար, նաեւ դրւատեց Ոգեկոչման Յանձնախմբի աշխատանքները եւ Շահինշահրի հայ համայնքի անդամների գիտակից մասնակցութիւնը:

## 28 Ապրիլ 2013
## ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Կիրակի՝ 2013 թւականի ապրիլի 28-ի երեկոյան, Մեծ Եղեռնի 98-ամեակի Ոգեկոչման Շահինշահրի Յանձնախմբի կազմակերպութեամբ, Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ դասախօսական եւ գեղարւեստական ձեռնարկ՝ իբրեւ աւարտ Հայոց Ցեղասպանութեանը նւիրւած ձեռնարկների շարանի:

Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Պատգամաւորական Ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան եւ ազգային այլ մարմինների ներկայացուցիչներն ու Շահինշահրի հայ համայնքի գիտակից եւ պահանջատէր անդամներ:



Ծրագրի բացումը կատարեց ոգեկոչող Յանձնախմբի անդամ տկն. Վիոլետ Յարութիւնեանը: Նա իր խօսքն սկսելով Հայրենիքին նւիրւած գեղեցիկ բանաս-

տեղծութեամբ, շնորհակալութիւն յայտնեց ներկաներին՝ մասնակցութեան համար եւ բեմ հրաւիրեց օրուայ բանախօս բազմամեայ փորձով եւ անցեալով ազգային, հասարակական գործիչ պրն. Թաթուլ Օհանեանին:

Պրն. Օհանեանը, ինչպէս ծրագրի հաղորդավարուհին բանախօսութիւնից յետոյ նշեց, պարզ, ճարտար, հաճելի եւ հասարակութեանը ընկալելի ոճով բովանդակալից կերպով ներկայացրեց հայոց ջարդի, տարագրութեան եւ կրած բարոյական, մարդկային եւ նիւթական կորուստների պատմականն ու նկարագրութիւնը: Նա պաշտօնական մարդահամարներից եւ տուեալներից թիւեր նշելով, փոխանձեց, որ Ցեղասպանութեան ընթացքում մէկ եւ կէս միլիոն հայ անմեղ զոհերի կորուստը ո՛չ միայն իր ժամանակին արհաւիրք էր, այլ անդառնալի եւ անփոխարինելի բացասական ազդեցութիւն թողեց հայ ժողովրդի բնականոն աճի եւ զարգացման ընթացքի վրայ:



Յարգելի դասախօսն անդրադառնալով ցեղասպան Թուրքիոյ անցեալի եւ այժմեան փանթուրքիստական քաղաքականութեանը եւ գործունէութիւններին, շեշտեց, որ ո՛չ մի փոփոխութիւն չկայ ազգայնամոլ եւ ոխակալ թուրքի նկարագրի մէջ: Պրն. Օհանեանն իր խօսքերի մէկ բաժնում շեշտեց. «*Այսուհանդերձ հայ ժողովուրդն իր դարաւոր թշնամու նկատմամբ չունի վրէժխնդրութեան հարց. առհասարակ հայը չունի վրէժի բարդոյթ, այլ արդար պահանջատիրութիւնն է հետաքրքրում հայութեանը: Մեծ տարբերութիւն կայ պահանջատիրութեան եւ վրէժի միջեւ. վրէժը եւ վրէժից դրդուած արարքներն ու զգացումները չեն ընդունւում զարգացած եւ առաջադէմ աշխարհի կողմից, սակայն պահանջատիրութիւնը յառաջադիմական է, որն էլ պէտք է լինի հայութեան պայքարի առանցքը*»:



Ծրագրի երկրորդ բաժնում Թահրանշահրի շնորհալի անդամներից՝ տկնք. Լիդուշ Քամարզարեանը, Մառիթա Սարեանը, պրնք. Մարտիկ Յովհաննիսեանը, Արութին Հախնազարեանը եւ Արգին Թահմիրզայեանը ներկայացրեցին «Կիլիկիա», «Սուրբերու աչքեր», «Արմենեա», «Մենք չենք մոռացել», «Ահա կերթամ», «Ախպէրս ու ես», «Նրանք ընկան», «Նորէն հայրս տխուր», «Կոտորածն անգութ» երգերը՝ մեներգ, զուգերգ եւ խմբերգ ձեւերով, իսկ օրդ. Ադանա Այւազեանն ասմունքեց «Հայն իր ազգը չի ուրանայ» բանաստեղծութիւնը:

Գեղարուեստական կոկիկ յայտագրից յետոյ, ծրագրի աւարտին, բեմ հրաւիրուեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը՝ իր հայրական օրհնանքը փոխանցելու: Գերշ. Սրբազան Հայրը գնահատելով ոգեկոչող Յանձնախմբին՝ կազմակերպած միջոցառումների համար, նաեւ Թահրանշահրի հայ համայնքին, որն անցնող օրերում լրջօրէն մասնակցել էր ձեռնարկներին, մէջբերեց Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի առիթով զոյգ կաթողիկոսների միատեղ կոչի բառերը եւ ասաց. «*Կը յիշենք, կը յիշեցնենք ամբողջ աշխարհին եւ կը պահանջենք ցեղասպան ոճրագործից մեր արդար իրաւունքները, հողերը, վանքերը, եկեղեցիները, սրբութիւններն ու արժէքները: Այլեւս մեր աչքերը ո՛չ թէ Դեր-Զորի արեւակէզ աւազներին, այլ Մուշին ու Սասունին պէտք է ուղղենք*»: Առաջնորդ Սրբազան Հայրն երախտագիտութեան խօսք ուղղեց բոլոր այն պետութիւններին, որոնք Ցեղասպանութեան օրերում գրկաբաց ընդունեցին հայ տարագրեալներին, եւ կոչ ուղղեց ամբողջ հայութեանը՝ միասնական կեցւածքով այսուհետեւ միջազգայի՛ն մակարդակի վրայ եւ ատեաններում արծարծել հայոց պահանջատիրութեան հարցը մինչեւ արդար եւ վերջնական լուծում:

# Üàð æàôÔ²ÚÆ Ð²Ú Ð²Ø²ÚÜøÜ Æð ì¸ðæÆÜ Ðð²Ä¸ÞîÀ îô¸ò ´²¼Ø²ì²êî²Î Ðà¶¸´²Ü-¸²ê²ÊúêÆ ¸ô¸ô ²¼¶²ÚÆÜ-ÎðÂ²Î²Ü ¶àðÌÆâ ¸àÎîàð-äðàüºêàð Øºêðàä ´²È²Úº²ÜÆÜ



Երկուշաբթի, ապրիլի 8-ին, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, ներկայութեամբ՝ ազգային մարմինների ներկայացուցիչների, Սպահանի Պետական համալսարանի դասախօսների եւ ուսանողների ու հայ եւ պարսիկ հայրենակիցների տեղի ունեցաւ նոյն համալսարանի բազմավաստակ հոգեբան-դասախօս եւ ազգային-կրթական գործիչ դոկտոր-պրոֆեսոր Մեսրոպ Բալայեանի յուղարկաւորութիւնը, որն իր մահկանացուն էր կնքել ապրիլի 3-ին՝ 90 տարեկան հասակում:



Թաղման եկեղեցական արարողութիւնը կայացաւ կէսօրից յետոյ ժամը 3-ին, գլխաւորութեամբ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա վրդ. Գուճանեանի եւ մասնակցութեամբ Տ. Մեսրոպ քհնյ. Գալստանեանի ու դպրաց դասի:

Եկեղեցական կարգի աւարտին Տ. Անանիա վրդ. Գուճանեանը հանդէս եկաւ դամբանախօսութեամբ, որտեղ անդրադառնալով նաեւ հանգուցեալի կենսագրական գծերին՝ թեմակալ առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Չարեանի, ազգային մարմինների ու միութիւնների անունից ցաւակցական խօսք ուղղեց սգակիրներին:

Այնուհետեւ նորոգ հանգուցեալի դին տեղափոխւեց եկեղեցու բակ, որտեղ կարճատեւ արարողութիւնից յետոյ՝ դամբանախօսութեամբ ելոյթ ունեցան նաեւ՝ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի ատենապետ Ջանսոն Աղաբաբայեանը՝ թեմի ազգային մարմինների եւ Սպահանի Պետական համալսարանի մակավարժութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետի դասախօս դոկտ. Նուրին՝ համալսարանի տնօրինութեան անունից:



Դկտ. Բալայեանի դին ամփոփւեց Նոր Ջուղայի հայոց ազգային գերեզմանատանը:

Դկտ. Մեսրոպ Բալայեանը ծնւել է 1923 թւականին: Նրա հայրը եղել է Հայոց Ցեղասպանութիւնը վերապրածներից: Նա իր դոկտորի կոչումն ստացել է Ֆրանսիայի Սորբոն համալսարանի հոգեբանութեան ճիւղում, որից յետոյ՝ վերադառնալով Իրան՝ սկսել է աշխատել որպէս համալսարանի դասախօս: 1962 թւականից ընտանեօք տեղափոխւում է Սպահան եւ աշխատանքի անցնում տեղի Պետական համալսարանի մանկավարժութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետում որպէս դասախօս եւ դեկան: Եղել է նաեւ նոյն համալսարանի հայոց լեզւի եւ գրականութեան ամբիոնի դասախօս:

Գիտական բեղուն գործունէութիւնից բացի՝ դոկտ. Բալայեանն աշխոյժ դերակատարութիւն է ունեցել Սպահանի հայոց թեմի ազգային եւ կրթական կեանքում: Հեղինակն է բազմաթիւ գրքերի, յօդուածների եւ թարգմանութիւնների:

Հանգիստ՝ բազմավաստակ ուսուցչի աճիւններին:

***

## ÀÜÂºðòô²ò ¸²Ø´²Ü²Î²Üª ¸Îî.ØºêðàäÂ ´²È²Úº²ÜÆ ÚàôÔ²ðÎ²ôàðàôÂº²Ü ä²ÐÆÜ

Սգակի՛ր ներկաներ,

2013 թւականի ապրիլի 5-ին, Նոր Ջուղան առյաւէտ կորցրեց իր արժանի զաւակներից մէկին՝ ազգային-հասարակական եւ կրթական գործիչ դկտ. Մեսրոպ Բալայեանին, խորը վիշտ պատճառելով բոլորիս:



Հանգուցեալ դկտ. Բալայեանն իր կեանքի ազնիւ գործունէութիւնը ծաւալեց մարդկային գիտութիւնների եւ դաստիարակութեան աստուածահաճոյ առաքելութեան ուղղում, դաստիարակելով հարիւրաւոր ուսանողներ:

Որպէս իրանահայ գիտնական, իր բեղուն ծառայութիւնն է մատուցել Իրանի ժամանակի գիտական ասպարէզում՝ թողնելով ծաւալուն ժառանգութիւն: Հանգուցեալը, որպէս Սպահանի համալսարանի դասախօս, հոգեբան, դոկտոր, եղել է բազում գիտական յօդուածների եւ գրքերի ու զանազան թարգմանութիւնների հեղինակ:

Իր գիտական բարձր մակարդակով եւ դաստիարակչական հեղինակութեամբ ու կառավարման տաղանդով մեծ յարգանք էր վայելում թէ համալսարանական ուսանողների եւ թէ դասախօսական խաւի ու ղեկավարութեան շրջաններում, լինելով երկար տարիներ Սպահանի համալսարանի դաստիարակչական գիտութիւնների ֆակուլտետի տնօրէն եւ հետազօտութիւնների գիտական կենտրոնի բազմամեայ աշխուժ անդամ: Նա իր գիտական գործունէութեան բերումով արժանացել է պետական բարձրագոյն շքանշանով:

Համալսարանական աշխատանքից բացի, մասնակցութիւն է ցուցաբերել համայնքիս ազգային եւ հասարակական կեանքում՝ որպէս հայոց ազգային դպրոցների հայերէն առարկաների ուսուցիչ, նաեւ Հայագիտական Ամբիոնի դասախօս:

Երկար տարիներ եղել է հայոց ազգային դպրոցների հոգաբարձութեան կրթական եւ հոգեբանութեան խորհրդատու եւ կանոնաւոր կերպով կազմակերպել է ծնողական լսարաններ, որոնց ընթացքում նաեւ դասախօսել է, միեւնոյն ժամանակ դասախօսութիւնների է հրաւիրուել Սպահանի պետական պարսկալեզու դպրոցներում՝ որպէս դասախօս եւ հոգեբան:

Հանգուցեալի նիւթական ներդրումով հիմնադրուել է «Դկտ. Մեսրոպ Բալայեան մանկական հրատարակչական ֆոնդ»-ը, որից յատկացումներ է կատարուել հայերէն պատկերազարդ Այբուբենի ուսուցողական քարտերի, Յովհաննէս Թումանեանի՝ «Սասունցի Դաւիթ» գրքի (2001 թ.), Հայկ Հայրապետեանի հեղինակած՝ «Մանուկների հետ» (2004 թ.) եւ Գուրգէն Գաբրիէլեանի ստեղծագործած՝ «Մեր թեւաւոր բարեկամները» (2004 թ.) բանաստեղծութիւնների հրատարակութեան համար:

Սգակիր ներկաներ,

Հանգուցեալն իր գիտական, դասախօսական, ազգային-հասարակական գործունէութիւնից բացի օժտուած էր մարդկային վեհ գաղափարներով: Իր համար մարդ անհատը համարւում էր որպէս ստեղծագործութեան խորհրդանիշ, նա ջերմօրէն հետամուտ էր մարդ անհատի ազատութիւններին եւ իրաւունքներին, խստօրէն պայքարում էր մարդկային իրաւունքների պաշտպանութեան գործում եւ մարդ անհատի շահագործման եւ կեղեքման դէմ:

Նա դէմ էր մարդկային եւ ազգային խտրականութիւններին: Նա ազգը համարում էր մարդկային զարգացման գագաթնակէտ եւ արժանի՝ ազատ եւ անկախ ապրելու, որի համար նա իր աշխուժ մասնակցութիւնն էր բերում հայ ժողովրդի ազատագրման գործին:

Նա որպէս Ցեղասպանութեան ենթարկուած ընտանիքի զաւակ, իր անվերապահ մասնակցութիւնն էր բերում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման պայքարին եւ այդ ծաւալուն աշխատանքի համար պարգեւատրուել էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Հայ Ասպետ» շքանշանով:

Վերջում յանուն Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի, մեր ցաւակցութիւնն ենք յայտնում հանգուցեալի զաւակներին, ազգական-բարեկամներին եւ Իրանի գիտական շրջանակին այս ցաւալի կորստի համար:

Սիրելի՛ դոկտոր, թէեւ դու ֆիզիքապէս հեռացար մեզանից, բայց քո գործն ու վաստակը յաւերժ կապրի մեր սրտերում:

Յարգա՛նք քեզ,

Հողը թեթեւ գայ քեզ վրայ:

# ՍՏԱՑՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Զ. Հայոց Առաքելական եկեղեցւոյ Վարչութեան**

***Ս. Գէորգ եկեղեցի***

- 1,900,000 ռիալ. Ծայեան:
- 1,000,000 ռիալ. Վաճէ Ակոն:
- 500,000-ական ռիալ. Արէն Դաւթեան, Աորինփառ, Ծաքանի, Դուռանդիշ, ոմն(×2):
- 100,000-ական ռիալ. Սեդա Այւազբալեան, ոմն:
- 40,000 ռիալ. Իսէֆի-Նիա:

***Խաչի զոյգելու փոխարէն***

- 400,000 ռիալ. Անիթա Դեհբաշեան:
- 200,000 ռիալ. Հրանուշ Դաւթեան:
- 170,000 ռիալ. Լեւոն Ղարիբեան:
- 100,000-ական ռիալ. Վաճէ Գրիգորեան, Թէօ Ծահիջանեան, Հերմինէ Ղարիբեան, Արա Աւանէսեան, Ծափուրի, ոմն(×2):
- 70,000 ռիալ. Միրօ Խուդավերդեան:
- 50,000-ական ռիալ. Ժուլիետ Մինասեան, ոմն:

***Զանազան առիթներ***

- 1 փոշեկուլ՝ Ս. Ստեփանոս եկեղեցուն. Մարտօ եւ Լինա Յովսէփեաններ՝ Սեդրակ Մարկոսեանի յիշատակին:
- 1 գորգ՝ Ս. Գէորգ եկեղեցուն. Ծաղկուշ Դանիէլեան՝ Ժորժ Դանիէլեանի յիշատակին:
- Ս. Աստուածածին եկեղեցու արտաքին պատերի եւ սիւների ներկը. Զանոսն Աղաբաբյեան:

***Ս. Յովհաննու եկեղեցի - Մաղկազարդ***

- 300,000 ռիալ. Ջանես Գրիգորեան:
- 200,000-ական ռիալ. Կարօ Յովսէփեան, Լիլիթ Քեշիշեան:
- 100,000 ռիալ. Հայկազ Պետրոսեան:

***Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի***

- 500,000 ռիալ. Արգիշտի Ղարիբեան՝ խաչքաւորութեան առթիւ:

***Ս. Մինաս եկեղեցի***

- 500,000 ռիալ. Սարուէ Ղազարեան՝ Տեառնընդառաջի առթիւ:
- 300,000 ռիալ. Մարտիրոս եւ Լուսիկ Յովսէփեաններ՝ Ծաղկազարդի առթիւ:

***Զատկի Տօնի առթիւ***

- 500,000 ռիալ. Անուշ Ղարախանեան, Տիգրանուհի Ղեւեան՝ իր թոռնիկների յաջողութեան համար, ոմն:
- 300,000 ռիալ. Վանիկ Մարգարեան, Վանիկ Մարկոսեան՝ Սեդրակ Մարկոսեանի յիշատակին:
- 200,000 ռիալ. Նորիկ Յարութիւնեան:
- 100,000-ական ռիալ. Սանդրա Խաչատրեան, Էմա Պօղոսեան, Թալին Ստեփանեան, Վայլեթ Հայրապետեան՝ Ովսաննա Հայրապետեանի յիշատակին:
- 60,000 ռիալ. Մարիամ Ծատուրեան:

***Հանգուցեալ Սեդրակ Մարկոսեանի յիշատակին.***

- 3,000,000 ռիալ. Լեռնիկ եւ Կարէն Թահմազեաններ:
- 300,000 ռիալ. Հայդուկ Մարգարեան:

***Հանգուցեալ Գրիգոր Յակոբեանի յիշատակին***

- 450,000 ռիալ. Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մարզական Միաւորի Վարչութիւն:
- 200,000 ռիալ. Արսինէ Մարգարեան:
- 150,000-ական ռիալ. Ռազմիկ Խուդավերդեան, Մինաս Թահմազեան:
- 100,000-ական ռիալ. Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ, Արդալ Յովսէփեան, Սերոժ Յովհաննիսեան, Յովհաննէս Խուդավերդեան, Խաչիկ Խուդավերդեան:
- 70,000 ռիալ. Ղազար եւ Արաքս Թահմազեաններ:
- 30,000 ռիալ. Մասիս Յովսէփեան:

***Հանգուցեալ Մաղկուշ Պօղոսեանի յիշատակին***

- 200,000 ռիալ. Կարօ Յովսէփեան:
- 100,000-ական ռիալ. Զալվարդ Ամրանեան, Լուսիկ Յարութիւնեան:
- 50,000 ռիալ. Անուշ Մինասքանեան:

***Հանգուցեալ Բարսեղ Բաղդասարեանի յիշատակին***

- 150,000-ական ռիալ. Ռազմիկ Խուդավերդեան, Հայդուկ Մարգարեան:
- 100,000-ական ռիալ. Ծաղկուշ Աբելեան, Քարմէն Արթունեան:

***Հանգուցեալ Շիրակ Մինասեանի յիշատակին***

- 1,000,000 ռիալ. Մինասեան ընտանիք:
- 300,000-ական ռիալ. Ն.Զ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւն, Իսայեան ընտանիք:
- 200,000 ռիալ. Հռիփսիկ Համբարչեան:
- 100,000-ական ռիալ. Կանանց Հոգեւոր Լսարան եւ «Շուշանիկ» երգչախումբ, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Վահիկ Աստուրեան, Լուսիկ Յարութիւնեան, Սալբիկ Ղուկասեան, Եղսօ Ծահբազեան, Մասիս եւ Լուիզ Յովհաննիսեաններ, Արին Աբնուսեան, Աննա Քեշիշեան, Լուսիկ Միրզախանեան, Լորեթա Գէորգեան, Ռազմիկ Գալստանեան:
- 50,000-ական ռիալ. Յարութ Բաղդասարեան, Ռոզի Ադամեան, Հայկանուշ Հայրապետեան:

***Հանգուցեալ Մեսրոպ Բալայեանի յիշատակին***

- 500,000 ռիալ. Դիանա Ղազարեան-Խաչիկեան:

***Հանգուցեալ Յայրօ Համբարձումեանի յիշատակին***

- 500,000 ռիալ. Ահմադ Ծոքռանէ (Դենմարկից):
- 300,000 ռիալ. Ն.Զ. Հյց. Առաքելական Եկղց. Վարչութիւն:
- 200,000 ռիալ. Զաւէն Սիմոնեան:
- 160,000 ռիալ. Աննա Քեշիշեան:
- 100,000-ական ռիալ. Սիլվարդ Թորոսեան, Սաքօ Հայրապետեան, Համլեթ Մինասեան, Մելքոն Ծիրաւնեան, Լիդա Ծահբազեան, Նազիկ Խուդավերդեան:
- 50,000 ռիալ. Գարեգին Մարկոսեան:

***Հանգուցեալ Խաչատուր Մինասեանի յիշատակին***

- 1,000,000 ռիալ. Վարուժ Մինասեան:
- 500,000 ռիալ. Մասիս Խաչիկեան, Երւանդ Մինասեան:
- 350,000 ռիալ. Ս. Ստեփանոս եկեղեցու յանձնախումբ:
- 300,000 ռիալ. Ն.Զ. Հյց. Առաքելական Եկղց. Վարչութիւն:
- 200,000 ռիալ. Սնկերտ Գիւղի եկեղեցու վարչութիւն:
- 150,000 ռիալ. Արեւհատ Զարգարեան:
- 100,000 ռիալ. «Շուշանիկ» երգչախումբ եւ Կանանց Հոգեւոր Լսարան, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Զանի Ղազարեան, Արուսեակ Աղաջանեան, Գալստան եւ Սեդա Փանոսեաններ, Արդալ Յովսէփեան, Ռաբերթ Ակոն, Հայկազ Պետրոսեան, Գառնիկ Արթունեան, Սոնիկ Զոհրաբեան, Էմմա Զոհրաբեան, Երւանդ Պօղոսեան
- 50,000 ռիալ. Մարգարիտ Զարգարեան:

***Հանգուցեալ Սիրանուշ Մինասքանեանի յիշատակին***

- 100,000 ռիալ. Մելքոն Ծիրաւնեան:
- 80,000 ռիալ. Լուսվարդ Առաքելեան:

**Ն. Զ. Հայոց Գերեզմանատան Բարեկարդման Յանձնախումբ**

- 2,000,000 ռիալ. Հրայր Ղուկասեան:
- 600,000 ռիալ. Սաքօ Յակոբեան:
- 500,000-ական ռիալ. Տէր Մկրտչեան ընտանիք՝ Նուարդ Իսաղուլեանի յիշատակին, Ամիրխան Ղազարեան, Վարդան Ալեքսանդրեան, Սէթ-Աղայեան ընտանիք՝ Հերոս եւ Վազգէն Սէթ-Աղայեանների յիշատակին, Վազգէն Խաչիկեան, Փաթրիկ Սահակեան, Սուրէն Մինասեան:
- 300,000-ական ռիալ. Վազրիկ Վարդանեան, Վահիկ Թահմազեան՝ Արմենուհի Բաղդասարեանի յիշատակին:
- 200,000-ական ռիալ. Տ. Վաղինակ աւ. քհնյ. Ծահիջանեան, Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Վրէժ Մինասեան, Վարուժ Վարդանեան, Ծաղկուշ Մկրտչեան՝ Սուրէն եւ Աւօ Մկրտչեանների յիշատակին, Վարուժ Ղարախանեան, Պետիկ Բաղումեան, Արթին Մուրադեան, Վազրիկ Յակոբեան:

- 150,000 ռիալ. Ալվարդ Զարգարեան:
- 100,000-ական ռիալ. Անիթա Ալեքսանդրեան, Զաւէն Ղարիբեան, Ռազմիկ Խաթուն-Նեժադ, Փիւնիկ եւ Էմմանուէլ Ասատրեաններ, Անեթ Աղաբադալեան, Քեւին Մինաս Խաչիկեան, Զանի Ղազարեան, Ռազմիկ Գալստանեան, Գարեգին Մարկոսեան, ոմն:

**Ն. Ջ. Հայ Կանայց Գթութեան Միութիւն**
**Հայոց Ազգային Ծերանոց**

- 300,000-ական ռիալ. Վիկուշ Գորգինեան:
- 150,000 ռիալ. Սիամաք Սոլէյմանզադեհ:
- Սննդամթերք. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Երէցների Միաւոր, Ն.Ջ. Հայոց Ազգ. «Քանանեան» դպրոց, Ն. Ջ. Հայոց Ազգ. «Կատարինեան» դպրոց, «Շուշան» երգչախումբ, Մարօ Ղարիբեան, Պերճիկ Խոդավերդեան, Անահիտ Կիրակոսեան, Հրայր Դանիէլեան, Ժանետ Իւնիկեան, Էլիզ Մարտիրոսեան, Սոնիա Թումաթարեան, Վերժիկ Գորգինեան, Ֆրիդա Ալլավերդեան, Ժանեթ Պօղոսեան, Վերժիկ Թորոսեան, Սոնա Թումաթարեան, Վարդուշ Ղազարեան, Ֆերեշթեհ Խոդա-եառ:

**Ն.Ջ. Հայոց Ազգային «Կատարինեան» Դպրոց**

- 1,000,000-ական ռիալ. Գարեգին Մարկոսեան, Արին Նազարեան:

**Ն.Ջ. Հայոց Ազգային «Արմէն» Համալիր**

- 3,000,000 ռիալ. Ռուբէն Մկրտչեան:
- 1,000,000 ռիալ. Անահիտ Քամարզարեան:
- 500,000-ական ռիալ. Իզաբել Ժարդն-Դաւուդ, Էդուին:
- 200,000 ռիալ. Մարգարիտ Դաւթեան՝ իր հօր՝ Ժորժիկ Դաւթեանի յիշատակին:

**Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն**

- 1 հատ կատեր՝ Սելին Ղարիբեան:

***Սկաուտական Միաւորի երդման արարողութեան առթիւ***

- 500,000-ական ռիալ. Հայ Դատի Ն.Ջ. Յանձնախումբ, Արթին Վարդանեան, Արփիար Դաւթեան, Լիանա եւ Էրիկ Ղազարեաններ, Զարեհ Ղարախանեան, Ռիմա Սիմոնեան, Նարեկ Մարկոսեան, Դիմիթրի Յովհաննիսեան, Զանոն Աղաբաբայեան, Սերինէ Թահմազեան, Լուսինէ Սէթ-Աղայեան, Անի եւ Արփի Ղազարեաններ:
- 400,000 ռիալ. «Թադէոս Թադէոսեան» Պատանեկան Միութիւն, Լեռնիկ Այլազեան, Անի եւ Վանէ Ղազարեաններ:
- 300,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Վանիա Պետրոսեան, Հուրիկ Թահմազեան, Արնէ եւ Մանիֆա Մանուրեաններ, Սիփան Անդրիասեան, Անիա Անդրիասեան, Վարսենիկ Օրօջեան, Սիլւա եւ Յովիկ Աղախանեաններ, Նարինէ, Մեղեդի եւ Լիլիան Քեշիշեաններ, Վանէ Յովսէփեան, Դերենիկ Թորոսեան, Մարգարիտ Դաւթեան:
- 250,000-ական ռիալ. Արգին եւ Շիրակ Օրօջեաններ:
- 200,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի Մասնաճիւղի Վարչութիւն, Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Հայ Ուս. Չհարմահալ Միութեան Ն.Ջ. Մասնաճիւղ, «Քանանեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական Խորհուրդ, «Կատարինեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական Խորհուրդ, Հարմա Կարապետեան, Ռայեա Խուդավերդեան, Մասիս Մինասեան, Սարհատ Դիլանչեան, Լէօ Շահիջանեան, Մորենա եւ Մելանի Դաւթեաններ, Մանիա Բեգիջանեան, Մասիս Սիրջանեան, Ժանօ Շահիջանեան, Էմինէ Կիրակոսեան, Նարեգա Սիմոնեան, Լիլիթ եւ Արսինէ Հայրապետեաններ, Լորեթա Ասատրեան, Սեպուհ Վարդանեան, Արամէ եւ Արփինէ Մովսիսեաններ, Ռուբէն եւ Հայկ Խոսրովեաններ, Արայիկ Սիմոնեան, Գեղարդ Մանուրեան, Վեհանուշ Խուդաբախշեան, Թադէ Ղարիբեան, Վարազ եւ Մեղրի Փանոսեաններ, Տաթեւիկ եւ Յասմիկ Տէր Մարտիրոսեաններ, Նարեկ Փանոսեան:
- 150,000-ական ռիալ. Լիլիթ եւ Լուսին Յովսէփեաններ, Նարէ եւ Վահէ Յակոբեաններ, Արութին Առաքելեան, Վանէ Յարութիւնեան, Հանրի Հաթամեան, Աւենիա Տէր Մինասեան, Թէոդիկ Յովհաննիսեան, Շիրակ Հախնազարեան:
- 100,000-ական ռիալ. Քրիստինէ եւ Դերիկ Յակոբեաններ, Մելինէ եւ Էմիլի Հայրապետեաններ, Սոնիկ Կիրակոսեան, Նայիրի Հախնազարեան, Նարեկ Հախնազարեան, Արփա Վարդանեան, Արութին Հախնազարեան, Վանէ Թահմազեան, Շանթ Թահմազեան, Վահէ Թահմազեան, Բիւրա Մինասեան, Արւին Մինասքանեան, Սերլի Ղարախանեան, Արինէ Նազարեան:
- 50,000-ական ռիալ. Արգամ Նազարեան, Արգիշտի Նազարեան, Արգին Ուղուրեան, Զեփիւռ Շահիջանեան, Արամէ Շահիջանեան, Լունա Գորգի, Վաչէ Քեշիշեան, Թադէ Սարգըսեան, Արիս Մուրադեան, Ադենա Մուրադեան:

***«Կռունկ» պարախմբի տարեկան ելոյթի առթիւ***

- 3,400,000-ական ռիալ. Պարի դասարանի ա. խումբ:
- 1,500,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն:
- 1,000,000-ական ռիալ. Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդ, Անիա Թորոսեան, Անիա Յովհաննիսեան, Լուսիա Մատթէոսեան, Անիշա Խաչեան, Վանէ Շահիջանեան, Սօսէ Մինասեան, Անի Ասատրեան, Սարինէ եւ Սելինէ Խուդաբախշեաններ, Նարէ Ասատրեան, Մարալ Յարութիւնեան, Սելին Մկրտչեան, Լիլիթ Գէորգեան:
- 500,000-ական ռիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Էրիքա Գէորգեան, Տաթեւիկ Տ. Մարտիրոսեան, Սիւնէ Շահիջանեան, Արտեմիս Խաչեան, Թերեզ Յակոբեան:
- 400,000-ական ռիալ. Հայ Ուս. Չհարմահալ Միութեան Ն. Ջ. Մասնաճիւղ, Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Հայ Դատի Ն.Ջ. Յանձնախումբ:
- 300,000-ական ռիալ. Կարին Տ. Մարտիրոսեան:
- 100,000-ական ռիալ. Վիգէն Մովսիսեան:

***25-րդ Գարնանային Խաղերի բացման ծրագրի առթիւ***

- 5,000,000 ռիալ. Փաւէլ Օսիփոֆ:
- 2,000,000-ական ռիալ. Էդիկ Ղազարեան, Մելքոն Կարապետեան, Դիանա Ղազարեան:
- 1,000,000-ական ռիալ. Գառնիկ Բաղդասարեան, Վարուժ Ղարախանեան, դկտ. Արմոնդ Բաղրամեան, Ռուբիկ Մկըրտչեան, Առիւծ Խաչատրեան, Թալին Խաչատրեան:
- 600,000-ական ռիալ. Սելին Ղարիբեան:
- 500,000-ական ռիալ. Հայ Դատի Յանձնախումբ, Հայ Ուս. Չհարմահալ Միութեան Ն.Ջ. Մասնաճիւղ, Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն, Սեդա Բարղեան, Նապիկ Մելիքեան, Ռուբինա Դիլանչեան, Հրանդ Խուդաբախշեան, Վահիկ Թորոսեան, Նարբէյ Քոչարեան, Հայկազ Դաւթեան, Ռուբէն Խաչիկ-Գրիգորի, Վազրիկ Թահմազեան, Արա Ներսիսեան, Արարատ Շահիջանեան, Երւանդ Թորոսեան, Սերժիկ Ասատրեան,Վահիկ Այլազեան, Արիս Թահմազեան, Անդրէ Յովհաննիսեան, Վրէժ Յովսէփեան, Արմէն Ղարախանեան, Վանօ Վարդանեան, Սիմոն Պօղոսեան, Սեւակ Խաչատրեան, Սուրէն Սէթ-Աղայեան, Մերի Մելիքեան, Արա Սիմոնեան, Հայդուկ Կարապետեան, Ռիթա Մելիքեան, Արտեմիս Խաչատրեան, Ժասմէն Յակոբեան, Ժիրայր Խոսրովեան, Զեփիւռ Վարդեւանեան, Սալիկ Մարտիրոսեան, Վարդուշ Յովսէփեան:
- 400,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Զարեհ Յովսէփեան:
- 300,000-ական ռիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Հայկուշ Խաչիկեան, Հենրիկ Մելիքեան, Արբի Բաբումեան, Ժենիկ մինասեան, Սերոժ Խանլարեան, Սքառլեթ Հայրապետեան, Սարօ Ալումեան, Յովիկ Դիլանչեան, Մագի Խաչատրեան, Զարեհ Ասատրեան, Անգինէ Խաչատրեան, Րաֆֆի Ալեքսանդրեան, Դիմիթրի Յովհաննիսեան, Ժանեթ Ղուկասեան:
- 250,000-ական ռիալ. Հայդուկ Վարդեւանեան, Սաքօ Տէր Յովհաննիսեան, Հիմենզ Դաւթեան:
- 200,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայոց Ազգայի «Արմէն» Կրթահամալիրի տեսչութիւն եւ ուսուցչական կազմ, Անդրէ Դաւթեան, Այլին Յովսէփեան, Սերոժ Շահիջանեան, Արմոնդ Ալեքսանդրեան, Սերժիկ Ասատրեան, Կարօ Կարապետեան, Սեւադա Խաչիկեան, Տարօն Բաղումեան, Գէորգ Յովսէփեան, Աննիկ Սիմոնեան, Մելքոմ Մարտիրոսեան, Շահէն Թահմազեան, Էդւարդ

Ղազարեան, Վարուժ Նաւասարդեան, Վաչիկ Խուդաբախշեան, Ռազմիկ Ալեքսանդրեան, Անգինէ Ղազարեան, Լիդուշ Թէյմուրեան, Վաչէ Ծաճիջանեան, Ռոլանդ Ղարախանեան, Հայկուշ Մարկոսեան, Յովիկ Աղախանեան, Աւուկ Խուդաբախշեան, Պօղոս Ղարիբեան, Յարօ Կիրակոսեան, Ռոլանդ Ասատրեան, Գեւիկ Խաչատրեան, Թերեզ Յակոբեան, Սուրիկ Մինասեան:

- 150,000-ական ռիալ. Ռիմա Պետրոսեան, Կարէն Աւետեան, Լուսինէ Ասատրեան, Նոռա Ծաճիջանեան:

- 100,000-ական ռիալ. «Կատարինեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական Խորհուրդ, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի Մասնաճիւղի Մշակութային Միաւոր, Հայրիկ Խաչատրեան, Էրիքա Գէորգեան, Ռուբէն Ջանի, Արութին Թահմազեան, Բարդուղ Պօղոսեան, Արմինէ Սիմոնեան, Կարինէ Դաւթեան, Այիդա Մուրադեան, Անուշ Օհանեան, Մինուշ Մարգարեան, Սեւակ Բաղրամեան, Ալիս Մկրտչեան, Մարտիկ Տ. Յոհվաննիսեան, Թալին Մովսիսեան:

***Կազմակերպուած նուիրահաւաքի առթիւ***

- 20,000,000-ական ռիալ. Թաթուլ Օհանեան եւ զաւակներ, Վարուժ եւ Վրէժ Մինասեաններ:

- 12,000,000 ռիալ. Հայրիկ Խաչատրեան:

- 10,000,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Հրայր Ղուկասեան, Սերժիկ Բաղրամեան, Օշին Սահակեան:

- 7,000,000-ական ռիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Գասպար Ղարիբեան

- 6,000,000-ական ռիալ. Մերի Մելիքեան:

- 5,000,000-ական ռիալ. Հայ Ուս. Չհարմահալ Միութիւն, Անդրէ Յովհաննիսեան, Արման եւ Աուլեն Կրետ, Արմոնդ Կիրակոսեան, Մինաս Գէորգեան, Սաքօ Սիմոնեան, Սուրէն Սէթ-Աղայեան, Ցոլակ Յարութիւնեան:

- 4,000,000-ական ռիալ. Արմէն Ղարախանեան, Գարեգին Մարկոսեան, Կարօ Ծատրեան, Հայկազ Դաւթեան, Ռազմիկ Նազարեան, Վարուժ Ղարախանեան:

- 3,500,000-ական ռիալ. Ռուբէն Խաչիկ-Գրիգորի:

- 3,000,000-ական ռիալ. դկտ. Արմոնդ Բաղրամեան, Յարօ Կիրակոսեան, Ռոբերտ Պետրոսեան, Սարօ Պօղոսեան, Վաչէ Բարսեղեան, Վրէժ Տէր Մարտիրոսեան:

- 2,500,000-ական ռիալ. Դիանա Ղազարեան, Երւանդ Թորոսեան, Վազրիկ Մարկոսեան:

- 2,000,000-ական ռիալ. Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհուրդ, Անդրէ Դաւթեան, Անդրէ Ք. Օհանեան, Արա Սիմոնեան, Արարատ Մելիքեան, Աւուկ Խուդաբախշեան, Արարատ Օրօջեան, Ալէն Բարսեղեան, Արգին Բարսեղեան, Գեւիկ Խաչատրեան, Եղիշ Վարդումեան, Թաթուլ Պօղոսեան, Ժիրայր Խոսրովեան, Լեւոն Ղազարեան, Հայդուկ Մովսիսեան, Հայդուկ Վարդեւանեան, Յայրօ Քեշիշեան, Հիմենգ Դաւթեան, Մելքոն Ղարիբեան, Մինաս Թահմազեան, Մինաս Պօղոսեան, Խէչօ Խուդավերդեան, Յովիկ Դիլանչեան, Յակոբ Մարկոսեան, Նապիկ Մելիքեան, Նժդիկ Թորոսեան, Նոէլ Աբգարեան, Նորիկ Ծահվալադեան, Պօղոս Ղարիբեան, Ջանի Պօղոսեան, Րաֆֆի Ալեքսանդրեան, Ռուբիկ Մկրտչեան, Ռազմիկ Ալեքսանդրեան, Սարօ Ալումեան, Սերոժ Ծաճիջանեան, Սեւակ Բաղրամեան, Սեւակ Խաչատրեան, Սիմոն Պօղոսեան, Սուրիկ Մինասեան, Սարօ Այազեան, Սուրիկ Մինասքանեան, Վազրիկ Թահմազեան, Վահիկ Մկրտչեան, Վաղօ Տէր Սուքիասեան, Վանօ Վարդանեան, Վարուժ Իսաղուլեան, Վրէժ Յովսէփեան, Վարուժ Նաւասարդեան:

- 1,500,000-ական ռիալ. Արա Ներսիսեան, Հրաչ Տէր Յովհաննիսեան, Մասիս Օրօջեան, Վարդուհի Յովսէփեան:

- 1,000,000-ական ռիալ. Առիծ Խաչատրեան, Արիս Թահմազեան, Աւօ Բաշիկեան, Արմոնդ Հախնազարեան, Ջարեհ Ասատրեան, Ջարեհ Յովսէփեան, Էդւարդ Ղազարեան, Ժուլիեթ Դաւթեան, Լորիկ Բաղդասարեան, Կարինէ Զարգարեան, Հայրապետ Ստեփանեան, Հրայր Ղարիբեան, Հրանդ Փաթաթանեան, Հայկուշ Խաչիկեան, Միքայէլ Ջոհրաբեան, Մագի Խաչատրեան, Նորիկ Պօղոսեան, Նարբէյ Քոչարեան, Նարբէյ Ջարդն-Դաւուդ, Րաֆֆի Վարդումեան, Ռիմա Օհանեան, Ռոլանդ Ասատրեան, Ռոբերտ Մկրտչեան, Սարօ Տէր Սուքիասեան, Վիգէն Մովսիսեան, Վազրիկ Ծմաւոնեան, Վարդուշ Յովսէփեան:

- 500,000-ական ռիալ. Դուրան Տէր Յովհաննիսեան:

***Երէցների Միաւոր***

- 1,000,000-ական ռիալ. Ջեփիւռ Մարտիրոսեան:

- 500,000-ական ռիալ. Երան Խուդավերդեան, Արմինէ Թորոսեան, Քնարիկ Աբգարեան:

**Շահինշահրի Հայ Կանանց եկեղեցասիրաց Միութիւն**

***Մայրերի Տօնի առթիւ***

- 1,000,000 ռիալ. Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւն:

- 200,000 ռիալ. Մերի Գալստանեան:

- 100,000-ական ռիալ. Ռիթա Մկրտչեան, Հայկուշ Յակոբեան, Վերժիկ Նազարեան, Սաթօ Պօղոսեան, Էլմա Անդրիասեան, Անիթա Խաչատրեան, Ռազմիկ Գալստանեան:

**«Հայ Մօր Տարւայ» Շահինշահրի Յանձնախումբ**

- 250,000 ռիալ. Սեդրակ Դեհբաշեան:

- 200,000-ական ռիալ. Եղիա Թորոսեան, Վազրիկ Ծմաւոնեան, Յայրօ եւ Անահիտ Նովան, Էմմա Օրդուբեգեան, Վիոլեթ Յարութիւնեան, Ռոզիկ Թորոսեան, Մրմոնդ Բարֆեան:

- 100,000-ական ռիալ. Սքաուլեթ Աղախանեան, Հրաչ Ղարախանեան, Մառինա Մանասէրեան, Ռուդիկ Բաբումեան, Ծովիկ Եղիկեան, Էդւին Հախնազարեան, Ռաֆիկ Նազարեան, Նոէլ Յովհաննէսեան, Նոյեմ Բարֆեան, Ծաղկուշ Մինասքանեան, Զւարդ Մինասքանեան:

- 60,000 ռիալ. Վարդուշ Հախնազարեան:

- 50,000 ռիալ. Սաթօ Մինասքանեան:

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչւող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Այլին Քեշիշեանը:*

**ՄԵՐ ՀԱՍՑԷՆ**

خلیفه‌گری ارامنه جلفای اصفهان
و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com

**Tel: +98–311–6243471-2**
**Fax: +98–311–6270999**




ԿՈՉ ԵՆՔ ՈՒՂՂՈՒՄ ԹՈՒՐՔԻՈՅ
ՊԵՏՈՒԹԵԱՆԸ ԵՒ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆՔ.-

1) ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՃԱՆԱՉՈՒՄ.

2) ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՒ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ
ԲՌՆԱԳՐԱՒՒԱԾ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ.

3) ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ,
ՎԱՆՔԵՐԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ
ԿԱԼՒԱԾՆԵՐԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՈՒ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔ
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԻՐԵՐԻ ԱՆՅԱՊԱՂ
ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ,
ՈՐՊԷՍ ՆՐԱՆՑ ԻՐԱՒԱՏԷՐԸ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՐԱՄ Ա